


EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

**Ընդունելիության չափանիշների
վերաբերյալ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**



COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Սույն զեկույցը տպագիր կամ առցանց վերարտադրելու (կամ թարգմանելու) ցանկություն ունեցող հրատարակողներին կամ կազմակերպություններին խնդրվում է դիմել publishing@echr.coe.int էլեկտրոնային հասցեով՝ հետագա ցուցումների համար:

© Եվրոպայի Խորհուրդ/Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան, 2011 թվական

Ուղեցույցը կարող է ներբեռնվել www.echr.coe.int կայքից (Case-law – Case-law analysis – Admissibility guide):

Սույն ուղեցույցը պատրաստվել է հետազոտական բաժնի կողմից: Դատարանի համար այն պարտադիր ուժ չունի: Տեքստը վերջնական է դարձել 2009 թվականի դեկտեմբերին և լրամշակվել է 2011 թվականի մարտի 31-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 7

Ա. Անհատական գանգատ 9

- 1. Դրույթի նպատակը 9
- 2. Գանգատի կարգավիճակը..... 9
- 3. Գանգատ ներկայացնելու իրավունքի իրականացման ազատությունը. 11
- 4. Պատասխանող Պետության պարտականությունները 13
 - (ա) Դատարանի Կանոնագրքի 39-րդ Կանոնը 13
 - (բ) Փաստերի հաստատումը 13
 - (գ) Հետաքննություններ 14

Բ. Տուժողի կարգավիճակը..... 14

- 1. «Տուժող» հասկացությունը 15
- 2. Ուղղակի տուժող 15
- 3. Անուղղակի տուժող..... 16
- 4. Տուժողի մահը..... 16
- 5. Տուժողի կարգավիճակի կորուստը..... 17

I. ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ 19

Ա. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառումը 19

- 1. Կանոնի նպատակը..... 20
- 2. Կանոնի կիրառելիությունը..... 20
 - (ա) Ճկունությունը..... 20
 - (բ) Ներպետական կանոններին և սահմանափակումներին համապատասխանությունը 21
 - (գ) Ներպետական իրավական պաշտպանության մի քանի միջոցների առկայությունը 21
 - (դ) Ըստ էության բարձրացված բողոք 22
 - (ե) Միջոցների առկայությունը և պատշաճությունը..... 22
 - (զ) Առկայություն և արդյունավետություն 23
- 3. Կանոնի կիրառման սահմանափակումները..... 24
- 4. Այացուցման բեռի բաշխումը 24
- 5. Ընթացակարգային ասպեկտներ 26
- 6. Նոր միջոցների ստեղծումը..... 27

Բ. Վեցամսյա ժամկետի չպահպանումը 29

- 1. Կանոնի նպատակը 29
- 2. Վեցամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը..... 29
 - ա) Վերջնական որոշում 29
 - (բ) Մեկնարկային կետը 30
 - (գ) Որոշման ծանուցումը..... 30
 - (դ) Որոշումը չծանուցելը 31
 - (ե) Միջոցների բացակայությունը 31
 - (զ) Վեցամսյա ժամկետի հաշվարկումը..... 31
 - (է) Շարունակական իրավիճակ 32

3. <i>Գանգատի ներկայացման ժամկետը</i>	32
(ա) Առաջին նամակը.....	32
(բ) Նամակը գրելու և փոստային ծառայության միջոցով առաքելու ժամկետների տարբերությունը.....	32
(գ) Ֆաքսով ուղարկելը.....	33
(դ) Առաջին հաղորդակցությունից հետո տրված ժամկետը.....	33
(ե) Գանգատի բովանդակությունը.....	33
(զ) Հետագա բողոքներ.....	33
4. <i>Օրինակներ</i>	34
(ա) Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում ընթացակարգային պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետները.....	34
(բ) Վեցամսյա կանոնի կիրառման պայմանները Կոնվենցիայի 5 § 3 հոդվածի ներքո բազմակի անգամ կալանքի տակ դիմումատուին պահելու դեպքում.....	34
Գ. Անանուն գանգատ	34
1. <i>Անանուն գանգատ</i>	34
2. <i>Ոչ անանուն գանգատ</i>	35
Դ. Կրկնակի գանգատ	35
1. <i>Միննույն դիմումատուները</i>	36
2. <i>Նույնատիպ գանգատներ</i>	36
3. <i>Նույնատիպ փաստեր</i>	37
Ե. Այլ միջազգային մարմին ներկայացրած գանգատ	37
1. <i>Ընթացակարգի հասկացությունը</i>	38
(ա) Ընթացակարգը պետք է լինի հրապարակային.....	38
(բ) Ընթացակարգը պետք է լինի միջազգային.....	38
(գ) Ընթացակարգը պետք է լինի անկախ.....	38
(դ) Ընթացակարգը պետք է լինի անաչառ.....	39
2. <i>Ընթացակարգային երաշխիքներ</i>	39
(ա) Մրցակցային վարույթներ.....	39
(բ) Դատական մարմնին ներկայացվող պահանջներ.....	39
3. <i>Դատավարության դերը</i>	39
(ա) Ընթացակարգը պետք է սահմանի պարտականություններ.....	40
(բ) Ընթացակարգի նպատակը պետք է լինի խախտումների դադարեցումը.....	40
(գ) Ընթացակարգի արդյունավետությունը.....	41
Զ. Գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում	41
1. <i>Ընդհանուր սահմանում</i>	41
2. <i>Դատարանին ապակողմնորոշելը</i>	42
3. <i>Վիրավորանք</i>	42
4. <i>Բարեկամական կարգավորման ընթացակարգի գաղտնիության սկզբունքի խախտումը</i>	43
5. <i>Ակնհայտորեն անհարգալից կամ զուրկ որևէ իրական նպատակից գանգատ</i>	44
6. <i>Այլ գործեր</i>	45
7. <i>Պատասխանող պետության մոտեցումը</i>	45
II. ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ	46

Ա. Անհամատեղելիությունը` <i>ratione personae</i>	46
1. <i>Սկզբունքները</i>	46
2. <i>Իրավասությունը</i>	47
3. <i>Պատասխանատվություն և վերաբերելիություն</i>	47
4. <i>Հարցեր կապված Կոնվենցիայի Անդամ Պետությունների հնարավոր պատասխանատվությանը` միջազգային կազմակերպության անդամակցության շրջանակներում իրենց գործողությունների կամ անգործողությունների վերաբերյալ</i>	49
Բ. Անհամատեղելիությունը` <i>ratione loci</i>	52
1. <i>Սկզբունքները</i>	52
2. <i>Հատուկ գործեր</i>	53
Գ. Անհամատեղելիությունը` <i>ratione temporis</i>	54
1. <i>Ընդհանուր սկզբունքներ</i>	54
2. <i>Այս սկզբունքների կիրառումը</i>	55
(ա) <i>Կոնվենցիայի վավերացման կամ Կոնվենցիոն ինստիտուտների իրավասության ընդունման ամսաթիվը</i>	55
(բ) <i>Փաստեր, որոնք առաջացել են նախքան ուժի մեջ մտնելը կամ հայտարարություն ներկայացնելը կամ դրանից հետո</i>	55
3. <i>Հատուկ իրավիճակներ</i>	57
(ա) <i>Շարունակական խախտումներ</i>	57
(բ) <i>Մինչ վճռորոշ ամսաթիվն ի հայտ եկած անհետացումները հետաքննելու «շարունակական» ընթացակարգային պարտավորությունը</i>	58
(գ) <i>Հոդված 2-ով նախատեսված մահը հետաքննելու ընթացակարգային պարտավորությունը. դատարանի ժամանակային իրավասությունից դուրս գտնվող փաստերի առնչությամբ իրականացվող վարույթները</i>	58
(դ) <i>Նախորդող փաստերի վերլուծությունը</i>	59
(ե) <i>Շարունակական դատավարություններ կամ կալանքներ</i>	60
(զ) <i>Միալ դատապարտման համար փոխհատուցման իրավունք</i>	60
Դ. Անհամատեղելիությունը` <i>ratione materiae</i>	60
1. <i>«Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ» հասկացությունը</i>	62
(ա) <i>Հոդված 6 § 1 կիրառելիության ընդհանուր պահանջները</i>	62
(բ) <i>«Վեճ» հասկացությունը</i>	62
(գ) <i>Ներպետական օրենքում վիճարկելի իրավունքի առկայությունը</i>	64
(դ) <i>Իրավունքի «քաղաքացիական» բնույթը</i>	66
(ե) <i>Իրավունքի մասնավոր բնույթը` նյութական մասը</i>	66
(զ) <i>Այլ վեճերի նկատմամբ կիրառումը</i>	67
(է) <i>Հոդվածի շրջանակներից դուրս հարցեր</i>	69
(ը) <i>Հոդված 6-ի կիրառելիությունը նախնական և այլ ոչ հիմնական դատավարությունների նկատմամբ</i>	70
2. <i>«Քրեական մեղադրանք» հասկացությունը</i>	72
(ա) <i>Ընդհանուր սկզբունքներ</i>	72
(բ) <i>Ընդհանուր սկզբունքների կիրառումը</i>	74
<i>Կարգապահական դատավարություններ</i>	74
<i>Վարչական, հարկային, մաքսային և հակամենաշնորհային իրավունքի դատավարություններ</i>	75
<i>Քաղաքական հարցեր</i>	76
<i>Վտարում և հանձնում</i>	77
<i>Քրեական դատավարության տարբեր փուլերը, օժանդակ վարույթները և դատական պաշտպանության միջոցները</i>	77

(զ) Կոնվենցիայի այլ հոդվածների և Արձանագրությունների միջև կապը.....	80
3. «Անձնական կյանք» և «ընտանեկան կյանք» հասկացությունները.....	80
(ա) Հոդված 8-ի շրջանակը	81
(բ) «Անձնական կյանք»-ի ոլորտը.....	81
(գ) «Ընտանեկան կյանք»-ի ոլորտը	84
Օնոդ դառնալու իրավունք	85
Երեխաների վերաբերյալ	85
Զույգերի վերաբերյալ	86
Այլ հարաբերությունների վերաբերյալ	87
Նյութական շահեր	87
4. «Բնակարան» և «նամակագրություն» գաղափարները	88
(ա) Հոդված 8-ի շրջանակը	88
(դ) «Նամակագրություն» հասկացության շրջանակը	90
5. «Գույք» հասկացությունը	91
(ա) Պաշտպանված գույք.....	91
(բ) Ինքնուրույն իմաստ	92
(գ) Առկա գույք	92
(դ) Հայցերը և պարտքերը	92
(ե) Սեփականության վերականգնում	93
(զ) Ապագա եկամուտ	94
(է) Մասնագիտական հաճախորդներ	94
(ը) Բիզնես լիզենզավորումներ	94
(թ) Գնաձ	95
(ժ) Մտավոր սեփականություն.....	95
(ի) Ընկերության բաժնեմասերը	95
(լ) Սոցիալական ապահովության նպաստները.....	95

III. ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆՎԱԾ ԳԱՆԳԱՏԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՎՐԱ..... 96

Ա. Ակնհայտորեն անհիմն..... 96

1. Ընդհանուր ներածություն	96
2. «Չորրորդ ատյան»	97
3. Իսախտման պարզ և ակնհայտ բացակայություն	99
(ա) Անարդարության կամ կողմնակալության բացակայություն.....	100
(բ) Միջոցի և նպատակի միջև անհամաչափության բացակայությունը	100
(գ) Այլ համեմատական ուղղակի և էական հարցեր.....	102
4. Անհիմն գանգատներ. ապացույցների պակաս.....	103
5. Շփոթեցնող կամ անիմաստ գանգատներ.....	104

Բ. Ոչ էական կորուստ..... 104

1. Նոր չափանիշի նախադրյալը.....	104
2. Շրջանակը.....	105
3. Արդյոք դիմումատուն կրել է զգալի կորուստ.....	105
4. Պաշտպանության երկու երաշխիք.....	107
(ա) Արդյո՞ք մարդու իրավունքները հարգելու սկզբունքը պահանջում է գործի ըստ էության քննություն	107
(բ) Արդյո՞ք գործը պատշաճ կերպով քննվել է ներպետական դատարանում	108

ՎՃԻՌՆԵՐԻ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ..... 109

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայով (այսուհետ՝ «Կոնվենցիա») երաշխավորված հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը հիմնված է սուբսիդիարության սկզբունքի վրա: Կոնվենցիայի Անդամ Պետությունների հիմնական խնդիրն է ապահովել Կոնվենցիայի կիրառումը: Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը (այսուհետ՝ «Դատարան») միջամտում է միայն այն դեպքում, երբ Պետությունները թերանում են իրենց պարտականությունների կատարման մեջ:

Ստրասբուրգի կողմից վերահսկողությունը հիմնականում իրականացվում է անհատական գանգատների նկատմամբ, որոնք կարող են ներկայացվել Դատարանին Կոնվենցիայի Անդամ Պետությունների իրավասության ներքո գտնվող ցանկացած անհատի կամ իրավաբանական անձի կողմից: Այդ է պատճառը, որ գանգատ ներկայացնող պոտենցիալ դիմումատուների շրջանակը լայն է: Մեծ Եվրոպայի ութ հարյուր միլիոն բնակիչներին և այդ տարածքում բնակվող կամ ժամանակավոր գտնվող Եվրոպայի քաղաքացի չհանդիսացող անձանց թվին պետք է ավելացնել նաև միլիոնավոր ասոցիացիաներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ, ընկերություններ և այլ կազմակերպություններ (չնշելով այն անձանց, ովքեր հայտնվել են Կոնվենցիայի Անդամ Պետությունների իրավասության ներքո՝ վերջիններիս կողմից իրենց տարածքներից դուրս իրականացված գործողությունների արդյունքում):

Տարիների ընթացքում, բազմաթիվ գործոնների առկայության պայմաններում, Դատարանը ծանրաբեռնվել է անհատական գանգատներով (2011 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ ավելի քան 149,000 գանգատ գտնվում է Դատարանի վարույթում): Այս գանգատների ճնշող մեծամասնությունը (ավելի քան 95%), այնուամենայնիվ, մերժվում է մինչ գանգատի ըստ էության քննության իրականացումը՝ Կոնվենցիայով սահմանված ընդունելիության չափանիշներից որևէ մեկի չբավարարման հիմքով: Այս իրավիճակը ձեռնտու չէ, քանի որ, առաջին՝ Դատարանը, որը պարտավոր է անդրադառնալ յուրաքանչյուր գանգատի, չունի հնարավորություն ողջամիտ ժամկետում ուսումնասիրելու այն գործերը, որոնք ունեն ըստ էության քննության անհրաժեշտություն: Երկրորդ՝ տասը հազարավոր դիմումատուների ներկայացրած գանգատներ անխուսափելիորեն մերժվում են, հաճախ՝ երկար տարիներ անց:

2. Կոնվենցիայի Անդամ Պետությունները, ինչպես նաև Դատարանը և Քարտուղարությունը, մշտապես ձգտել են գտնել ուղիներ այս խնդիրը լուծելու և արդարադատությունն արդյունավետորեն իրականացնելու համար: Ամենատեսանելի միջոցներից մեկը Կոնվենցիային կից [Թիվ 14 Արձանագրության](#) ընդունումն էր: Այն, ի թիվս այլ պայմանների, նախատեսում է, որ հետագայում ակնհայտ անընդունելի գանգատները քննության առնվեն ոչ թե երեք դատավորի կազմով, այլ՝ մեկ դատավորի կողմից՝ ոչ դատական զեկուցողի օգնությամբ: Թիվ 14 Արձանագրությունը, որն ուժի մեջ մտավ 2010 թվականի հունիսի 1-ին, նաև ներմուծեց ընդունելիության նոր չափանիշ դիմումատուի կրած վնասի չափի վերաբերյալ, որի նպատակն էր կրճատել ոչ էական վնասի մասին գանգատները:

2010 թվականի փետրվարի 19-ին, Եվրոպայի Խորհրդի քառասունյոթ Անդամ Պետությունների ներկայացուցիչները հանդիպեցին Ինտերլակեն քաղաքում (Շվեյցարիա) քննարկելու Դատարանի ապագան և, մասնավորապես, մեծ թվով անընդունելի համարվող գանգատների պատճառով գործերի կուտակման հարցը: Միաձայն հայտարարությամբ նրանք վերահաստատեցին Եվրոպական համակարգի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում Դատարանի կենտրոնական դերը և հանձն առան բարձրացնելու դրա արդյունավետությունը՝ պահպանելով անհատական գանգատի իրավունքը:

3. Գանգատ ներկայացնելու ընթացակարգի և ընդունելիության չափանիշների վերաբերյալ պոտենցիալ դիմումատուներին ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրելու միտքը հստակորեն արտացոլված է Ինտերլակենի Հռչակագրի Գ-6 (ա) և (բ) կետերում: Անհատական գանգատների ընդունելիության պայմանների մասին սույն գործնական ուղեցույցի անհրաժեշտությունը նույնպես արտահայտվել է այդ համատեքստում: Ուղեցույցի նպատակն է ներկայացնելու ընդունելիության չափանիշների մասին առավել պարզ և մանրամասն տեղեկություն, որպեսզի, առաջինը՝ հնարավորինս կրճատվի ըստ էության քննության հեռանկար չունեցող գանգատների թիվը, և, երկրորդ՝ ըստ էության քննության ենթակա գանգատները բավարարեն ընդունելիության պահանջները: Ներկայումս, թեսթի պայմանները բավարարած բազմաթիվ գործերում ընդունելիությունը և ըստ էության քննությունն անցկացվում է միաժամանակ, ինչը պարզեցնում և արագացնում է գործընթացը:

Սույն ուղեցույցն ի սկզբանե նախատեսված է իրավաբանների համար, մասնավորապես այն փաստաբանների, ովքեր Դատարանում ներկայացնում են դիմումատուների շահերը: Մեկ այլ, սակավ տեխնիկական տերմիններով հագեցած ուսումնական ձեռնարկ, կնախապատրաստվի ավելի լայն հասարակության համար:

Կոնվենցիայի 34-րդ (անհատական գանգատներ) և 35-րդ (ընդունելիության չափանիշներ) հոդվածներում սահմանված ընդունելիության բոլոր չափանիշներն ուսումնասիրվել են Դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Բնականորեն, որոշ հասկացություններ, ինչպիսիք են վեցամսյա ժամկետի պահպանման պահանջը և իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը, ավելի հեշտորեն են բացատրվում, քան «ակնհայտորեն անհիմն» հասկացությունը, որը կարելի է անսահմանորեն վերլուծել, կամ Դատարանի *ratione materiae* կամ *ratione personae* իրավասությունը: Այնուհետև, որոշ հոդվածներ դիմումատուների կողմից վկայակոչվում են ավելի հաճախ, քան մնացածը, բացի այդ, որոշ Պետություններ դեռևս չեն վավերացրել Կոնվենցիային կից բոլոր լրացուցիչ Արձանագրությունները, իսկ որոշ Պետություններ կատարել են վերապահումներ որոշակի դրույթների վերաբերյալ: Սույն ուղեցույցի շրջանակներում չեն ներկայացվել միջպետական գանգատներին առնչվող հազվադեպ դեպքերը, քանի որ դրանց ուսումնասիրությունը պահանջում է այլ մոտեցում: Ինչ վերաբերում է ընդունելիության նոր չափանիշին, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թիվ 14 Արձանագրությունն ուժի մեջ է մտել վերջերս, դեռ շատ վաղ է այս առումով ներկայացնել Դատարանի նախադեպային

իրավունքի ճշգրիտ պատկերը: Հետևաբար, սույն ուղեցույցը չի ներկայացնում սպառիչ տեղեկատվություն. այն անդրադառնում է առավել հաճախ տեղի ունեցող իրավիճակներին:

4. Ուղեցույցը նախապատրաստվել է Դատարանի իրավախորհրդատու ծառայության կողմից և ընդունելիության չափանիշների մասին վերջինիս մեկնաբանությունը պարտավորեցնող չէ Դատարանի համար: Այն պարբերաբար կլրամշակվի: Ուղեցույցը կազմվել է ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, նախատեսվում է թարգմանությունը նաև այլ լեզուներով: Նախապատվությունը կտրվի այն երկրների պաշտոնական լեզուներին, որոնց դեմ ներկայացվել են առավել մեծ քանակությամբ գանգատներ:

5. «Անհատական գանգատ» և «տուժողի կարգավիճակ» հասկացությունները սահմանելուց հետո ուղեցույցը կանդրադառնա՝ 1) ընդունելիության ընթացակարգին, 2) Դատարանի իրավասությանը և 3) գործի ըստ էության քննությանը վերաբերող հիմքերին:

Ա. Անհատական գանգատ

Հոդված 34. Անհատական գանգատ

«Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրությունով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչնդոպել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը»:

1. Դրույթի նպատակը

6. Հոդված 34-ը, որը երաշխավորում է անհատական գանգատի իրավունքը, անձին ընձեռնում է միջազգային մակարդակում իրավական գործընթաց կատարելու իրական հնավորություն: Այն, հանդիսանալով Կոնվենցիոն համակարգի արդյունավետությունն ապահովող հիմնական երաշխիքներից մեկը, նաև մարդու իրավունքների պաշտպանության «մեխանիզմի հիմնական բաղադրիչներից» է (*Mamatkulov and Askarov v. Turkey* [ՄՊ], §§ 100 և 122; *Loizidou v. Turkey* (նախնական առարկություններ), § 70):

7. Կոնվենցիան «կենդանի գործիք» է և պետք է մեկնաբանվի արդի պայմանների լույսի ներքո: Այս առումով, Դատարանի նախադեպային իրավունքը նույնպես կիրառվում է ընթացակարգային այնպիսի դրույթներում, ինչպիսին է Հոդված 34-ը (*ibid.* § 71):

2. Գանգատի կարգավիճակը

8. Կիրառման շրջանակը. համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի, յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ներկայացնել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի պաշտպանության պահանջ այն Անդամ Պետության

դեմ, որի իրավազորության ներքո տեղի է ունեցել ենթադրյալ խախտումը (*Van der Tang v. Spain*, § 53): Տուժողը պարտավոր չէ մատնանշել, թե մասնավորապես որ հոդվածն է խախտվել (*Guzzardi v. Italy*, § 61):

9. Իրավասու անձիք.

- յուրաքանչյուր անհատ կամ իրավաբանական անձ ունի անհատական գանգատի իրավունք՝ անկախ ազգությունից, բնակության վայրից, քաղաքացիական կարգավիճակից, գործունակությունից կամ իրավունակությունից (ծնողական իրավունքից զրկված մայր, տե՛ս՝ *Scozzari and Giunta v. Italy* [ՄՊ], § 138; անչափահասներ, տե՛ս՝ *A. v. the United Kingdom*; խնամակալի համաձայնությունը չունեցող ոչ իրավունակ անձ, տե՛ս՝ *Zehentner v. Austria*, §§ 39 և այլն):
- ցանկացած ոչ պետական կազմակերպություն, լայն իմաստով, որը չունի պետական իշխանության լիազորություններ, ունի գանգատ ներկայացնելու իրավունք: Նման լիազորություններ չունեցող հանրային իրավունքի սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձանց պարագայում տե՛ս՝ *Holy Monasteries v. Greece*, § 49, և *Radio France and Others v. France* (որոշում), §§ 24-26; այն կազմակերպությունների համար, որոնք չունեն իրավական և ֆինանսական կախվածություն պետությունից, տե՛ս՝ *Islamic Republic of Iran Shipping Lines v. Turkey*, §§ 80-81, և *Unédic v. France*¹, §§ 48-59:
- Մյուս կողմից, քաղաքապետարանը (*Ayuntamiento de Mula v. Spain* (որոշում)), կամ քաղաքապետարանի բաղկացուցիչ մասը, որն ունի հանրային իշխանության լիազորություններ (*Municipal Section of Antilly v. France* (որոշում)), իրավունք չունի ներկայացնելու գանգատ՝ 34-րդ հոդվածի համաձայն (տե՛ս, նաև՝ *Döşemealti Belediyesi v. Turkey*^{*} (որոշում)):
- անհատների խմբեր. մի քանի անձանց միջև, սովորաբար ժամանակավոր, կազմված ոչ պաշտոնական դաշինքներ («*Belgian linguistic*»-ի գործը): Սակայն, տարածքային իշխանությունները կամ որևէ այլ պետական մարմին չեն կարող ներկայացնել գանգատ այդ մարմինների կազմում աշխատող կամ դրանց ներկայացնող ֆիզիկական անձանց միջոցով, քանի որ գանգատը վիճարկելու է այն պետության գործողությունները, որից նրանք գտնվում են կախվածության մեջ և որի իշխանությունն են իրականացնում (*Demirbaş and Others v. Turkey*^{*} (որոշում)):

10. Հոդված 34-ը չի թույլատրում Կոնվենցիայի խախտման վերաբերյալ ներկայացնել *in abstracto* բողոքներ: Դիմումատուները չեն կարող բողոքել ներպետական իրավունքի դրույթի դեմ միայն այն պատճառով, որ այն ըստ երևույթին հակասում է Կոնվենցիային (*Monnat v. Switzerland*, §§ 31-32), Կոնվենցիան չի նախատեսում նաև *actio popularis*-ի կիրառումը (*Klass and Others v. Germany*, § 33; *The Georgian Labour Party v. Georgia* (որոշում); և *Burden v. the United Kingdom* [ՄՊ], §33):

¹ Դատարանը իր վճիռները և որոշումները կայացնում է իր երկու պաշտոնական լեզուներով՝ անգլերեն և ֆրանսերեն: Վճիռների և որոշումների տեքստը նշվում է աստղանիշով և հասանելի է միայն ֆրանսերեն լեզվով:

11. Ներկայացուցչի միջոցով ներկայացված գանգատներ. այն դեպքերում, երբ դիմումատուները ցանկություն են հայտնում ներկայացնել իրենց շահերը ոչ թե ինքնուրույն, այլ ներկայացուցչի միջոցով, գործում է Դատարանի Կանոնագրքի 45 § 3 Կանոնը, համաձայն որի դիմումատուները պետք է ներկայացնեն պատշաճ ձևով ստորագրված, գրավոր լիազորագիր: Ներկայացուցիչներից պահանջվում է հստակորեն ցույց տալ, որ 34-րդ հոդվածի իմաստով իրենք ստացել են որոշակի և հստակ ցուցումներ ենթադրյալ տուժողի կողմից, ում անունից նրանք մտադրություն ունեն ներկայանալ Դատարանում (*Post v. the Netherlands* (որոշում)): Լիազորագրի վավերականության վերաբերյալ տե՛ս՝ *Aliev v. Georgia**, §§ 44-49: Գանգատի համապատասխանության վերաբերյալ տե՛ս՝ *Velikova v. Bulgaria*, §§ 48-52:

12. Անհատական գանգատի իրավունքի չարաշահումը. գանգատ ներկայացնող անձի քննարկվող իրավունքի նպատակին հակասող պահվածքի առնչությամբ, տե՛ս՝ անհատական գանգատի իրավունքի չարաշահման հասկացությունը Կոնվենցիայի 35 § 3 հոդվածի շրջանակներում (*Miroļubovs and Others v. Latvia**, §§ 62 և այլն):

3. Գանգատի ներկայացնելու իրավունքի իրականացման ազատությունը

13. Դատարան դիմելու իրավունքը բացարձակ իրավունք է, այն չի ենթարկվում սահմանափակումների: Նշված սկզբունքը ենթադրում է Կոնվենցիայի ինստիտուտների հետ ազատ հաղորդակցության հնարավորություն (կալանավայրում նամակագրության ազատությունը՝ *Peers v. Greece*, § 84, և *Kornakovs v. Latvia**, §§ 157): Վերջինիս հետ կապված, տե՛ս, նաև՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում վարույթներին մասնակցող անձանց վերաբերյալ 1996թ.-ի Եվրոպական Համաձայնագիրը (CETS No. 161):

14. Պետական մարմինները չպետք է որևէ ճնշում գործադրելով ստիպեն դիմումատուներին հրաժարվել կամ փոփոխել իրենց գանգատները: Ըստ Դատարանի, ճնշումը կարող է արտահայտվել դիմումատուների կամ պոտենցիալ դիմումատուների, նրանց ընտանիքների կամ օրինական ներկայացուցիչների նկատմամբ ուղղակի պարտադրանքի կամ կոպիտ գործողություններով ահաբեկելու, ինչպես նաև ոչ պատշաճ անուղղակի գործողությունների կամ կապեր հաստատելու միջոցով (*Mamatkulov and Askarov v. Turkey* [ՄՊ], § 102):

Colibaba v. Moldova (§68) գործում Դատարանը քննել է անհատական գանգատի իրավունքի իրականացման նկատմամբ տարհամոզիչ ազդեցության դեպքը:

Ուշադրության արժանի է դիմումատուի խոցելիությանը և իշխանությունների կողմից նրա վրա ճնշում գործադրելու վտանգին (*Iambor v. Romania (no. 1)**, § 212): Դիմումատուները կարող են հատկապես խոցելի դառնալ նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակ իրենց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապ չունենալու պարագայում (*Cotlet v. Romania**, § 71):

15. Որոշ ուշագրավ օրինակներ.

- գանգատի կապակցությամբ իշխանությունների կողմից հարցաքննությունը՝ *Akdivar and Others v. Turkey* [ՄՊ], § 105, և *Tanrikulu v. Turkey* [ՄՊ], § 131;
- դիմումատուի փաստաբանի դեմ քրեական վարույթ հարուցելու սպառնալիքները՝ *Kurt v. Turkey*, §§ 159-65; ներպետական վարույթներում փաստաբանի դեմ իշխանությունների բողոքը՝ *McShane v. the United Kingdom*, § 151;
- արդարացի բավարարման պահանջի վերաբերյալ փաստաբանի և թարգմանչի հարցաքննումը ոստիկանության կողմից՝ *Fedotova v. Russia*, §§ 49-51; պատասխանող կողմ հանդիսացող կառավարության ներկայացուցչի կողմից պատվիրված հետաքննության վերաբերյալ՝ *Ryabov v. Russia*, §§ 53-65;
- դիմումատուի փաստաբանի և բժշկի հետ հանդիպման արգելքը՝ *Boicenco v. Moldova*, §§ 158-59;
- հանդիպման սենյակում փաստաբան-դիմումատու քննարկումների գաղտնիության խախտումը՝ *Oferta Plus SRL v. Moldova*, § 156;
- բանտի կառավարիչների կողմից սպառնալիքները՝ *Petra v. Romania*, § 44;
- բանտի կառավարիչների կողմից իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հիմքով գանգատը Դատարան ուղարկելու մերժումը՝ *Nurmagomedov v. Russia*, § 61;
- դատարանի առջև, կալանավայրի պայմանների վերաբերյալ գործով վկայի վրա ճնշումը՝ *Novinskiy v. Russia*, §§ 119 և այլն;
- բանտի կառավարիչների կողմից տարհամոզիչ դիտողություններ անելը, Դատարանի հետ նամակագրություն տանելու և դիմելու համար դատապարտյալին անհրաժեշտ պարագաներ և փաստաթղթեր չտրամադրելը՝ *Gagiu v. Romania*^{*}, §§ 94 և այլն;
- բանտարկված դիմումատուին Դատարան դիմելու համար պահանջվող փաստաթղթերի պատճենների չտրամադրումը իշխանությունների կողմից՝ *Naydyon v. Ukraine*, § 68;
- Դատարան ներկայացված գործի կապակցությամբ դիմումատուին վախեցնելը և ճնշում գործադրելը՝ *Lopata v. Russia*, §§ 154-60:

16. Գործի հանգամանքները կարող են անհատական գանգատի ներկայացման իրավունքին ենթադրյալ միջամտության լրջությունը նվազեցնել (*Sisojeva and Others v. Latvia* (striking out) [ՄՊ], §§ 118 և այլն): *Holland v. Sweden* (որոշում) գործում Դատարանը գտել է, որ Շվեդիայի օրենքին համապատասխան, դատական նիստի ձայնագրությունների ժապավենի ոչնչացումը, մինչև Դատարան գանգատ ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտը, չի հանդիսացել խոչընդոտ դիմումատուի իրավունքն արդյունավետորեն իրականացնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու համար: *Farcaș v. Romania*^{*} (որոշում) գործում Դատարանը դիտարկեց, որ հաշմանդամ դիմումատուի իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցների սպառման ենթադրյալ անկարողությունը, այն է՝ հանրային ծառայություններից

օգտվելու համար հատուկ միջոցների բացակայությունը, չի խանգարել վերջինիս արդյունավետորեն իրականացնելու միջնորդության իր իրավունքը:

4. Պատասխանող Պետության պարտականությունները

(ա) Դատարանի Կանոնագրքի 39-րդ Կանոնը

17. Դատարանի Կանոնագրքի 39-րդ Կանոնի համաձայն, Դատարանը կարող է որոշել կիրառել հայցի ապահովման միջոցներ (*Mamatkulov and Askarov v. Turkey* [ՄՊ], §§ 99-129): Հոդված 34-ը կխախտվի, եթե Անդամ Պետության բոլոր քայլերը, որոնք կարող էին ձեռնարկվել Դատարանի կողմից նշանակված միջոցառումը կատարելու համար, ձախողվեն (*Paladi v. Moldova* [ՄՊ], §§87-92):

18. Որոշ օրինակներ:

- կալանքի տակ գտնվող ապաստան հայցողի և փաստաբանի ժամանակին հանդիպումը չապահովելը՝ չնայած 39-րդ կանոնով պահանջվող միջոցառման՝ *D.B. v. Turkey*, § 67;
- կալանավորներին Իրաքի իշխանություններին փոխանցումը նախնական միջոցառման խախտմամբ՝ *Al-Saadoon and Mufdhi v. the United Kingdom*, §§ 162-65;
- միջոցառման չպահպանմամբ՝ առաջին դիմումատուի վտարումը՝ *Kamaliyevy v. Russia*, §§ 75-79:

19. Դատարանն իրականացնում է վերահսկողություն վերոնշյալ միջաջառումների պատշաճ իրականացման նկատմամբ, մինչդեռ Պետությունը, որը գտնում է, որ ունի համոզիչ հիմնավորումներ համապատասխան միջոցառումը չկիրառելու համար, պետք է դրանց մասին տեղեկացնի Դատարանին (*Paladi v. Moldova* [ՄՊ], §§ 90-92; *Olaechea Cahuas v. Spain*, § 70; և *Groni v. Albania*, §§ 181 և այլն):

Կանոն 39-ի կիրառումը բավարար պայման չէ, որպեսզի Պետությունը հետաձգի էքստրադիցիայի կատարումը (*Al-Moayad v. Germany* (որոշում), §§ 122 և այլն; տե՛ս, նաև՝ Դատարանի հետ բարեխղճորեն համագործակցելու պատասխանող Պետության պարտականությունը):

(բ) Փաստերի հաստատումը

20. Փաստերի հաստատման համար պատասխանատու է Դատարանը, այնուամենայնիվ, կողմերը պետք է ակտիվորեն օժանդակեն վերջինիս՝ տրամադրելով գործին վերաբերող բոլոր տեղեկությունները: Կողմերի վարքագիծը կարող է հաշվի առնվել ապացույցների ձեռքբերման ժամանակ (*Ireland v. the United Kingdom*, §161):

Անհատական գանգատի համատեքստում, գանգատի արդյունավետ քննության համար կարևոր է, որ պետությունները տրամադրեն անհրաժեշտ աջակցություն: Կառավարության տնօրինության տակ գտնվող տեղեկատվության չտրամադրումը՝ առանց բավարար պատճառաբանության, կարող է ստիպել

Դատարանին հանգել որոշակի հետևությունների ոչ միայն պնդումների հիմնավորվածության մասով (*Maslova and Nalbandov v. Russia*, §§ 120-21), այլ նաև Կոնվենցիայի 38-րդ հոդվածի առնչությամբ (ոստիկանությունում ազատագրված մասին գրառումների անհասանելիություն՝ *Timurtaş v. Turkey*, § 66; հետաքննության փաստաթղթերի պատճենների անհասանելիություն՝ *Imakayeva v. Russia*, § 201): «Գաղտնի» նշագրումը պարունակող զեկույցի չտրամադրումը Դատարանին՝ *Nolan and K. v. Russia*, §§ 56 և այլն:

Գանգատի պատրաստման համար կարևորություն ունեցող բժշկական փաստաթղթերին փաստաբանի կողմից ծանոթանալու արգելքը համարվել է խոչընդոտ՝ 34-րդ հոդվածի իմաստով անհատական գանգատի իրավունքի իրականացման համար (*Boicenco v. Moldova*, § 158): Փաստաբանի և հոգեբուժարանում հարկադրաբար պահվող դիմումատուի հանդիպումների համար, տե՛ս՝ *Shtukaturev v. Russia*, §§ 138 և այլն: Կառավարության կողմից որոշակի լրացուցիչ տեղեկատվության տրամադրման ուշացումը, չնայած «ցավալի» է, սակայն չի կարող համարվել 34-րդ հոդվածով սահմանված անհատական գանգատի իրավունքի իրականացմանը խոչընդոտ (*Ocalan v. Turkey* [ՄՊ], § 201):

Հոդված 34-ի և 38-ի միջև կապի վերաբերյալ, տե՛ս՝ *Bazorkina v. Russia*, §§ 170 և § 175: Հոդված 34-ը, երաշխավորելով անհատական գանգատի իրավունքի արդյունավետ իրականացումը, ընդհանուր կանոն է, մինչդեռ 38-րդ հոդվածը հստակորեն պահանջում է պետություններին համագործակցել Դատարանի հետ:

Դատարանը կարող է արձանագրել 38-րդ հոդվածի խախտում նույնիսկ ընդունելիության վերաբերյալ առանձին որոշման բացակայության դեպքում (հոդված 29 § 3), տե՛ս՝ *Enukidze and Girgvliani v. Georgia*, § 295:

(գ) Հետաքննություններ

21. Պատասխանող պետությունից ակնկալվում է նաև աջակցություն՝ հետաքննությունների անցկացման միջոցով (հոդված 38), քանի որ պետության պարտավորությունն է ապահովել «անհրաժեշտ միջոցներ» գանգատների արդյունավետ քննության համար (*Çakici v. Turkey* [ՄՊ], § 76):

Փաստահավաքմանը խոչընդոտելը առաջացնում է 38-րդ հոդվածի խախտում (*Shamayev and Others v. Georgia and Russia*, § 504):

Բ. Տուժողի կարգավիճակը

Հոդված 34. Անհատական գանգատներ
 «Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրությունով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տրված խախտման զոհ...»:

22. Հոդված 34-ի համաձայն, Դատարան կարող են դիմել միայն այն դիմումատուները, ովքեր գտնում են, որ դարձել են Կոնվենցիայի խախտման զոհ: Առաջին հերթին, ներպետական իշխանությունների խնդիրը դառնում է Կոնվենցիայի որևէ ենթադրյալ խախտման վերականգնումը: Ուստի, դիմումատուի կողմից ենթադրյալ խախտման տուժող լինելու հարցը քննարկվում է Դատարանի վարույթների բոլոր փուլերում (*Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], §179):

1. «Տուժող» հասկացությունը

23. «Տուժող» հասկացությունը մեկնաբանվում է ինքնուրույն, այն անկախ է այնպիսի ներպետական կանոններից, ինչպիսիք են հայց ներկայացնելու շահագրգռվածությունը կամ կարողությունը (*Gorraiz Lizarraga and Others v. Spain*, § 35): Այս հասկացությունը չի ենթադրում վնասի առկայություն (*Brumărescu v. Romania* [GC], §§50). այնպիսի գործողությունը, որի իրավական հետևանքները ժամանակավոր են, կարող է բավական լինել (*Monnat v. Switzerland*, §33):

24. «Տուժող» եզրույթը պետք է մեկնաբանվի արդի հասարակության զարգացման պայմանների ներքո և կիրառվի առանց ավելորդ ձևականության (*Gorraiz Lizarraga and Others v. Spain*, § 38; *Monnat v. Switzerland*, §§ 30-33; *Stukus and Others v. Poland*, § 35; և *Ziętal v. Poland**, § 54-59): *Siliadin v. France* (§ 63) գործում Դատարանը որոշել է, որ տուժողի կարգավիճակի հարցը պետք է քննարկվի գործի ըստ էության քննության հետ միաժամանակ:

2. Ուղղակի տուժող

25. Գործողությունը կամ անգործությունը պետք է ունենա ուղղակի ազդեցություն դիմումատուի վրա (*Amuur v. France*, § 36): Այնուամենայնիվ, այս չափանիշը կարծր չէ և չի կարող կիրառվել մեխանիկորեն (*Karner v. Austria*, § 25):

26. Որոշ դեպքերում Դատարանն ընդունել է գանգատներ այնպիսի «պոտենցիալ» տուժողներից, ովքեր չեն հանդիսացել ուղղակի խախտման զոհ:

27. Որոշ օրինակներ՝ Գերմանիայում հեռախոսալսում սահմանելու դեպքը՝ *Klass and Others v. Germany*, § 34; էքստրադիցիայի դեպքը՝ *Soering v. the United Kingdom*; ծննդաբերելու տարիք ունեցող կանանց շրջանում հղիության արհեստական ընդհատման տեղեկատվության տարածումը սահմանափակող միջոցների դեպքը, տե՛ս՝ *Open Door and Dublin Well Woman v. Ireland*, §44:

28. Մյուս կողմից, կասկածը կամ վարկածը բավարար չեն տուժողի կարգավիճակ ստանալու համար: Օրինակ՝ պաշտոնական արտաքսման հրամանի բացակայությունը՝ *Vijayanathan and Pusparajah v. France*, §46; խորհրդարանական զեկույցի ենթադրյալ հետևանքները՝ *The Christian Federation of Jehovah's Witnesses in France v. France* (որոշում); դիմումատուի ընկերության վրա ենթադրաբար կիրառվող տուգանքը՝ *Senator Lines GmbH v. fifteen Member States of the European Union* (որոշում) [ՄՊ]; կոմայի մեջ գտնվող երրորդ կողմի վերաբերյալ դատական որոշման ենթադրյալ հետևանքները՝ *Rossi and Others v. Italy** (որոշում): Դիմումատուն չի կարող պնդել իր տուժողի կարգավիճակը այն

դեպքում, երբ անձամբ կրում է մասնակի պատասխանատվություն ենթադրյալ խախտման համար (*Paşa and Erkan Erol v. Turkey**):

29. Ներպետական օրենսդրության կապակցությամբ, ուղղակի ներգործության բացակայության պարագայում նույնպես անձիք կարող են պնդել, որ օրենքը խախտել է իրենց իրավունքները, եթե այն թելադրում է վարքագծի փոփոխում, որի արդյունքում անձը հավանաբար կենթարկվի քրեական հետապնդման (*Norris v. Ireland*; *Bowman v. the United Kingdom*), կամ եթե այդ անձինք այն մարդկանց թվին են պատկանում, ովքեր օրենսդրության կողմից ուղղակիորեն տուժելու ռիսկի են դիմում (*Burden v. the United Kingdom* [ՄՊ], §34; *Johnston and Others v. Ireland*): Սահմանադրության վերաբերյալ, տե՛ս՝ *Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina* [ՄՊ], § 29:

3. Անուղղակի տուժող

30. Դատարանը կարող է ընդունել անհատական գանգատ անուղղակի տուժող դիտարկվող անձից, այն դեպքում, երբ առկա է անձնական և առանձնահատուկ կապ ուղղակի տուժողի և դիմումատուի միջև:

31. Օրինակներ. 2-րդ հոդվածի ներքո՝ տուժողի կնոջ (*McCann and Others v. the United Kingdom* [ՄՊ]) և մահացած տղամարդու զարմիկի (*Yaşa v. Turkey*, § 66) կողմից ներկայացված գանգատները: Հոդված 3-ի ներքո՝ բանտարկության ընթացքում անհետացած մարդու մոր գանգատը (*Kurt v. Turkey*); կան դեպքեր, երբ անհետացած մարդու եղբայրը չի դիտարկվել որպես տուժող (*Çakici v. Turkey* [ՄՊ], §§ 98-99): Հոդված 5 § 5-ի ներքո՝ հոգեբուժարանում հարկադրաբար պահվող դիմումատուի ամուսնու գործը (*Houtman and Meeus v. Belgium**, § 30): Հոդված 6§1-ի (արդար դատավարություն) ներքո՝ տե՛ս *Grădinar v. Moldova* (դատարանների անաչառություն); *Brudnicka and Others v. Poland*, §§ 26 և այլն (հանգուցյալ ամուսնու հեղինակության պաշտպանության իրավունք); *Marie-Louise Loyer and Bruneel v. France** (արդար դատավարություն և ժամկետները): Հոդված 6§2-ի ներքո՝ տե՛ս մեղադրյալի այրու վերաբերյալ գործը, ով հանդիսացել է անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման տուժող (*Nölkenbockhoff v. Germany*, § 33): Հոդված 10-ի ներքո՝ տե՛ս *Dalban v. Romania* [ՄՊ], § 39, դիմումատուի այրու շահերի վերաբերյալ: Սակայն, ընկերության բաժնետերերը չեն հանդիսանում Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված ընկերության իրավունքների խախտման զոհ (*Agrotexim and Others v. Greece*, §§ 62 և 64), բացառությամբ հատուկ հանգամանքների (*Camberrow MM5 AD v. Bulgaria* (որոշում)):

4. Տուժողի մահը

32. Գանգատները կարող են ներկայացվել միայն կենդանի անձանց կողմից կամ նրանց անունից. մահացած մարդը չի կարող գանգատ ներկայացնել նույնիսկ ներկայացուցչի միջոցով (*Kaya and Polat v. Turkey** (որոշում)):

Այնուամենայնիվ, տուժողի մահն ինքնաբերաբար չի նշանակում, որ գործը դուրս է մնում Դատարանի ցուցակից:

33. Ընդհանուր առմամբ, այն դեպքում, երբ դիմումատուն մահանում է գանգառը Դատարանի կողմից ընդունելուց առաջ դիմումատուի ընտանիքը կարող է հետամուտ լինել գանգատին՝ տեղեկացնելով Դատարանին իրենց շահագրգռվածության մասին: Ժառանգների և այլ մոտ բարեկամների՝ այրի և երեխաներ, գործերի դեպքում տե՛ս՝ *Raimondo v. Italy*, § 2 և *Stojkovic v. “the former Yugoslav Republic of Macedonia”*, § 25; ծնողների վերաբերյալ, տե՛ս՝ *X v. France*, § 26; այլ տարբերակների համար, տե՛ս՝ *Malhous v. the Czech Republic* (որոշում) [ՄՊ]; տե՛ս նաև, հակառակ մոտեցումը՝ *Scherer v. Switzerland*, §§ 31-32; հանգուցյալի հետ ազգակցական կապեր չունեցող ժառանգի դեպքում, տե՛ս՝ *Thévenon v. France* (որոշում); տե՛ս՝ նաև *Léger v. France* [ՄՊ], §§50-51:

34. Իրավիճակն, այնուամենայնիվ, այլ է, երբ ուղղակի տուժողը մահացել է Դատարան դիմելուց առաջ (*Fairfield v. the United Kingdom* (որոշում)):

Մոտ բարեկամի մահվան կապակցությամբ՝ *Velikova v. Bulgaria* (որոշում); մոտ բարեկամի անհետացման դեպքում՝ *Varnava and Others v. Turkey* [ՄՊ], §112:

Հոդված 6-ին առնչվող գանգատների վերաբերյալ, տե՛ս՝ *Micallef v. Malta* [ՄՊ], §§ 48 և այլն, և այնտեղ կատարված հղումները: Հանգուցյալի առնչությամբ վարույթների և փաստերի հետ կապված մոտ բարեկամների կողմից Թիվ 1 Արձանագրության 8-րդ և 11-րդ հոդվածների համաձայն ներկայացված գանգատ՝ *Gakiyev and Gakiyeva v. Russia*, §§ 164-68 և այնտեղ կատարված հղումները: Փոխանցվող բողոքների դեպքում, տե՛ս՝ *Sanles Sanles v. Spain* (որոշում):

35. Դատարանն իրավասու է գնահատելու մարդու իրավունքների պաշտպանության նկատառումով քննությունը շարունակելու նպատակահարմարությունը (*Karner v. Austria*, §§ 25): Այդ իրավասությունը կարող է կիրառվել այն դեպքում, երբ առկա է ընդհանուր շահ (նույն տեղում, § 27, և *Marie-Louise Loyer and Bruneel v. France**, § 29): Դրա անհրաժեշտությունը կարող է մասնավորապես առաջանալ օրենսդրությանը, իրավական համակարգին կամ պատասխանող պետությունում կիրառվող պրակտիկայի առնչությամբ (տե՛ս, ի թիվս այլոց, *Karner v. Austria*, §§ 26 և 28; տե՛ս նաև *Léger v. France* (գործերի ցուցակից հանվել է) [ՄՊ], §51):

5. Տուժողի կարգավիճակի կորուստը

36. Դիմումատուն պետք է կարողանա հաստատել իր՝ որպես տուժողի կարգավիճակը վարույթների միջոցով (*Burdov v. Russia*, § 30):

37. Այնուամենայնիվ, ներպետական մարմինների կողմից դատավճռի մեղմացումը կամ դիմումատուի համար ձեռնտու միջոցի ընդունումը նրան կզրկի տուժողի կարգավիճակից միայն այն դեպքում, երբ խախտումը հստակորեն կամ առնվազն ըստ էության ճանաչվել է և հետագայում փոխհատուցվել է (*Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], §§ 178 և § 193): Սա պայմանավորված է ենթադրյալ խախտված իրավունքի բնույթից, որոշման հիմնավորումից (*Jensen v. Denmark* (որոշում)), այն

ընդունելուց հետո շահագրգիռ անձի համար անբարենպաստ պայմանների շարունակականությունից (*Freimanis and Līdums v. Latvia**, § 68):

38. Օրինակներ՝ *Dalban v. Romania* [ՄՊ], § 44 (հոդված 10); *Brumărescu v. Romania* [ՄՊ], § 50 (Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված և 6-րդ հոդված): Հոդված 6-ով սահմանված այն վարույթների վերաբերյալ, որոնք ի վերջո չեղյալ են հայտարարվել կամ արդարացվել են, տե՛ս՝ *Oleksy v. Poland* (որոշում) (և համեմատիր այդ վարույթների երկարատևությանը վերաբերվող գանգատների հետ); համեմատիր՝ *Arat v. Turkey*, § 47, և *Bouglame v. Belgium** (որոշում) գործերի հետ; այլ կոնկրետ իրավիճակների համար, տե՛ս՝ *Constantinescu v. Romania*, §§40-44; *Guisset v. France*, §§66-70; *Chevrol v. France*, §§ 30; *Moskovets v. Russia*, §50 (կալանքի տակ պահելը); *Moon v. France**, §§ 29 (տուգանք); *D.J. and A.-K. R. v. Romania** (որոշում), §§ 77 (Թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդված 2); և *Sergey Zolotukhin v. Russia* [ՄՊ], § 115 (Թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդված):

39. Փոխհատուցումը պետք է լինի համարժեք և բավարար: Այն պետք է պայմանավորված լինի գործի հանգամանքներով և հատուկ ուշադրություն պետք է արժանացնել քննարկվող Կոնվենցիայի խախտման բնույթին (*Gäfgen v. Germany* [ՄՊ], §116):

40. Տուժողի կարգավիճակը կարող է նաև պարզ դառնալ ներպետական դատարանի կողմից տրված փոխհատուցման չափից և փոխհատուցումը նախատեսող միջոցի արդյունավետությունից (նաև արագությունից) (*Normann v. Denmark* (որոշում) և *Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], § 202; տե՛ս՝ նաև *Jensen and Rasmussen v. Denmark* (որոշում) և *Gäfgen v. Germany* [ՄՊ], §§ 118 և 119):

41. Նախադեպեր.

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համատեքստում ներպետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցների պատշաճության վերաբերյալ, տե՛ս՝ *Nikolova and Velichkova v. Bulgaria*, §§ 49-64:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո, տե՛ս՝ *Gäfgen v. Germany* [ՄՊ], §§ 115-29 և *Kopylov v. Russia*, § 150: Կալանավայրերի պայմանների վերաբերյալ 3-րդ հոդվածի խախտման անհիմն պնդումների դեպքում, տե՛ս՝ *Shilbergs v. Russia*, §§ 66-79: Տե՛ս, նաև՝ *Ciorap v. Moldova (թիվ 2)*, §§ 23-25, որտեղ Դատարանը գտավ, որ դիմումատուն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով դեռևս տուժող է, քանի որ ներպետական դատարանի կողմից տրված փոխհատուցումը զգալիորեն ցածր է, քան հիմնականում վճարվում է Ստրասբուրգում 3-րդ հոդվածի խախտման համար:

Հոդված 6 § 1-ի համար (վարույթի երկարատևություն), տե՛ս *Scordino v. Italy (թիվ 1)* [ՄՊ], §§ 182-207; *Cocchiarella v. Italy* [ՄՊ], §§ 84-107; և *Delle Cave and Corrado v. Italy*, §§ 26: Վերջնական դատական որոշման կատարման ուշացման համար, տե՛ս՝ *Kudić v. Bosnia and Herzegovina*, §§ 7-18, և *Burdov v. Russia (թիվ 2)*:

42. Գանգատը դուրս է հանվում գործերի ցուցակից, քանի որ դիմումատուն դադարում է տուժողի կարգավիճակ/*locus standi*/ ունենալուց: Ընդունելիության որոշումը կայացնելուց հետո ներպետական մակարդակով գործի լուծման համար,

տե՛ս՝ *Ohlen v. Denmark*; Դատարանի կողմից գանգատի առարկա հանդիսացող իրավունքները փոխանցելու համաձայնության համար, տե՛ս՝ *Dimitrescu v. Romania**, §§ 33-34:

43. Դատարանը նաև քննում է Կոնվենցիայի 37-րդ հոդվածով սահմանված մեկ կամ մի քանի հիմքերով գանգատը գործերի ցուցակից հանելու հարցը՝ հաշվի առնելով այն ներկայացնելուն հաջորդող իրադարձությունները, չնայած այն փաստին, որ դիմումատուն դեռ կարող է պնդել իր «տուժող» լինելը, (*Pisano v. Italy* (հանվել է գործերի ցուցակից) [ՄՊ], § 39), կամ նույնիսկ անկախ այն բանից՝ շարունակում է պնդել իր տուժողի կարգավիճակը, թե ոչ: Մեծ Պալատի օգտին իրավասությունից հրաժարվելու որոշումը կայացնելուց հետո տեղի ունեցող զարգացումների համար, տե՛ս՝ *El Majjaoui and Stichting Touba Moskee v. the Netherlands* (հանվել է գործերի ցուցակից) [ՄՊ], §§ 28-35; այն բանից հետո, երբ գանգատը հայտարարվել է ընդունելի՝ *Shevanova v. Latvia* (հանվել է գործերի ցուցակից) [ՄՊ], §§ 44; և Պալատի վճռից հետո՝ *Sisojeva and Others v. Latvia* (հանվել է գործերի ցուցակից) [ՄՊ], § 96):

I. ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառումը

Հոդված 35 § 1. Ընդունելիության չափանիշ

1. «Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, ...»:

44. 35-րդ հոդվածի բովանդակությունը ցույց է տալիս, որ այս պահանջը հիմնված է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի վրա: Իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները սպառելը միջազգային սովորույթային իրավունքի մի մասն է, որը ճանաչվել է այդպիսին Արդարադատության Միջազգային Դատարանի նախադեպային իրավունքում (օրինակ, տե՛ս *Interhandel-ի գործը (Switzerland v. the United States)*, 1959թ.-ի մարտի 21-ի վճիռը): Այն նաև կարելի է գտնել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ պայմանագրերում: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների Միջազգային Դաշնագիր (հոդված 41(1)(գ)) և դրան կից կամընտիր արձանագրություն (հոդվածներ 2 և 5(2)(բ)); Մարդու իրավունքների Ամերիկյան Կոնվենցիա (հոդված 46); Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան Կանոնադրություն (հոդվածներ 50 և 56(5)): Ինչպես Դատարանը դիտարկեց *De Wilde, Ooms and Versyp v. Belgium* վճռում, Պետությունը կարող է ուշադրություն չդարձնել իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնին՝ այս առումով ունենալով հաստատված միջազգային փորձ (§ 55):

45. Դատարանը դիտարկվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերին սուբսիդիար օղակ և տեղին կլինեք, որ ազգային դատարանները նախապես հնարավորություն ունենային որոշելու ներպետական օրենսդրության և Կոնվենցիայի համապատասխանության

վերաբերյալ հարցերը (*A, B and C v. Ireland* [ՄՊ], § 142): Եթե գանգատն, այնուամենայնիվ, հետագայում բերվում է Ստրասբուրգ, Դատարանը պետք է ազգային դատարանների դիտարկումներին տա առավելություն, քանի որ նրանք գտնվում են այդ երկրների հիմնական ուժերի հետ ուղղակի և շարունակական կապի մեջ (*Burden v. the United Kingdom* [ՄՊ], §42):

46. Հարց է առաջանում՝ արդյոք իրավական պաշտպանության այս կամ այն միջոցը ներպետական է, թե միջազգային: Եթե այն ներպետական է, ապա անհրաժեշտ է այն սպառել միջև գանգատը Դատարան ներկայացնելը: Եթե այն միջազգային է, գանգատը կարող է մերժվել Կոնվենցիայի 35 § 2 (բ) հոդվածին համապատասխան: Դատարանն է որոշում՝ տվյալ մարմինը ներպետական է, թե միջազգային՝ հաշվի առնելով բոլոր գործոնները, ներառյալ այդ մարմնի իրավական բնույթը, դրա հիմնադիր փաստաթուղթը, իրավունակությունը, իրավական համակարգում տեղը (եթե այդպիսին կա) և ֆինանսավորումը (*Jeličić v. Bosnia and Herzegovina* (որոշում); *Peraldi v. France** (որոշում)):

1. Կանոնի նպատակը

47. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնի նպատակն է հնարավորություն տալ ներպետական մարմիններին, մասնավորապես դատարաններին, կանխելու կամ վերականգնելու Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները: Սա հիմնված է 13-րդ հոդվածում արտացոլված այն գաղափարի վրա, համաձայն որի ներպետական իրավական համակարգը պետք է նախատեսի արդյունավետ միջոց Կոնվենցիայի իրավունքների պաշտպանության համար: Սրանում է կայանում Կոնվենցիոն մեխանիզմի սուբսիդիարության բնույթը (*Selmouni v. France* [ՄՊ], §74; *Kudła v. Poland* [ՄՊ], § 152; *Andrášik and Others v. Slovakia* (որոշում)): Այն գործում է Կոնվենցիոն դրույթները ներպետական իրավունքի մեջ կիրառելու պարագայից անկախ (*Eberhard and M. v. Slovenia*): Վերջերս Դատարանը վերահաստատել է, որ համաձայն Կոնվենցիայի, իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը պաշտպանության համակարգի գործունեության անփոխարինելի մասն է, և սա հիմնական սկզբունք է (*Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ], §§ 69, 97):

2. Կանոնի կիրառելիությունը

(ա) Ճկունությունը

48. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնը առավել ոսկե կանոն է, քան կարծրացած սկզբունք: Հանձնաժողովը և Դատարանը հաճախ ընդգծում են, որ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում կանոնը անհրաժեշտ է կիրառել որոշակի ճկունությամբ, առանց ավելորդ ձևականությունների (*Ringisen v. Austria*, § 89; *Lehtinen v. Finland* (որոշում)): Ներպետական միջոցների սպառման կանոնը ո՛չ բացարձակ է և ո՛չ էլ պետք է կիրառել մեխանիկորեն (*Kozacioğlu v. Turkey* [ՄՊ], § 40): Օրինակ,

Դատարանը գտել է, որ չափից դուրս ձևական կլինի դիմումատուներից պահանջել օգտվել այնպիսի միջոցից, որը նույնիսկ երկրի բարձրագույն դատարանը չի պարտավորեցրել նրանց օգտագործել (*D.H. and Others v. the Czech Republic* [ՄՊ], §§ 116-18): Դատարանը մի գործում հաշվի առավ դիմումատուների պատասխանի համար տրված սեղմ վերջնաժամկետները, որը հանգեցրել էր «շտապողականության» (տե՛ս՝ *Financial Times Ltd and Others v. the United Kingdom*, §§ 43-44): Այնուամենայնիվ, առկա իրավական պաշտպանության ներպետական միջոցների օգտագործումն ազգային իրավունքի ընթացակարգերի պահպանմամբ հատկապես կարևորվում են այն դեպքում, երբ քննարկվում է իրավական հստակության և որոշակիության վերաբերյալ հարցերը (*Saghinadze and Others v. Georgia*, §§ 83-84):

(բ) Ներպետական կանոններին և սահմանափակումներին համապատասխանությունը

49. Դիմումատուները պետք է պահպանեն ներպետական իրավունքի կանոնները և ընթացակարգերը, հակառակ դեպքում իրենց կողմից ներկայացրած գանգատը կհակասի 35-րդ հոդվածի պահանջին (*Ben Salah Adraqui and Dhaima v. Spain* (որոշում); *Merger and Cros v. France* (որոշում); *MPP Golub v. Ukraine* (որոշում); *Agbovi v. Germany** (որոշում)): Հոդված 35 § 1 չէր կատարվել այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքի քննությունը մերժվել էր դիմումատուի կողմից ընթացակարգային սխալի պատճառով (*Gäfgen v. Germany* [ՄՊ], § 143): Սակայն պետք է նշել, որ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանն իրականացնի բողոքի ըստ էության քննություն, նույնիսկ, եթե այն անընդունելի է համարում, դա կհամապատասխանի հոդված 35§1-ին (*Voggenreiter v. Germany*): Սա կգործի նաև այն դեպքում, երբ չնայած դիմումատուները չեն պահպանել ներպետական իրավունքով նախատեսված ընթացակարգերը, այնուամենայնիվ, իրավասու մարմինն իրականացրել է հայցի ըստ էության քննություն (*Vladimir Romanov v. Russia*, § 52): Նույնը վերաբերում է իրավական պահանջները նվազ բավարարող, հապճեպ պատրաստված այն գանգատներին, որոնց նկատմամբ դատարանը թեև հակիրճ, սակայն ըստ էության վճիռ է կայացրել (*Verein gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (no. 2)* [ՄՊ], §§ 43-45):

(գ) Ներպետական իրավական պաշտպանության մի քանի միջոցների առկայությունը

50. Եթե առկա է մեկից ավելի արդյունավետ միջոց, դիմումատուից պահանջվում է օգտագործել դրանցից միայն մեկը (*Moreira Barbosa v. Portugal* (որոշում); *Jeličić v. Bosnia and Herzegovina* (որոշում); *Karakó v. Hungary*, § 14; *Aquilina v. Malta* [ՄՊ], § 39): Իրապես, մեկ միջոցի օգտագործումից հետո չի պահանջվում էապես նույն նպատակը ունեցող այլ միջոցի կիրառում (*Riad and Idiab v. Belgium*,* §84; *Kozacioğlu v. Turkey* [ՄՊ], §§40; *Micallef v. Malta* [ՄՊ], § 58): Դիմումատուն ընտրում է իր գործի համար առավել շահավետ միջոց: Որպես ամփոփում, եթե ներպետական իրավունքը նախատեսում է օրենքի տարբեր

բնագավառներում մի քանի զուգահեռ միջոցներ, դիմումատուն, ցանկանալով այդ միջոցներից որևէ մեկով ստանալ փոխհատուցում Կոնվենցիայի ենթադրյալ խախտման համար, պարտավոր չէ դիմել այլ միջոցների, որոնք ունեն էապես նույն նպատակը (*Jasinskis v. Latvia*, §§ 50 և 53-54):

(դ) Ըստ էության բարձրացված բողոք

51. Պարտադիր չէ, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքը հստակորեն բարձրացված լինի ներպետական վարույթներում, պայմանով, որ բողոքը ներկայացվել է «առնվազն ըստ էության» (*Castells v. Spain*, § 32; *Ahmet Sadik v. Greece*, § 33; *Fressoz and Roire v. France*, § 38; *Azinas v. Cyprus* [ՄՊ], §§ 40-41): Սա նշանակում է, որ եթե դիմումատուն չի հիմնվել Կոնվենցիոն դրույթների վրա, նա, հիմք ընդունելով ներպետական իրավունքի նորմերը, պետք է ներկայացնի այնպիսի բովանդակությամբ փաստարկներ, որոնք առաջին հերթին հնարավորություն կտան ներպետական դատարաններին վերականգնելու ենթադրյալ խախտումը (*Gäfgen v. Germany* [ՄՊ], §§ 142, 144 և 146; *Karapanagiotou and Others v. Greece**, § 29: Այն բողոքի կապակցությամբ, որը չի բարձրացվել արդարադատություն իրականացնող վերջին աստիճանում, տե՛ս՝ *Association Les témoins de Jéhovah v. France** (որոշում)):

(ե) Միջոցների առկայությունը և պատշաճությունը

52. Դիմումատուները պարտավոր են սպառել իրավական պաշտպանության ներպետական միայն այն միջոցները, որոնք տվյալ ժամանակահատվածում գոյություն ունեն տեսության մեջ և պրակտիկայում, և որոնք կարող են ուղղակիորեն կիրառվել, այսինքն, միջոցներ, որոնք մատչելի են, կարող են տրամադրել փոխհատուցում ներկայացված բողոքների նկատմամբ և առաջարկում են հաջողության ողջամիտ հեռանկարներ (*Sejdovic v. Italy* [ՄՊ], § 46; *Paksas v. Lithuania* [ՄՊ], § 75):

53. Հայեցողական կամ արտասովոր միջոցները չպետք է օգտագործվեն: Որպես օրինակ, տե՛ս՝ Դատարանից որոշման վերանայման պահանջը՝ *Çinar v. Turkey** (որոշում), *Prystavka v. Ukraine* (որոշում)); կամ գործի վերաբացման պահանջը՝ *K.S. and K.S. AG v. Switzerland* (որոշում), բացառությամբ այն դեպքերի, երբ, օրինակ, ներպետական իրավունքով սահմանված է, որ այդպիսի պահանջը փաստացի արդյունավետ պաշտպանություն է; կամ երբ վճռի բեկանումը, որը ձեռք է բերել իրավաբանական ուժ, միակ միջոցն է, որով պատասխանող Պետությունը կարող է հարցին լուծում տալ իր իրավական համակարգի միջոցով՝ *Kiiskinen v. Finland* (որոշում), *Nikula v. Finland* (որոշում)): Նմանապես, բարձրագույն մարմնին բողոքարկումը (*Horvat v. Croatia*, § 47; *Hartman v. the Czech Republic*, § 66), ինչպես նաև դիմումատուին ուղղակիորեն անհասանելի, միջնորդավորված հայեցողությամբ պայմանավորված միջոցը (*Tănase v. Moldova* [ՄՊ], § 122) չեն հանդիսանում արդյունավետ պաշտպանության միջոցներ: Վերաքննության արդյունավետության մասով, որի օգտագործումը սկզբունքորեն չի պահանջվում (Օմբուդսմեն), տե՛ս՝ *Egmez v.*

Cyprus վճռի պատճառաբանական մասը, §§ 66-73: Վերջապես, ներպետական միջոցը, որը ոչ մի ստույգ ժամանակային սահմանափակման ենթակա չէ և, հետևաբար, տարակուսանք է առաջացնում, չի կարող համարվել արդյունավետ (*Williams v. the United Kingdom* (որոշում), և այնտեղ արված հղումները):

Այն դեպքում, երբ դիմումատուն օգտվել է այնպիսի միջոցից, որը Դատարանը համարում է ոչ պատշաճ, ապա այն օգտագործելու համար նախատեսված ժամկետը չի կասեցնի վեցամսյա ժամկետը, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել ժամկետը չպահպանելու հիմքով գանգատի մերժմանը (*Rezgui v. France* (որոշում) և *Prystavska v. Ukraine* (որոշում)):

(գ) Առկայություն և արդյունավետություն

54. Միջոցները պետք է լինեն բավականաչափ որոշակի ոչ միայն տեսության մեջ, այլ նաև պրակտիկայում: Որոշելիս, թե արդյոք որևէ կոնկրետ միջոց համապատասխանում է առկայության և արդյունավետության չափանիշին, պետք է հաշվի առնել անհատական գործի որոշակի հանգամանքներ (տե՛ս՝ ստորև 4-րդ մասը): Ներպետական դատարանների որդեգրած մոտեցումը պետք է բավարար չափով համախմբվի ազգային իրավակարգում: Այսպիսով, Դատարանը գտել է, որ ավելի բարձր դատական ատյանին դիմելու հնարավորությունը դադարում է «արդյունավետ» լինելուց տվյալ դատարանի նախադեպային իրավունքի համակարգում շեղումների պատճառով, այնքան ժամանակ, քանի դեռ այդ շեղումները շարունակում են գոյություն ունենալ (*Ferreira Alves v. Portugal (no. 6)**, §§ 28-29):

Դատարանը պետք է իրականորեն հաշվի առնի ոչ միայն ներպետական իրավական համակարգի պաշտոնական միջոցները, այլ նաև դրանց գործողության ընդհանուր իրավական և քաղաքական համատեքստը, որում դրանք գործում են, ինչպես նաև դիմումատուի անձնական հանգամանքները (*Akdivar and Others v. Turkey* [ՄՊ], §§ 68-69; *Khashiyev and Akayeva v. Russia*, §§ 116-17): Այն պետք է քննի, թե արդյոք գործի բոլոր հանգամանքներում դիմումատուն արել է իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման համար այն ամենը, ինչը ողջամտորեն ակնկալվում էր իրենից (*D.H. and Others v. the Czech Republic* [ՄՊ], §§ 116-22):

Պետք է նշել, որ փաստացի կամ իրավական սահմանները, որպես այդպիսին, չեն հանդիսանում խոչնդոտ ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման համար: Այսպես, Անդամ Պետության իրավասությունից դուրս ապրող դիմումատուները չեն ազատվում Պետության մեջ գործող իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու պարտականությունից՝ անկախ այնպիսի պարագաներից, ինչպիսիք են՝ պրակտիկ անհարմարությունները կամ անձնական դժկամությունը (*Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ], §§ 98 և 101, այն դիմումատուների վերաբերյալ, որոնք հայտնվել են պատասխանող պետության իրավասության տակ անկախ իրենց կամքից):

3. Կանոնի կիրառման սահմանափակումները

55. «Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմեր»-ի համաձայն, գոյություն ունեն հատուկ հանգամանքներ, որոնց դեպքում դիմումատուն ազատվում է ներպետական իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու պարտականությունից (*Sejdovic v. Italy* [ՄՊ], § 55) (տե՛ս՝ ստորև 4-րդ մասը):

Կանոնը կիրառելի չէ նաև այն դեպքում, երբ առկա է այնպիսի ադմինիստրատիվ պրակտիկա, որի ժամանակ Կոնվենցիայի հետ անհամատեղելի գործողությունները կրում են շարունակական բնույթ և պետական մարմինների կողմից նկատվում է հանդուրժողականություն: Այս պարագայում միջոցը դառնում է ապարդյուն կամ անարդյունավետ (*Aksoy v. Turkey*, § 52):

Այն դեպքերում, երբ դիմումատուին պարտադրվում է օգտագործել որևէ կոնկրետ միջոց, որը ողջամիտ չէ պրակտիկայում և առաջացնում է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված անհատական գանգատի իրավունքի իրականացման անհամաչափ խոչնդոտ, Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուն ազատվում է սպառման պահանջից (*Veriter v. France**, § 27; *Gaglione and Others v. Italy**, § 22):

Դատարանը գտել է, որ դիմումատուից պահանջվող միջոցի օգտագործումն անարդյունավետ է, քանի որ վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի նկատմամբ նշանակվել է տուգանք վերաքննիչ բողոքի առնչությամբ, այն դեպքում, երբ չի արձանագրվել ընթացակարգային որևէ չարաշահում կամ խախտում (*Prencipe v. Monaco**, §§ 95-97):

4. Ապացուցման բեռի բաշխումը

56. Երբ կառավարությունը պնդում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել, այն ստանձնում է դիմումատուի կողմից արդյունավետ և մատչելի միջոցը չօգտագործելու ապացուցման պարտականությունը (*Dalia v. France*, § 38; *McFarlane v. Ireland* [ՄՊ], § 107): Առկա միջոցը պետք է լինի բականաչափ որոշակի իրավունքում և պրակտիկայում (*Vernillo v. France*), հետևաբար, ներպետական իրավունքում այն պետք է ունենա պարզ և հստակ հիմք (*Scavuzzo-Hager and Others v. Switzerland** (որոշում); *Norbert Sikorski v. Poland**, § 117; *Surmeli v. Germany* [ՄՊ], §§ 110-12): Միջոցը պետք է ունակ լինի վերականգնել դիմումատուի խախտված իրավունքը և առաջարկել հաջողության ողջամիտ հեռանկարներ (*Scoppola v. Italy (no. 2)* [ՄՊ], § 71): Միջոցի զարգացումն ու հասանելիությունը, ներառյալ կիրառման շրջանակն ու բնույթը, պետք է հստակորեն սահմանված լինեն և հաստատվեն կամ լրացվեն պրակտիկայով և նախադեպային իրավունքով (*Mikolajová v. Slovakia*, § 34): Նման մոտեցումը կիրառելի է նաև այնպիսի իրավական համակարգերի նկատմամբ, որոնք կառուցվել են ընդհանուր իրավունքի ոգով, որտեղ գրված սահմանադրությունն անվերապահորեն ապահովում է դիմումատուի կողմից վկայակոչված իրավունքը (*McFarlane v. Ireland* [ՄՊ], § 117, այն միջոցի վերաբերյալ, որը քսանհինգ տարի առկա է տեսության մեջ, սակայն երբեք չի օգտագործվել պրակտիկայում):

Կառավարության փաստարկները հստակորեն ավելի մեծ կշիռ կունենան, եթե ազգային նախադեպային իրավունքի օրինակներ ներկայացվեն (*Doran v. Ireland*; *Andrášik and Others v. Slovakia* (որոշում); *Di Sante v. Italy** (որոշում); *Giummarra and Others v. France** (որոշում); *Paulino Tomás v. Portugal* (որոշում); *Johtti Sarmelacat Ry and Others v. Finland* (որոշում)), որոնք ճանաչվել են համապատասխան (*Sakhnovskiy v. Russia* [ՄՊ], §§ 43-44):

57. Եթե կառավարությունը պնդում է, որ դիմումատուն ներպետական դատարանի առաջ պետք է ուղղակիորեն հիմնվեր Կոնվենցիայի վրա, նման միջոցի որոշակիության աստիճանը պետք է ցույց տրվի կոնկրետ օրինակներով (*Slavgorodski v. Estonia* (որոշում):

58. Դատարանն ընդունել է ազգային օրենսդրության հատուկ միջոցի վերաբերյալ կառավարության ներկայացրած փաստարկները, այն դեպքում, երբ այդ միջոցը հնարավոր էր կիրառել չափազանց երկարատև դատական վարույթների ժամանակ (*Brusco v. Italy* (որոշում); *Slaviček v. Croatia* (որոշում)): Տե՛ս, նաև, *Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], §§ 136-48: Հակառակ դեպքում տե՛ս՝ *Merit v. Ukraine*, § 65:

59. Կառավարության կողմից պատշաճ և արդյունավետ միջոցի առկայության վերաբերյալ ապացուցման պարտականությունն ավարտելուց հետո, դիմումատուն ձեռք է բերում պարտավորություն ներկայացնելու, որ.

- միջոցը փաստացի օգտագործվել է (*Grässer v. Germany* (որոշում)); *կամ*
- միջոցը որոշակի պատճառով անհամապատասխան և անարդյունավետ է գործի որոշակի հանգամանքներում (*Selmouni v. France* [ՄՊ], § 76, օրինակ, հետաքննության իրականացման չափից ավելի ուշացումների դեպքում, *Radio France and Others v. France* (որոշում, § 34; կամ միջոցը, որն է վճռաբեկ բողոքը, որը սովորաբար առկա է, սակայն ելնելով նմանատիպ գործերում մոտեցման տեսանկյունից, գործի տվյալ հանգամանքների համար անարդյունավետ է՝ *Scordino v. Italy* (որոշում); *Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium*, §§ 26 and 27), նույնիսկ եթե այդ որոշումները կայացվել են վերջին ժամանակներում (*Gas and Dubois v. France* (որոշում)): Սա նաև այն դեպքն է, երբ դիմումատուն չի կարողացել ուղղակիորեն դիմել տվյալ դատարան (*Tănase v. Moldova* [ՄՊ], § 122): Որոշ հատուկ հանգամանքներում դիմումատուները կարող են հայտնել այնպիսի իրավիճակներում, երբ չեն դիմել Կառավարության կողմից նշված դատարանին, բայց ազատվում են դա անելուց, քանի որ այլ անձանց կողմից օգտագործված այդ ներպետական միջոցը հանդիսացել է տեսականորեն անարդյունավետ և նույնը կլիներ նաև իրենց դեպքում (*Vasilkoski and Others v. “the former Yugoslav Republic of Macedonia”*, §§ 45-46; *Laska and Lika v. Albania*, §§ 45-48): Սակայն, սա կիրառվում է շատ հատուկ դեպքերում (համեմատի՛ր *Saghinadze and Others v. Georgia*, §§ 81-83); *կամ*
- գոյություն ունեն առանձնահատուկ հանգամանքներ, որոնք ազատում են դիմումատուի նման պահանջից (*Akdivar and Others v. Turkey* [ՄՊ], §§ 68-75; *Sejdovic v. Italy* [ՄՊ], § 55; և *Veriter v. France**, § 60):

60. Նման գործոն կարող է լինել իշխանությունների անգործությունը (ի պատասխան պետական գործակալների վատ վարքագծի կամ նրանց կողմից պատճառված վնասի վերաբերյալ ներկայացված լուրջ մեղադրանքների), օրինակ, երբ նրանք հրաժարվում են իրականացնել հետաքննություն կամ առաջարկել օգնություն: Նման դեպքում կարելի է ասել, որ ապացուցման բեռը ևս մեկ անգամ ընկնում է պատասխանող կառավարության վրա, որպեսզի վերջինս բացատրի, թե ինչպիսի գործողություններ են կատարվել վիճարկվող հարցերի մասշտաբի և լրջության կապակցությամբ (*Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ], § 70):

61. Դիմումատուի կողմից որոշակի միջոցի արդյունավետության վերաբերյալ սուկ կասկածները չեն ազատում նրան այն օգտագործելու պարտականությունից (*Epözdemir v. Turkey* (որոշում); *Milošević v. the Netherlands* (որոշում); *Pellegriti v. Italy** (որոշում); *MPP Golub v. Ukraine* (որոշում)): Հակառակը, դիմումատուի շահերից է բխում դիմել համապատասխան դատարան և ստեղծել հնարավորություն, մեկնաբանության միջոցով, զարգացնել առկա իրավունքները (*Ciupercescu v. Romania**, § 169): Այն իրավական համակարգերը, որոնցում հիմնարար իրավունքները պաշտպանվում են սահմանադրորեն, տուժող անձը պետք է փորձարկի այդ պաշտպանության չափը, իսկ նախադեպային իրավունքի (common law) համակարգում անձը պետք է հնարավորություն տա ներպետական դատարաններին զարգացնելու այդ իրավունքները մեկնաբանման միջոցով (*A, B and C v. Ireland* [ՄՊ], § 142): Այն դեպքում, երբ հաստատված ներպետական նախադեպային իրավունքի ներքո միջոցը փաստացի չի առաջարկում հաջողության ողջամիտ հեռանկարներ, այն փաստը, որ դիմումատուն չի օգտագործել իրավական պաշտպանության միջոցը, չի հանդիսանա հիմք գանգատի անընդունելիության համար (*Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium*, § 27; *Carson and Others v. the United Kingdom* [ՄՊ], § 58):

5. Ընթացակարգային ասպեկտներ

62. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու դիմումատուի պարտականությունը սովորաբար գնահատվում է Դատարան գանգատ ներկայացնելու օրվա դրությամբ (*Baumann v. France**, § 47), բացառությամբ գործի որոշակի հանգամանքների (տե՛ս՝ ստորև 6-րդ մասը): Այնուամենայնիվ, Դատարանն ընդունում է, որ միջոցների վերջնական սպառման փուլ կարելի է հասնել գանգատը Դատարան ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան ընդունելիության մասին որոշման կայացումը (*Karoussiotis v. Portugal**, § 57):

63. Եթե կառավարությունը մտադիր է ներկայացնել չսպառման վերաբերյալ դիրքորոշում, ապա, այնքանով որքանով գանգատի բնույթն ու հանգամանքները թույլ են տալիս, դա պետք է անի իր նախնական առարկություններում՝ նախքան ընդունելիության մասին որոշման կայացումը: Բացառությունների դեպքում կառավարությունը կարող է ազատվել նման պարտականությունից (տե՛ս՝ *Mooren v. Germany* [ՄՊ], § 57 և նույն տեղում կատարված հղումները, §§ 58-59):

Հաճախ չսպառման վերաբերյալ հայտարարությունը կարող է ներկայացվել գործի ըստ էության քննության հետ միաժամանակ, մասնավորապես ընթացակարգային պարտականություններին և երաշխիքներին վերաբերող գործերում, ինչպիսիք են օրինակ՝ 2-րդ հոդվածի (*Dink v. Turkey**, §§ 56-58) կամ 3-րդ հոդվածի ներքո բերված ընթացակարգային բողոքները: Հոդված 6-ի կապակցությամբ տե՛ս՝ *Scoppola v. Italy (no. 2)* [ՄՊ], § 126; հոդված 8-ի՝ *A, B and C v. Ireland* [ՄՊ], § 155; հոդված 13-ի՝ *Surmeli v. Germany* [ՄՊ], § 78, և *M.S.S. v. Belgium and Greece* [ՄՊ], § 336):

6. Նոր միջոցների ստեղծումը

64. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը սովորաբար գնահատվում է գանգատը Դատարան ներկայացնելու օրվա դրությամբ ներպետական դատավարության ընթացքի հիման վրա: Կան բացառություններ այս կանոնից, որոնք պայմանավորված են նոր միջոցների ստեղծմամբ (տե՛ս՝ *İçyer v. Turkey* (որոշում), §§ 72): Դատարանը, մասնավորապես, հրաժարվել է այս կանոնից՝ դատական վարույթների տևողությանը վերաբերող գործերում (*Predil Anstalt v. Italy** (որոշում); *Bottaro v. Italy** (որոշում); *Andrásik and Others v. Slovakia* (որոշում); *Nogolica v. Croatia* (որոշում); *Brusco v. Italy* (որոշում); *Korenjak v. Slovenia* (որոշում), §§ 66-71); կամ սեփականության իրավունքին միջամտության պարագայում փոխհատուցման նոր միջոցի վերաբերյալ գործերում (*Charzyński v. Poland* (որոշում) և *Michalak v. Poland* (որոշում); *Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ]); կամ ներպետական վճիռները չկատարելու (*Nagovitsyn and Nalgiyev v. Russia* (որոշում), §§ 36-40) կամ բանտի գերբնակեցմանը (*Łatak v. Poland* (որոշում)) վերաբերող գործերում:

Դատարանը հաշվի է առնում նորաստեղծ միջոցների արդյունավետությունը և մատչելիությունը (*Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ], § 88): Այն դեպքում, երբ միջոցը արդյունավետ չէ տվյալ գործի համար, տե՛ս՝ *Parizov v. “the former Yugoslav Republic of Macedonia”*, §§ 41-47, այն դեպքում, երբ նոր սահմանադրական միջոցն է արդյունավետ, տե՛ս *Cvetković v. Serbia*, § 41:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե երբ արդարացի կլինի դիմումատուից պահանջել օգտագործել նախադեպային իրավունքի փոփոխությանը հաջորդող Պետության դատական համակարգ նորովի ընդգրկված միջոցը, տե՛ս՝ *Depauw v. Belgium** (որոշում), և ավելի ընդհանուր սկզբունքներ՝ *McFarlane v. Ireland* [ՄՊ], § 117; պիլոտային վճռից հետո ներմուծված նոր միջոց՝ *Fakhretdinov and Others v. Russia* (որոշում), §§ 36-44; և ներպետական նախադեպային իրավունքից շեղվելը՝ *Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], § 147:

Դատարանը ցուցումներ է տվել *Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ] և *Cocchiarella v. Italy* [ՄՊ] գործերում ներպետական միջոցների այն առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են ապահովելու իրենց արդյունավետությունը երկարատև դատավարական գործերի ժամանակ (տե՛ս նաև, ավելի վերջերս կայացված, *Vassilios Athanasiou and Others v. Greece**, §§ 54-56): Որպես կանոն,

վարույթների երկարատևությանը վերաբերող կանխարգելիչ և փոխհատուցող ազդեցություն չունեցող միջոցները, չպետք է օգտագործվեն (*Puchstein v. Austria*, §31): Վարույթների երկարատևությանը վերաբերող միջոցը պետք է մասնավորապես գործի առանց ձևական ուշացումների և ապահովի փոխհատուցման համապատասխան մակարդակ (*Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], §§ 195 և 204-07):

65. Երբ Դատարանն ընդհանուր թերություններ է գտնում ներպետական օրենսդրության մեջ կամ իրավակիրառ պրակտիկայում, այն խնդրում է Պետությանը քննարկել իրավիճակը և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել արդյունավետ միջոցառումներ՝ կանխելու նույնաբնույթ գործերի ներկայացումը Դատարան (*Lukenda v. Slovenia*, § 98): Սա նշանակում է, որ Պետությունը պետք է փոփոխի առկա մի շարք միջոցները, կամ ավելացնի նորերը, որոնք կապահովեն Կոնվենցիայի խախտումների իրապես արդյունավետ փոխհատուցումը (տե՛ս օրինակ, *Xenides-Arestis v. Turkey*, § 40-ում պիլոտային վճիռները; և *Burdov v. Russia (no. 2)*, §§ 42, 129, 140): Հատուկ ուշադրություն պետք է դարձվի արդյունավետ ներպետական միջոցներ ապահովելու անհրաժեշտության վրա (տե՛ս՝ *Vassilios Athanasiou and Others v. Greece** պիլոտային վճիռը, § 41):

Երբ պատասխանող պետությունը սահմանում է նոր միջոց, Դատարանը պարզում է այդ միջոցի արդյունավետությունը (օրինակ, *Robert Lesjak v. Slovenia*, §§ 34-55; *Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ], § 87): Եթե այն արդյունավետ է, ապա Դատարանն որոշում է, որ նմանատիպ գործերում այլ դիմումատուներ պարտավոր են օգտագործել նոր միջոցը՝ պայմանով, որ նրանք դա անելու համար ժամանակային արգելք չունենան: Դատարանը հայտարարել է նման գանգատներն անընդունելի հոդված 35 § 1 համաձայն, անգամ եթե դրանք ներկայացվել են նախքան նոր միջոցի ստեղծումը (*Grzinčič v. Slovenia*, §§ 102-10; *İçyer v. Turkey* (որոշում), §§ 74):

Սա վերաբերում է այն ներպետական միջոցներին, որոնք հայտնվել են գանգատներ ներկայացնելուց հետո: Դատարանը կգնահատի դիմումատուների կողմից այդպիսի միջոցն օգտագործելու պարտականությունից ազատման բացառիկ հանգամանքները, մասնավորապես, այն հաշվի կառնի նաև ներպետական կարգավորումների բնույթը և համատեքստը, որտեղ վերջիններս ներկայացվում են (*Fakhretdinov and Others v. Russia* (որոշում), § 30): Վերջերս կայացված այս գործում Դատարանը որոշեց, որ արդյունավետ ներպետական միջոցը, որը ներմուծվել էր պիլոտային վճռում այդպիսի միջոց ստեղծելու պահանջից և վճիռն ընդունելուց հետո, պետք է օգտագործվի մինչև դիմումատուների կողմից Դատարան գանգատ ներկայացնելը:

Դատարանը նաև հստակեցրեց 35 § 1 հոդվածի կիրառման պայմանները կապված գանգատի ներկայացման ամսաթվի հետ (նույն տեղում, §§31-33; տե՛ս նաև *Nagovitsyn and Nalgiyev v. Russia* (որոշում), §§ 29 և 42):

Բ. Վեցամսյա ժամկետի չպահպանումը

Հոդված 35§1. Ընդունելիության չափանիշ

«Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն ... վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը»:

1. Կանոնի նպատակը

66. Վեցամսյա ժամկետի պահպանման կանոնի նպատակն է ապահովել իրավական որոշակիությունը: Այն անհրաժեշտ է, որպեսզի Կոնվենցիայի ներքո բարձրացված հարցերը քննվեն ողջամիտ ժամկետում և իրավասու մարմիններն ու այլ շահագրգիռ անձինք չհայտնվեն ժամանակային անորոշության մեջ (*P.M. v. the United Kingdom* (որոշում)):

67. Այս կանոնը նաև պոտենցիալ դիմումատուներին բավարար ժամանակ է տրամադրում որոշելու՝ ներկայացնել գանգատ, թե ոչ, և եթե այո, հստակեցնել գանգատում բարձրացվող բողոքներն ու փաստարկները (*O'Loughlin and Others v. the United Kingdom* (որոշում)), ինչպես նաև նպաստում է գործի փաստերի հաստատմանը, տրամադրում է խնդրահարույց հանդիսացող բարձրացված հարցերի արդար քննարկման համար նախատեսված ժամանակահատված (*Nee v. Ireland* (որոշում)):

68. Այն մատնանշում է Դատարանի կողմից իրականացվող վերահսկողության ժամանակային սահմանափակումները և ազդարարում է անհատներին և պետական մարմիններին, որ այդ ժամանակահատվածից հետո, վերահսկողությունն այլևս անհնար է (*Ipek v. Turkey* (որոշում); *Di Giorgio and Others v. Italy** (որոշում)):

69. Դատարանը չի կարող թույլատրել վեցամսյա ժամկետի պահպանման կանոնի չկիրառում (օրինակ այդ հարցի կապակցությամբ կառավարության դիրքորոշման բացակայության դեպքում) (*Belaousof and Others v. Greece**, § 38):

70. Վեցամսյա ժամկետի պահպանման կանոնը չի կարող պահանջել դիմումատուից ներկայացնել իր գանգատը Դատարան՝ նախքան հարցի առնչությամբ իր դիրքորոշումը ներպետական մակարդակով վերջնականորեն լուծված լինելը (*Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 157):

2. Վեցամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը

ա) Վերջնական որոշում

71. Վեցամսյա ժամկետը սկսվում է հաշվարկվել իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման գործընթացի վերջնական որոշման ընդունման պահից (*Paul and Audrey Edwards v. the United Kingdom* (որոշում)): Դիմումատուից ակնկալվում է ներպետական միջոցների նորմալ օգտագործում, որոնք ամենայն հավանականությամբ արդյունավետ են և բավարար (*Moreira Barbosa v. Portugal* (որոշում)):

72. Հաշվի կարող են առնվել միայն այն միջոցները, որոնք նորմալ են և

արդյունավետ, քանի որ դիմումատուն չի կարող երկարացնել Կոնվենցիայով նախատեսված խիստ ժամանակային սահմանափակումը՝ ներկայացնելով ոչ պատշաճ և անհասկանալի դիմումներ այն մարմիններին և հաստատություններին, որոնք չունեն իշխանություն և իրավասություն Կոնվենցիայի ներքո բերված բողոքի արդյունավետ լուծման համար (*Fernie v. the United Kingdom* (որոշում)):

73. Չպետք է հաշվի առնել այն միջոցները, որոնց օգտագործումը կախված է պետական պաշտոնյաների հայեցողությունից և որոնք, հետևաբար, ուղղակիորեն մատչելի չեն դիմումատուին: Նմանապես, հստակ ժամանակային սահմանափակումներ չունեցող միջոցները ստեղծում են անորոշություն և արժեզրկում են 35 § 1 հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետի պահպանման կանոնը (*Williams v. the United Kingdom* (որոշում)):

74. Որպես կանոն 35 § 1 հոդվածը չի պահանջում, որպեսզի դիմումատուները դիմեն վարույթների վերաբացման համար կամ օգտագործեն նույնանման արտակարգ միջոցներ, հետևաբար, այն չի թույլատրում երկարաձգել վեցամսյա ժամկետը այդպիսի միջոցների օգտագործման հիմքով (*Berdzenishvili v. Russia* (որոշում); *Tucka v. the United Kingdom (no. 1)* (որոշում)): Սակայն, եթե արտակարգ միջոցը դիմումատուի համար միակ հասանելի դատական միջոցն է, վեցամսյա ժամկետը կարող է հաշվվել այդ միջոցի վերաբերյալ որոշման կայացման օրվանից (*Ahtinen v. Finland* (որոշում)):

Այն գանգատները, որում դիմումատուները ներկայացրել են իրենց բողոքները վարույթները վերաբացելու մասին պահանջները մերժող որոշումներից սկսած վեցամսյա ընթացքում, անընդունելի են այն հիմքով, որ այդ որոշումները «վերջնական» չեն (*Sapeyan v. Armenia*, § 23):

Այն դեպքերում, երբ վարույթները վերաբացվել են կամ վերջնական որոշումը վերանայվել է, վեցամսյա ժամկետը, սկզբնական վարույթի կամ վերջնական որոշման առումով, ընդհատվում է միայն Կոնվենցիային վերաբերող այն հարցերի առնչությամբ, որոնք հիմք են ծառայել վերանայման կամ վերաբացման համար, և վերաքննիչ մարմնի կողմից իրականացվող ոչ սովորական քննության առարկա են հանդիսացել (նույն տեղում, § 24):

(բ) Մեկնարկային կետը

75. Վեցամսյա ժամկետը մեկնարկվում է դիմումատուի և/կամ նրա ներկայացուցչի կողմից ներպետական վերջնական որոշման մասին տեղեկանալու օրվանից (*Koç and Tosun v. Turkey** (որոշում)):

76. Քանի որ վեցամսյա ժամկետը չպահպանելու մասին հայտարարությունն անում է Պետությունը, ապա վերջինս պարտավոր է նշել այն ամսաթիվը, երբ դիմումատուն տեղեկացվել է վերջնական ներպետական որոշման մասին (*Şahmo v. Turkey** (որոշում)):

(գ) Որոշման ծանուցումը

77. Ծանուցում դիմումատուին. այն դեպքում, երբ համաձայն օրենքի

դիմումատուն իրավունք ունի անմիջապես ստանալ վերջնական ներպետական որոշման կրկնօրինակը, ապա Կոնվենցիայի 35 § 1 հոդվածի առարկան և նպատակը լավագույնս կհամարվեն պահպանված, եթե վեցամսյա ժամկետը հաշվարկվի որոշման կրկնօրինակը դիմումատուին հանձնելու օրվանից (*Worm v. Austria*, § 33):

78. Ծանուցում փաստաբանին. վեցամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է այն օրից, երբ դիմումատուի փաստաբանը տեղեկացվել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառող վերջնական որոշման մասին, անկախ այն փաստից, որ դիմումատուն որոշման մասին ավելի ուշ է տեղեկացվել (*Çelik v. Turkey* (որոշում)):

(դ) Որոշումը չձանուցելը

79. Այն դեպքում, երբ ներպետական իրավունքը չի կարգավորում որոշման ձանուցման հարցը, ապա որպես մեկնարկային կետ կարելի է դիտարկել որոշումը վերջնական դառնալու ամսաթիվը, այսինքն, երբ կողմերը միանշանակ տեղեկացել են որոշման բովանդակությունից (*Papachelas v. Greece* [ՄՊ], § 30):

80. Դիմումատուն կամ իր փաստաբանը պետք է պատշաճ աշխատասիրություն ցուցաբերեն դատարանի ռեգիստրում պահվող որոշման կրկնօրինակի ձեռք բերման համար (*Ölmez v. Turkey** (որոշում)):

(ե) Միջոցների բացակայությունը

81. Երբ ի սկզբանե պարզ է, որ դիմումատուն չունի իրավական պաշտպանության որևէ արդյունավետ միջոց, վեցամսյա ժամկետը հաշվարկվում է այն օրվանից, երբ բողոքարկված գործողությունը տեղի է ունեցել կամ երբ դիմումատուն ուղղակիորեն վնասվել է, կամ տեղեկացվել է այդպիսի գործողության կամ դրա բացասական հետևանքների մասին (*Dennis and Others v. the United Kingdom* (որոշում); *Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 157):

82. Երբ դիմումատուն օգտագործում է ակնհայտ առկա միջոց, և միայն հետագայում է տեղեկանում այն հանգամանքներին, որոնք միջոցը ոչ արդյունավետ են դարձնում, տեղին կլինի վեցամսյա ժամանակահատվածի սկիզբը դիտարկել այն օրը, երբ դիմումատուն տեղեկացել է կամ կարող էր տեղեկանալ այդ հանգամանքների մասին (*Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 158):

(զ) Վեցամսյա ժամկետի հաշվարկումը

83. Ժամկետի հաշվարկը սկսվում է վերջնական ներպետական որոշումը հրապարակավ հայտնելու օրվան հաջորդող օրից, կամ երբ դիմումատուն կամ իր ներկայացուցիչը տեղեկացել են որոշման մասին, և դադարում է վեց օրացույցային ամսից հետո՝ անկախ այդ օրացույցային ամիսների փաստացի տևողության (*Ottov. Germany* (որոշում)): Համապատասխանությունը վեցամսյա վերջնաժամկետի հետ որոշվում է՝ օգտագործելով Կոնվենցիայի, և ոչ յուրաքանչյուր պետության ներպետական օրենսդրության, հատուկ չափանիշները

(*Benet Praha, spol. s r.o. v. the Czech Republic* (որոշում); *Buyukdere and Others v. Turkey**, § 10):

84. Դատարանն ազատ է հաստատելու վեցամսյա ժամկետի լրանալու օրը, եթե այն տարբերվում է պատասխանող Պետության կողմից որոշված օրվանից (*İpek v. Turkey* (որոշում)):

(է) Շարունակական իրավիճակ

85. «Շարունակական իրավիճակ» հասկացությունը վերաբերում է այն դեպքերին, երբ դիմումատուները պետության կողմից կամ նրա անունից իրականացվող շարունակական գործողությունների արդյունքում հանդիսանում են տուժողներ: Հետագայում որևէ իրադրության լուրջ հետևանքների առաջացման փաստը չի նշանակում, որ գործունենք «շարունակական իրավիճակ»-ի հետ (*lordache v. Romania**, § 49):

86. Երբ ենթադրյալ խախտումը պարունակում է շարունակական իրավիճակ, որի դեմ առկա չէ որևէ ներպետական միջոց, վեցամսյա ժամկետը սկսվում է գործել շարունակական իրավիճակի ավարտից հետո (*Ülke v. Turkey** (որոշում)): Այնքան ժամանակ մինչև շարունակական իրավիճակը շարունակվում է, վեցամսյա կանոնը կիրառելի չէ (*lordache v. Romania**, § 50) տե՛ս, նաև, *Varnava and Others v. Turkey* [ՄՊ], §§ 161:

3. Գանգաղի ներկայացման ժամկետը²

(ա) Առաջին նամակը

87. Կոնվենցիոն ինստիտուտների պրակտիկայի և Դատարանի Կանոնագրքի 47 § 5-րդ Կանոնի համաձայն, գանգաղի ներկայացման օրը, որպես ընդհանուր կանոն, պետք է դիտարկվի դիմումատուի հետ առաջին, նույնիսկ համառոտ, հաղորդակցման օրը, այն պայմանով, որ պատշաճ կերպով լրացված գանգաղն ընդունվել է Դատարանի կողմից սահմանված ժամկետում (*Kemevuako v. the Netherlands* (որոշում)):

88. Որպես գանգաղի ներկայացման օր դիտարկվում է փոստային կնիքի ամսաթիվը, որն ամրագրում է գանգաղն ուղարկելու օրը, և ոչ թե գանգաղի վրա ստացման օրը դրոշմված ամսաթիվը (*Kipritci v. Turkey**, § 18): Հատուկ դեպքերում հնարավոր է այլ մոտեցում՝ *Bulinwar OOD and Hrusanov v. Bulgaria**, §§ 30:

(բ) Նամակը գրելու և փոստային ծառայության միջոցով առաքելու ժամկետների տարբերությունը

89. Նամակը գրելու և փոստային ծառայության միջոցով այն առաքելու ամսաթվերի միջև մեկից ավելի օրվա ինտերվալի վերաբերյալ բացատրության բացակայության դեպքում, առաքման ամսաթիվը կդիտարկվի որպես գանգաղի ներկայացման օրը (*Arslan v. Turkey* (որոշում); *Růžicková v. the Czech Republic**

2. Տե՛ս՝ Դատարանի Կանոնագիրքը և գանգաղ ներկայացնելու մասին գործնական ուղեցույցը:

(որոշում)):

Այս կանոնը կիրառելի է նաև գանգատի բնօրինակը սահմանված ութ շաբաթյա ժամկետում առաքելու նկատմամբ (*Kemevuako v. the Netherlands* (որոշում), § 24); և ֆաքսով ուղարկելու համար (*Otto v. Germany* (որոշում.)):

(զ) Ֆաքսով ուղարկելը

90. Բավարար չէ գանգատն ուղարկել միայն ֆաքսի միջոցով՝ Դատարանը պետք է սահմանված ժամկետի ընթացքում ստանա նաև բնօրինակը (*Kemevuako v. the Netherlands* (որոշում), §§ 22):

(դ) Առաջին հաղորդակցությունից հետո տրված ժամկետը

91. Այն դեպքում, երբ առաջին նամակից հետո, դիմումատուն, գործի դնելով Կոնվենցիոն մեխանիզմը, առանց բացատրության մատնվի անորոշ ժամկետով անգործության, կառաջանա վեցամսյա ժամկետի ոգու և նպատակի անհամապատասխանություն: Հետևաբար, դիմումատուները պետք է հետամուտ լինեն իրենց գանգատներին՝ ողջամիտ արագությամբ, ցանկացած նախնական հաղորդակցությունից հետո (*P.M. v. the United Kingdom* (որոշում)): Սահմանված ութշաբաթյա ժամկետի չպահպանումը (տե՛ս, Դատական Կանոնագրքի Կանոն 47 § 5-ը և գանգատ ներկայացնելու մասին գործնական ուղեցույցի 4-րդ պարբերությունը) Դատարանին թույլ կտա ներկայացման ժամկետը դիտարկել լրացված դիմումի ներկայացման օրը (*Kemevuako v. the Netherlands* (որոշում), §§ 22-24):

(ե) Գանգատի բովանդակությունը

92. Գանգատը բնութագրվում է ոչ միայն իրավական հիմքերով և փաստարկներով, այլ նաև այնտեղ նկարագրված ենթադրյալ փաստերով (*Scoppola v. Italy (no. 2)* [ՄՊ], § 54):

(զ) Հետագա բողոքներ

93. Եթե նախնական գանգատի մեջ որոշ բողոքներ չեն ընգրկվել, ապա վեցամսյա ժամկետի ընթացքը չի ընդհատվի մինչև այն օրը, երբ գանգատն առաջին անգամ կներկայացվի Կոնվենցիոն մարմին (*Allan v. the United Kingdom* (որոշում)):

94. Վեցամսյա ժամկետի ընթացքում ծագած բողոքները կարող են ընդունվել միայն, եթե դրանք սկզբնական գանգատին վերաբերող ասպեկտներն են (*Sâmbata Bihor Greco-Catholic Parish v. Romania** (որոշում)):

95. Դիմումատուի կողմից իր դիմումի մեջ 6-րդ հոդվածի զուտ վկայակոչումն առանց փաստական հիմքերի և խախտման բնույթի նկարագրման, բավարար չէ, որպեսզի Դատարանը համարի, որ մնացած բոլոր գանգատները ընկնում են այդ հոդվածին (*Allan v. the United Kingdom* (dec.); *Adam and Others v. Germany* (որոշում)):

96. Ներպետական վարույթների փաստաթղթերի տրամադրումը բավարար չէ ենթադրելու, որ դիմումատուն ներկայացրել է այդ վարույթների վրա հիմնված բոլոր հետագա բողոքները: Գանգատ ներկայացնելու և վեցամսյա ժամկետն ընդհատելու համար առնվազն համառոտ անհրաժեշտ է ներկայացնել Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների բնույթը (*Božinovski v. “the former Yugoslav Republic of Macedonia”* (որոշում)):

4. Օրինակներ

(ա) Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում ընթացակարգային պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետները

97. Մահվան դեպքում՝ դիմումատուի հարազատները պետք է ձեռնարկեն քայլեր՝ հետաքննության ընթացքը հետևելու համար: Արդյունավետ քրեական հետաքննության բացակայության դեպքում նրանք պետք է ողջամիտ արագությամբ ներկայացնեն գանգատ (*Varnava and Others v. Turkey* [ՄՊ], §§ 158 և 162):

98. Անհետացման դեպքերում՝ անհրաժեշտ է, որ անհետացած անձի հարազատները չափից ավելի չհետաձգեն հետաքննության անարդյունավետության կամ բացակայության մասին բողոքի ներկայացումը Դատարան: Անհետացումների դեպքում, դիմումատուները չեն կարող սպասել անորոշ ժամանակ՝ մինչև Ստրասբուրգ դիմելը: Նրանք պետք է ցուցաբերեն որոշակի չափով ջանասիրություն և նախաձեռնություն և ներկայացնեն իրենց բողոքներն առանց անհարկի հետաձգման (նույն տեղում [ՄՊ], § 165, և հետաձգման վերաբերյալ §§ 162-66):

բ) Վեցամսյա կանոնի կիրառման պայմանները Կոնվենցիայի 5 § 3 հոդվածի ներքո բազմակի անգամ կալանքի տակ դիմումատուին պահելու դեպքում

99. Բազմաթիվ և հաջորդական կալանքի ժամկետները պետք է հաշվի առնվեն որպես մեկ ընդհանուր ժամկետ: Վեցամսյա ժամկետը պետք է հաշվարկվի միայն վերջին կալանքի ժամկետի ավարտից հետո (*Solmaz v. Turkey*, § 36):

Գ. Անանուն գանգատ

Հոդված 35 § 2 (ա) Ընդունելիության չափանիշ
 «2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝
 (ա) անանուն է, ...»³

1. Անանուն գանգատ

100. Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան ներկայացրած գանգատը համարվում է անանուն, երբ գործում բացակայում է Դատարանի կողմից դիմումատուի անձը բացահայտելու որևէ փաստաթուղթ (*“Blondje” v. the*

Netherlands (որոշում)): Հարցաթերթիկներից և ներկայացված փաստաթղթերից որևէ մեկը չի պարունակում անվան հիշատակում, այլ միայն հղում և ծածկանուններ, և լիազորագիրը ստորագրված է «իքս» նշանով՝ դիմումատուի ինքնությունը չի բացահայտվում:

101. Գանգատը համարվել է անանուն, երբ ասոցիացիան անհայտ անձանց անունից ներկայացրել է գանգատ, որում վիճարկվել է չբացահայտված անձանց անձնական կյանքը հարգելու իրավունքի խախտում (*Federation of French Medical Trade Unions and the National Federation of Nurses v. France* (որոշում)):

2. Ոչ անանուն գանգատ

102. Չստորագրված դիմումը, որում ներկայացվել են դիմումատուի ինքնության վերաբերյալ որևէ կասկած չառաջացնող բոլոր անձնական տվյալները և այն ուղեկցվում է դիմումատուի ներկայացուցչի կողմից պատշաճ կերպով ստորագրված հաղորդակցություններով, չի համարվում անանուն (*Kuznetsova v. Russia* (որոշում)):

103. Կեղծ անուններով ներկայացված գանգատ. անձինք, որոնք օգտագործում են կեղծանուններ և Դատարանին բացատրում են, որ զինված հակամարտության պարագայում նրանք պարտավոր չեն բացահայտել իրենց իրական անունները՝ իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին պաշտպանելու նպատակով: Գտնելով, որ «հասկանալի պատճառներով իրենց իրական ինքնությունը թաքցնելու մարտավարության հետևում իրական մարդիկ են, որոնց կարելի է բացահայտել բավարար ակնարկներով, այլ ոչ իրենց անուններով...» և «դիմումատուները և քննարկվող իրադարձությունների միջև բավականին մոտ կապի առկայությունը», Դատարանը գանգատը չդիտարկեց որպես անանուն (*Shamayev and Others v. Georgia and Russia* (որոշում)), տե՛ս՝ նաև *Shamayev and Others v. Georgia and Russia*, § 275:

104. Եկեղեցական մարմնի կամ կրոնական ասոցիացիայի կողմից ներկայացված գանգատը, որոնց անդամների ինքնությունը չի բացահայտվել, չի մերժվել Դատարանի կողմից անանուն լինելու հիմքով (Կոնվենցիայի 9, 10 և 11 հոդվածներ), տե՛ս՝ *Omkarananda and the Divine Light Zentrum v. Switzerland* (որոշում):

Դ. Կրկնակի գանգատ

Հոդված 35 § 2 (բ) – Ընդունելիության չափանիշ

«2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

բ. ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է ... և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ... »³

105. Գանգատը դիտարկվում է որպես «ըստ էության նույնը», երբ ներկայացված բողոքներն ու փաստերը նույնական են (*Pauger v. Austria*

(որոշում); *Verein gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (no. 2)* [ՄՊ], § 63): Այս դեպքում գանգատը հայտարարվում է անընդունելի:

1. Միևնույն դիմումատուները

106. Գանգատները, որոնք վերաբերում են նույն առարկային, սակայն ներկայացվել են համատեղ, օրինակ՝ անհատների և ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Կոմիտեի հետ հաղորդակցության մեջ գտնվող ասոցիացիայի կողմից, չեն հանդիսանում գանգատներ, որոնք ներկայացվել են միևնույն դիմումատուների կողմից (*Folgerø and Others v. Norway* (որոշում)) կամ հասարակական կազմակերպության և դիմումատուների կողմից ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Գլխավոր Հանձնակատարի գրասենյակ ներկայացված հաղորդակցությունը՝ *Celniku v. Greece**, §§36-41: Նույնը կիրառվում է նաև հասարակական կազմակերպության և դիմումատուների կողմից Կամայական Կալանքի հարցերով աշխատանքային խմբին ներկայացված պահանջի նկատմամբ (*Illiu and Others v. Belgium** (որոշում)):

107. Կառավարության կողմից ներկայացված միջպետական գանգատը անհատ դիմումատուներին չի զրկում իրենց գանգատները ներկայացնելու կամ հետամուտ լինելու հնարավորությունից (*Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 118):

2. Նույնատիպ գանգատներ

108. Գանգատի բովանդակությունը բաղկացած է ներկայացված հայցի առարկայից և իրավական հիմքից:

Գանգատը բնութագրվում է դրանում ներկայացված ենթադրյալ փաստերով, և ոչ միայն վկայակոչված իրավական հիմքերով և փաստարկներով (*Guerra and Others v. Italy*, § 44; *Scoppola v. Italy (no. 2)* [ՄՊ], § 54; և *Previti v. Italy** (որոշում), § 293):

109. Դատարանն ուսումնասիրում է յուրաքանչյուր բողոք առանձին: Միայն քննված այլ գանգատներին էականապես նման բողոքները կմերժվեն հոդված 35 § 2-ի հիմքով (*Dinç v. Turkey** (որոշում)):

110. Դատարանը գանգատը կհայտարարի անընդունելի այն դեպքում, երբ դիմումատուն կրկին անգամ այտեղ ներկայացնի այն բողոքները, որոնք բարձրացվել են այլ գանգատում (*X v. Federal Republic of Germany** (որոշում); *Duclos v. France** (որոշում); *Clinique Mozart Sarl v. France** (որոշում); *Rupa v. Romania** (որոշում), § 52; և *Coscodar v. Romania** (որոշում), §27):

111. Եթե առարկան վերաբերում է նույն բնակարանային բլոկի տարբեր բնակարաններին և տարբեր վարձակալներին, նոր գանգատը, որը բարձրացնում է նախկինում անընդունելի ճանաչված նույն հարցերը, նույն դիմումատուի կողմից և կրկնում է նախկինում ձևակերպված, առանց որևէ նոր ապացույց ներառող բողոքներ, փաստորեն էականորեն նույնն է ինչ սկզբնական գանգատը, հետևաբար, Դատարանը կհայտարարի այն անընդունելի (*X v. Federal Republic of Germany** (որոշում)):

112. Էապես ոչ նմանատիպ գանգատների օրինակներ.

- ոստիկանության բաժանմունքում դիմումատուի կալանքի պայմանների վերաբերյալ վեճը նույնը չէ, ինչ Ազգային Անվտանգության Դատարանի կողմից դատապարտվելը կամ դիմումատուի կողմից անդամակցվող կուսակցության լուծարման արդյունքում խորհրդարանական գրասենյակի գույքի բռնագանձմանը վերաբերող վեճերը (*Sadak v. Turkey**, §§ 32-33);
- ոստիկանության բաժանմունքում դիմումատուի կալանքի պայմանների վերաբերյալ վեճը և Ազգային Անվտանգության Դատարանի կողմից դատապարտվելը նույնը չի ինչ խորհրդարանական գրասենյակի գույքի բռնագանձումը (*Yurttas v. Turkey**, §§ 36-37):

113. Դատարանն իրավասու է օրենքի շրջանակներում տալ փաստերի նկարագիր, այն սահմանափակված չէ դիմումատուների կամ կառավարության կողմից ներկայացված տեքստերով: Համապատասխանաբար, Կոնվենցիայի տարբեր դրույթների ներքո վերաքննության նպատակով ներկայացված գանգատի փաստերը, որոնք ի սկզբանե այլ գանգատի հիմքում են դրվել, վերաբերում են միևնույն գանգատին և, հետևաբար, պետք է մերժվեն որպես անընդունելի (*Previti v. Italy** (որոշում), §§ 293-94):

3. Նույնատիպ փաստեր

114. Այն փաստը, որ բողոքը նույնական է մեկ այլ բողոքի հետ, ինքնին չի կանխում, որ գանգատն ընդունելի հայտարարվի, եթե ներկայացվել է նոր տեղեկություն:

115. Նոր տեղեկության դեպքում գանգատը չի լինի էականորեն նույնը՝ ինչ նախորդ գանգատը, տե՛ս՝ *Chappex v. Switzerland** (որոշում), և *Patera v. the Czech Republic** (որոշում) (այլ միջազգային մարմին ներկայացված ենթադրվող փաստերի վերաբերյալ բողոքներն անընդունելի են, բայց հետագայում առաջացող փաստերի վերաբերյալ նոր տեղեկությունն ընդունելի է):

116. Հակառակ դեպքում գանգատը կհայտարարվի անընդունելի (*Hokkanen v. Finland* (որոշում); *Adesina v. France* (որոշում); *Bernardet v. France** (որոշում); *Gennari v. Italy** (որոշում); և *Manuel v. Portugal** (որոշում)):

Ե. Այլ միջազգային մարմին ներկայացրած գանգատ

Հոդված 35 § 2 (բ). Ընդունելիության չափանիշ

«2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

բ. ըստ էության այն նույն հարցն է, ... որն արդեն հանձնվել է միջազգային քննության կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ... »⁴

117. Սույն դրույթի նպատակն է խուսափել նույն գործերին վերաբերող միջազգային վարույթների բազմազանությունից:

118. Ստորև պարբերությունում սահմանված ընդունելիության պայմաններն ընդհանուր են.

- գանգատը չպետք է լինի այլ գանգատի հետ էականորեն նույնը՝ փաստերը, կողմերը և բողոքները չպետք է լինեն նույնը (տե՛ս՝ ս՝ կրկնակի գանգատները),
- գանգատը չպետք է արդեն ներկայացված լինի միջազգային քննության կամ կարգավորման:

119. Եթե գործի քննության ընթացքում Դատարանը պարզի, որ հոդված 35 § 2 (բ)-ի պայմանները բավարարված են ըստ էության որոշման ուժով, այն պետք է գանգատը հայտարարի անընդունելի, քանի որ այն արդեն քննվել է այլ միջազգային մարմնի կողմից:

120. Հոդված 35 § 2 (բ)-ի շրջանակներում ընդգրկվելու համար, քննարկվող գործը պետք է ներկայացնի այնպիսի հատկանիշներ, որոնք թույլ կտան դիտարկվել այն որպես հոդված 34-ի իմաստով անհատական գանգատ:

1. Ընթացակարգի հասկացությունը

(ա) Ընթացակարգը պետք է լինի հրապարակային

118. Միջխորհրդարանական Միության Մարդու Իրավունքների Կոմիտեն, որը մասնավոր ասոցիացիա է, իրենից ներկայացնում է ոչ պետական կազմակերպություն, մինչդեռ Կոնվենցիայի 27-րդ հոդվածը (ներկայումս հոդված 35§2) վերաբերում է միջկառավարական ինստիտուտներին և ընթացակարգերին (*Lukanov v. Bulgaria* (որոշում)):

(բ) Ընթացակարգը պետք է լինի միջազգային

122. Բոսնիայի և Հերցեգովինայի Մարդու Իրավունքների Պալատը միջազգային դատավարության ատյան չէ, անկախ այն բանից, որ ստեղծվել է միջազգային պայմանագրի հիման վրա և որոշ անդամներ միջազգային մարմիններ են (*Jeličić v. Bosnia and Herzegovina* (որոշում)):

(գ) Ընթացակարգը պետք է լինի անկախ

123. Որպես օրինակ հանդիսանում է Կամայական Կալանքի հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը, քանի որ այն կազմված է անկախ փորձագետներից, որոնք մարդու իրավունքների ոլորտում մասնագիտացված նշանավոր անձինք են (*Peraldi v. France** (որոշում)):

124. Միաժամանակ, ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Կոմիտեի «1503 ընթացակարգ»-ն ըստ էության միջկառավարական գերատեսչություն է, որը կազմված է պետության ներկայացուցիչներից: Այն «միջազգային վարույթի այլ ընթացակարգ» չէ (*Mikolenko v. Estonia* (որոշում)):

(դ) Ընթացակարգը պետք է լինի անաչառ

125. Գանգատը պետք է ներկայացնել դատական կամ քվազի-դատական մարմինին (*Zagaria v. Italy** (որոշում)):

126. Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական Կոմիտեն (ԽԿԿ), ում դերը խախտումների կանխումն է, այսպիսի մարմին չէ: ԽԿԿ-ի կողմից հավաքված տեղեկատվությունը գաղտնի բնույթ ունի: Անձինք իրավունք չունեն մասնակցելու դատավարությանը կամ տեղեկանալու առաջարկություններին, որոնք կարող են ընդունվել կոմիտեի կողմից, մինչև դրանց հրապարակային դառնալը (*Zagaria v. Italy** (որոշում); *Annunziata v. Italy** (որոշում); *Genovese v. Italy** (որոշում); և *Stolder v. Italy**, §§ 16-19):

2. Ընթացակարգային երաշխիքներ

(ա) Մրցակցային վարույթներ

119. Մարդու իրավունքների Գերագույն Հանձնակատարի հետ 1503 ընթացակարգի համաձայն հաղորդակցված անձինք չեն կարող մասնակցել այն ընթացակարգին, որը գաղտնի է: Նրանք տեղեկացված չեն ՄԱԿ-ի կողմից ձեռնարկվող միջոցառումներին, մինչև դրանց հրապարակային դառնալը: Այս ընթացակարգը, հետևաբար, չի կարող դիտարկվել 34-րդ հոդվածի իմաստով անհատական գանգատարկման այլ ընթացակարգին համարժեք (*Celniku v. Greece**, §§ 39-41):

(բ) Դատական մարմինն ներկայացվող պահանջներ

120. Դատավարության ընթացքում ընդունված որոշումները պետք է լինեն պատճառաբանված, ծանուցվեն կողմերին և հրապարակվեն (*Peraldi v. France** (որոշում)):

3. Դատավարության դերը

121. Կանխարգելող դեր ունեցող մարմինը չի կարող դիտարկվել որպես միջազգային ատյան (*Zagaria v. Italy** (որոշում); *De Pace v. Italy**; կամ *Gallo v. Italy** (որոշում) (ԽԿԿ-ի վերաբերյալ)): Բացի այդ, այս մարմնի կողմից համախմբած տեղեկատվությունը գաղտնի է; անձինք իրավունք չունեն մասնակցելու վարույթներին կամ տեղեկանալու առաջարկություններին, որոնք կարող են ընդունվել կոմիտեի կողմից, մինչև դրանց հրապարակային դառնալը:

122. Սա վերաբերում է նաև ընդհանուր իրավիճակը քննող մարմնին (*Mikolenko v. Estonia* (որոշում)) կամ ձերբակալվածների իրավունքների վերաբերյալ զեկույց կազմելու նպատակով նշանակված հատուկ զեկուցողին (*Yağmurdereli v. Turkey** (որոշում)):

Անհատի կողմից Եվրոպական Հանձնաժողովին ներկայացված գանգատն

անդամ պետության օրենսդրության կամ պրակտիկայի դեմ չի հանդիսանում միջազգային դատավարության կամ կարգավորման ընթացակարգ: Այն Հանձնաժողովին հնարավորություն է տալիս նախաձեռնել «խախտման առնչությամբ վարույթներ» կամ «մինչդատական վարույթներ», որոնց միակ նպատակն է պարտադրել անդամ պետությանը կամավոր համապատասխանելու Եվրոպական Միության օրենքի պահանջներին: Նման բնույթի բողոքը չի կարող դասվել Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված անհատական գանգատների շարքին՝ ելնելով ընթացակարգային հիմունքներից և հնարավոր հետևանքներից: Համապատասխանաբար, Հանձնաժողովի ընթացակարգը չի դասվում «միջազգային դատավարության և կարգավորման» շարքին (*Karoussiotis v. Portugal*^{*}, §§ 62-77):

(ա) Ընթացակարգը պետք է սահմանի պարտականություններ

123. Սա չի տարածվում՝

- Կիպրոսի Անհետացած Անձանց Հանձնաժողովի գործունեության վրա, քանի որ Թուրքիան այդ հանձնաժողովին ներկայացված դատավարության մասնակից չէ, և հանձնաժողովն իրավասու չէ սահմանել պատասխանատվություն անհայտ կորած անձանց մահվան դեպքում (*Varnava and Others v. Turkey* (որոշում));
- ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Հանձնաժողովի Հարկադրված կամ Ոչ ինքնակամ Անհետացումների հարցերով Աշխատանքային Խմբի գործունեության վրա, քանի որ այն իրավասու չէ սահմանել պատասխանատվություն անհայտ կորած անձանց մահվան դեպքում կամ անհետացման կապակցությամբ կայացնել որոշումներ (*Malsagova and Others v. Russia*^{*} (որոշում)):

124. Սակայն, Կամայական Կալանքների հարցերով Աշխատանքային Խումբը, որը կարող է կամայական կալանքներին վերաբերվող հարցերով պետության համար պատասխանատվություն սահմանող առաջարկություններ անել, կարող է դիտարկվել որպես միջազգային դատավարության ընթացակարգ (*Peraldi v. France*^{*} (որոշում)):

(բ) Ընթացակարգի նպատակը պետք է լինի խախտումների դադարեցումը

125. Կառավարություններին ներկայացվող Կամայական Կալանքի հարցերով Աշխատանքային Խմբի առաջարկությունների նպատակն է դադարեցնել այն իրավիճակները, որոնց առնչությամբ բողոքներ են ներկայացվել (*Peraldi v. France*^{*} (որոշում); *Illiu and Others v. Belgium*^{*} (որոշում)):

134. Խախտման տուժողները պետք է կարողանան փոխհատուցում ստանալ: Սա չի տարածվում ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների (*Mikolenko v. Estonia* (որոշում)) կամ Հարկադիր կամ Ոչ ինքնակամ Անհետացումների հարցերով Մարդու Իրավունքների Աշխատանքային Խմբի գործունեության վրա (*Malsagova and Others v. Russia* (որոշում)):

(գ) Ընթացակարգի արդյունավետությունը

126. Որոշումը պետք է հրապարակվի. անձինք իրավունք չունեն տեղեկացվելու ԽԿԿ-ի առաջարկությունների մասին, մինչ դրանց հրապարակումը (*Zagaria v. Italy** (որոշում), և *De Pace v. Italy**):

127. ՄԱԿ-ի Կամայական Կալանքի հարցերով Աշխատանքային Խմբին ներկայացված ընթացակարգի համաձայն, կառավարությունների կողմից ներկայացված կարծիքներն ու առաջարկությունները կարող են ընդգրկվել Մարդու Իրավունքների Հանձնաժողովի տարեկան զեկույցում, որը, այնուհետև, կարող է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեային առաջարկություններ ներկայացնել. հնարավոր հետևանքներով պայմանավորված՝ այս ընթացակարգը կարող է դիտարկվել որպես անհատական գանգատարկման ընթացակարգ (*Peraldi v. France** (որոշում)):

128. Այսպիսով, ստորև օրինակները կարող են դիտարկվել որպես «այլ միջազգային ընթացակարգ».

- ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Կոմիտե (*Calcerrada Fornieles and Cabeza Mato v. Spain* (որոշում); *Pauger v. Austria* (որոշում); և *C.W. v. Finland* (որոշում));
- Աշխատանքի Միջազգային Կազմակերպության Միավորման Ազատության Կոմիտե (*Cereceda Martín and Others v. Spain* (որոշում));
- ՄԱԿ-ի Կամայական Կալանքի հարցերով Աշխատանքային Խումբ (*Peraldi v. France** (որոշում)):

2. Գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում

Հոդված 35 § 3 (ա). Ընդունելիության չափանիշ
 «3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է որ.
 (ա) ... գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում է...»

1. Ընդհանուր սահմանում

129. Հոդված 35 § 3 (ա)-ով սահմանված «չարաշահում» հասկացությունը պետք է ընկալվի ընդհանուր իրավական տեսության համաձայն իր սովորական իմաստով, այսինքն, ելնելով այն նպատակներից, որոնց համար այն կազմվել է: Համապատասխանաբար, դիմումատուի ցանկացած վարքագիծ, որը Կոնվենցիայով նախատեսված անհատական գանգատի իրավունքի նպատակին ակնհայտորեն հակասող է և խոչնդոտում է Դատարանի պատշաճ գործունեությունը կամ վարույթների պատշաճ անցկացումը, հանդիսանում է գանգատի իրավունքի չարաշահում (*Miroļubovs and Others v. Latvia**, §§ 62 և 65):

139. Տեխնիկական տեսանկյունից, հոդված 35 § 3 (ա) ձևակերպումից պարզ է, որ իրավունքի չարաշահումով ներկայացված գանգատը պետք է հայտարարվի անընդունելի, այլ ոչ թե դուրս հանվի գործերի ցուցակից: Իրապես, Դատարանը շեշտել է, որ իրավունքի չարաշահման հիմքով գանգատի մերժումը բացառիկ

միջոց է (*Miroļubovs and Others v. Latvia**, § 62): Այն գործերը, որտեղ Դատարանը գտել է գանգատի իրավունքի չարաշահում, կարող են խմբավորվել հինգ բնորոշ կատեգորիաներում՝ ապակողմնորոշող տեղեկատվություն, վիրավորական բառերի օգտագործում, հաշտության կարգավորման ընթացակարգի գաղտնիության սկզբունքի խախտում, ակնհայտորեն դատամուլական կամ անհիմն բողոք, և բոլոր մյուս գործերը, որոնք սպառնիչ չի կարելի թվարկել:

2. Դատարանին ապակողմնորոշելը

130. Գանգատի իրավունքը չարաշահվել է, եթե այն գիտակցաբար հիմնված է սխալ տվյալների վրա՝ նպատակ ունենալով մոլորեցնել Դատարարին (*Varbanov v. Bulgaria*, § 36): Այսպիսի չարաշահումների ամենալուրջ և ակնհայտ օրինակներն են, առաջին հերթին՝ գանգատի ներկայացումը կեղծ ինքնությամբ (*Drijfhout v. the Netherlands* (որոշում), §§ 27-29), և երկրորդ հերթին՝ Դատարան ուղարկվող փաստաթղթերի կեղծումը (*Jian v. Romania** (որոշում); *Bagheri and Maliki v. the Netherlands* (որոշում); և *Poznanski and Others v. Germany* (որոշում)): Այսպիսի չարաշահումը կարող է նաև կատարվել անփութությամբ, երբ դիմումատուն ի սկզբանե ձախողում է Դատարանին ներկայացնել գործի քննության համար կարևոր տեղեկություն (*Al-Nashif v. Bulgaria*, § 89, և *Kerechashvili v. Georgia* (որոշում)): Գանգատը կարող է մերժվել իրավունքի չարաշահման հիմքով այն դեպքում, երբ Դատարանում իրականացվող վարույթի ընթացքում նոր կարևոր զարգացումներ են տեղի ունենում, սակայն դիմումատուն ձախողում է Դատարանին բացահայտել այդ տեղեկատվությունը՝ խոչընդոտելով Դատարանի կողմից փաստերի ամբողջական իմացությամբ գործը լուծելու հնարավորությանը (մինչդեռ Կանոնագրքի համաձայն դիմումատուն տեղեկացվել էր իր այդ պարտավորության մասին) (*Hadrabová and Others v. the Czech Republic** (որոշում), և *Predescu v. Romania*, §§ 25-27):

141. Դատարանին ապակողմնորոշելու մտադրությունը միշտ պետք է հաստատվի բավարար հստակությամբ (*Melnik v. Ukraine*, §§ 58-60; *Nold v. Germany*, § 87; և *Miszczynski v. Poland* (որոշում)):

3. Վիրավորանք

131. Գանգատի իրավունքի չարաշահում կհամարվի, երբ դիմումատուն, Դատարանի հետ հաղորդակցության ժամանակ օգտագործել է անհարգալից, վիրավորական, սպառնացող կամ սադրիչ լեզու, անկախ այն բանից, թե դա ուղղված է պատասխանող կառավարությանը, իր գործակալին, պատասխանող պետության մարմիններին, ուղղակի Դատարանին, դատավորներին, Ռեգիստրին կամ դրա անդամներին (*Řehák v. the Czech Republic* (որոշում); *Duringer and Grunge v. France* (որոշում); և *Stamoulakatos v. the United Kingdom* (որոշում)):

143. Բավական չէ, որպեսզի դիմումատուի տեքստը լինի վիրավորող, բանավիճող կամ հեգնական, այն պետք է գերազանցի «նորմալ, քաղաքակիրթ և օրինական քննադատության սահմանները»՝ վիրավորական համարվելու համար

(*Di Salvo v. Italy** (որոշում); հակառակ օրինակի համար, տե՛ս, *Aleksanyan v. Russia*, §§ 116-18): Եթե, վարույթների ընթացքում, դիմումատուն դադարում է օգտագործել վիրավորական արտահայտություններ Դատարանի պաշտոնական նախազգուշացումից հետո, հստակորեն վերացնում է դրանք, կամ որպես առավել ընդունելի տարբերակ, ներողություն հայցում, գանգատն այլևս չի մերժվի իրավունքի չարաշահման հիմքով (*Chernitsyn v. Russia*, §§ 25-28):

4. Բարեկամական կարգավորման ընթացակարգի գաղտնիության սկզբունքի խախտումը

132. Դիմումատուի կողմից հարցի բարեկամական կարգավորման ընթացակարգի գաղտնիության պահպանման պարտականության կանխամտածված խախտումը, որը կողմերին պարտադրվել է Կոնվենցիայի 39§2 հոդվածով և Դատարանի Կանոնագրքի 62§2 կանոնով, կարող է դիտարկվել որպես գանգատի իրավունքի խախտում և հանդիսանալ գանգատի մերժման հիմք (*Miroļubovs and Others v. Latvia**, § 66; *Hadrabová and Others v. the Czech Republic* (որոշում); և *Popov v. Moldova*, § 48):

145. Որոշելու համար, թե արդյոք դիմումատուն խախտել է գաղտնիության պահպանման պարտականությունը, պետք է նախ և առաջ որոշել պարտականության սահմանները: Այն պետք է միշտ մեկնաբանվի ընդհանուր նպատակի հիման վրա՝ մասնավորապես, նպաստի հաշտության կնքմանը՝ հնարավոր ճնշումից պաշտպանելով կողմերին և Դատարանին: Համապատասխանաբար, քանի որ հաշտության համաձայնագրին վերաբերող փաստաթղթերի բովանդակության վերաբերյալ երրորդ կողմի հետ կապը տեսականորեն կարող է դասվել Կոնվենցիայի 35 § 3 (ա) հոդվածով սահմանված գանգատի իրավունքի չարաշահմանը, դա չի նշանակում, որ առկա է բացարձակ և անվերապահ արգելք այսպիսի փաստաթղթերը որևէ երրորդ կողմի ցուցադրելու կամ դրա մասին խոսելու համար: Նման լայն և կոշտ մեկնաբանությունը դիսկի կենթարկի դիմումատուի օրինական շահերի պաշտպանությունը, օրինակ, երբ պաշտպանը ձգտի տեղեկացված լինել այն դեպքի մասին, որտեղ նա լիազորված է իրականացնել ներկայացուցչություն Դատարանում: Ավելին, Դատարանի համար շատ դժվար կլինի, եթե ոչ անհնար, վերահսկել այսպիսի արգելքի համապատասխանությունը: Կոնվենցիայի 39 § 2 հոդվածը և Դատարանի Կանոնագրքի 62 § 2 կանոնն արգելում են կողմերին հրապարակել քննարկվող տեղեկությունները, օրինակ ՁԼՄ-ի միջոցով, մեծ քանակությամբ անձանց կողմից կարդալու հնարավորություն ունեցող նամակագրությամբ, կամ մեկ այլ ձևով (*Miroļubovs and Others v. Latvia**, § 68): Հետևաբար, սա այնպիսի վարքագիծ է, որը կհանգեցնի լուրջ հետևանքի՝ գանգատի իրավունքի խախտմանը:

146. Գանգատի իրավունքի չարաշահում հանդիսանալու համար, պարտադիր է, որ գաղտնի տեղեկատվության բացահայտումը լինի կանխամտածված: Դիմումատուի ուղղակի դիտավորությունը բացահայտման մեջ պետք է միշտ սահմանվի բավարար հստակությամբ, լոկ կասկածը բավական չէ (*ibid.*, § 66 *in*

fine): Այս սկզբունքի կիրառման մասին կոնկրետ օրինակների համար, տե՛ս, օրինակ, *Hadrabová and Others v. the Czech Republic* (որոշում) գործը, որտեղ գանգատը մերժվել է, քանի որ դիմումատուները բացահայտորեն մեջբերել են հաշտության համաձայնագրերում Դատարանի Ռեզիստի կողմից իրենց երկրի Արդարադատության նախարարության հետ համապատասխանեցրած առաջարկները, որն էլ հանդիսացել է իրենց գանգատի մերժման հիմք; տե՛ս նաև *Mirojubovs and Others v. Latvia** գործը, որտեղ գանգատը ճանաչվել է անընդունելի, քանի որ հստակ սահմանված չի եղել, որ բոլոր երեք դիմումատուները պատասխանատու են եղել գաղտնի տեղեկատվության բացահայտման համար, արդյունքը՝ Դատարանի կողմից կառավարության նախնական առարկության մերժում:

5. Ակնհայտորեն անհարգալից կամ զուրկ որևէ իրական նպատակից գանգատ

133. Դիմումատուն չարաշահում է գանգատի իրավունքը, եթե նա անդադար ներկայացնում է անհարգալից և ակնհայտորեն անհիմն գանգատներ Դատարանին, որոնք նույնական են այն գանգատին, որն անցյալում ներկայացվել է և հայտարարվել է անընդունելի (*M. v. the United Kingdom* (որոշում), և *Philis v. Greece* (որոշում)):

148. Դատարանը կարող է նաև գանգատի իրավունքի չարաշահում գտնել այն դեպքում, երբ գանգատն ակնհայտորեն չունի որևէ իրական նպատակ և/կամ վերաբերում է մանր գումարի: *Bock v. Germany* (որոշում) գործում դիմումատուն բողոքել էր այն քաղաքացիական վարույթների երկարատևության վերաբերյալ, որոնք հարուցվել էին նրա բժշկի կողմից նշանակված 7.99 եվրո արժողությամբ դիետիկ հավելումը փոխհատուցելու համար: Դատարանը ծանրաբեռնված է շատ մեծ քանակությամբ ընթացիկ գանգատներով մարդու իրավունքների լուրջ հարցերի վերաբերյալ, և առկա է անհամամասնություն փաստերի առօրեականության և Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգի արդյունավետության միջև՝ հաշվի առնելով գումարի աննշան լինելու հանգամանքը (ինչպես նաև դիմումատուի աշխատավարձի հետ համեմատությունը) և այն փաստը, որ վարույթները վերաբերում էին ոչ թե դեղագործական արտադրանքին, այլ դիետիկ հավելումներին: Այն նաև նշեց, որ այսպիսի վարույթները նպաստում են ներպետական մակարդակում դատարանների գերզբաղվածությանը և, հետևաբար, հանդիսանում են վարույթների չափից ավելի երկարատևության պատճառներից մեկը: Հետևաբար, գանգատը մերժվեց իրավունքի չարաշահման հիմքով: 2010թ.-ի հունիսի 1-ին Թիվ 14 Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո, այս տեսակի գանգատներն ավելի հեշտությամբ լուծվում են Կոնվենցիայի հոդված 35 § 3 (բ)-ի շրջանակներում (ոչ էական վնաս):

6. Այլ գործեր

134. Երբեմն Դատարանի վճիռները և որոշումները, և վարույթում գտնվող գործերը, օգտագործվում են Անդամ Պետություններում ազգային մակարդակով քաղաքական ելույթների նպատակով: Հրապարակայնության և քարոզչության ցանկությամբ ներշնչված գանգատը, միայն այս պատճառով, չի կարող հանդիսանալ գանգատի իրավունքի չարաշահում (*McFeeley and Others v. the United Kingdom* (որոշում), ինչպես նաև՝ *Khadzhiyev and Others v. Russia*, §§ 66-67): Այնուամենայնիվ, չարաշահում կարող է լինել, եթե դիմումատուն՝ քաղաքական շահերից դրդված, հարցազրույցներ է տալիս մամուլին կամ հեռուստատեսությանը, որտեղ նա ցուցաբերում է Դատարանում ընթացքի մեջ գտնվող գործերի նկատմամբ անպատասխանատու և մակերեսային վերաբերմունք (*Georgian Labour Party v. Georgia*):

7. Պատասխանող պետության մոտեցումը

135. Եթե Պատասխանող պետությունը գտնում է, որ դիմումատուն չարաշահել է գանգատի իրավունքը, այն պետք է դրա մասին համապատասխանաբար տեղեկացնի Դատարանին և նրա ուշադրությանը ներկայացնի իր տնօրինած տեղեկատվությունը, որպեսզի Դատարանը կարողանա անել համապատասխան հետևություններ: Դատարանը, այլ ոչ Պատասխանող պետությունն է, որ պետք է վերահսկի Կոնվենցիայով և իր Կանոններով դիմումատուի վրա դրված ընթացակարգային պարտավորությունների կատարումը: Այնուամենայնիվ, Կառավարության և իր մարմինների կողմից սպառնալիքները՝ քրեական կամ կարգապահական վարույթներ ներկայացնել դիմումատուի դեմ՝ Դատարանի առաջ Կոնվենցիայի 34-րդ հոդվածով ներկայացված իրենց ընթացակարգային պարտավորությունների ենթադրյալ խախտման համար, կանխում է անհատական գանգատի իրավունքի արդյունավետ իրավանցման նկատմամբ ցանկացած միջամտություն (*Miroļubovs and Others v. Latvia*^{*}, § 70):

II. ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆ

Ա. Անհամատեղելիությունը՝ *ratione personae*

Հոդված 35 § 3 (ա) Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է որ.

ա. այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ»:

Հոդված 32 Դատարանի իրավասությունը

«1. Դատարանի իրավասությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33, 34, 46 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավասության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը»:

1. Սկզբունքները

136. *Ratione personae* պահանջում է, որ Կոնվենցիայի ենթադրյալ խախտումը կատարվի Անդամ Պետության կողմից կամ որևէ կերպ վերաբերի դրան:

137. Նույնիսկ, եթե Պատասխանող պետությունը չի բարձրացնում ոչ մի առարկության Դատարանի *ratione personae* իրավասության հարցի վերաբերյալ, այն քննարկվում է Դատարանի կողմից իր սեփական նախաձեռնությամբ (*Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina* [ՄՊ], § 27):

138. Մարդու իրավունքներին առնչվող միջազգային պայմանագրերի կողմից պաշտպանված հիմնական իրավունքները պետք է ապահովեն անվտանգություն այն ֆիզիկական անձանց համար, ովքեր բնակվում են տվյալ պետության տարածքում (անկախ դրա հետագա անկմանը կամ իրավահաջորդությանը) (*Bijelić v. Montenegro and Serbia*, § 69):

154. Պետությունը չի կրում Կոնվենցիայով նախատեսված պարտականություններ այն պետական սեփականություն հանդիսացող ընկերության գործողությունների համար, որը պետությունից ունի բավարար չափով ինստիտուցիոնալ և գործառնական անկախություն (*Mykhaylenky and Others v. Ukraine*, §§ 43-45, և *Cooperativa Agricola Slobozia-Hanesei v. Moldova*, § 19):

155. Գանգատները Կոնվենցիայի հետ անհամատեղելի կհայտարարվեն հետևյալ հիմքերով.

– եթե դիմումատուն չունի իրավունակություն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով (*Municipal Section of Antilly v. France* (որոշում), *Döşemealti Belediyesi v. Turkey** (որոշում), և *Moretti and Benedetti v. Italy**),

- եթե դիմումատուն ի վիճակի չէ հաստատել ենթադրյալ խախտման զոհի իր կարգավիճակը,
- եթե գանգատը ներկայացվել է անհատի դեմ (*X v. the United Kingdom* (որոշում), և *Durini v. Italy* (որոշում)),
- եթե գանգատը ներկայացվել է այն պետության դեմ, որը չի վավերացրել Կոնվենցիան (*E.S. v. Federal Republic of Germany* (որոշում)), կամ ուղղակի ներկայացվել է միջազգային կազմակերպության դեմ, որը չի միացել Կոնվենցիային (*Stephens v. Cyprus, Turkey and the United Nations* (որոշում), վերջին կետ);
- եթե գանգատը վերաբերում է Կոնվենցիայի այն Արձանագրությանը, որը Պատասխանող պետությունը չի վավերացրել (*Horsham v. the United Kingdom* (որոշում), և *De Saedeleer v. Belgium**, § 68):

2. Իրավասությունը

139. *Ratione loci* իրավասության բացակայությունը չի արգելում Դատարանին քննել, Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով դիմումատուների մեկ կամ ավելի Անդամ Պետությունների իրավասության տակ գտնվելու հարցը (*Drozd and Janousek v. France and Spain*, § 90): Ուստի, այն դիտարկումը, որ դիմումատուները Պատասխանող Պետության իրավասության տակ չեն մտնում, կարող է ներկայացվել գանգատում որպես *ratione personae* անհամատեղելի Կոնվենցիայի հետ (տե՛ս պատասխանող կառավարությունների պնդումները՝ *Banković and Others v. Belgium and 16 Other Contracting States* (որոշում) [ՄՊ], § 35, *Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], § 300, և *Weber and Saravia v. Germany* (որոշում)):

157. Կոնվենցիայի հետ *ratione personae* համատեղելիությունը լրացուցիչ պահանջում է, որ ենթադրյալ խախտումները վերաբերելի լինեն Անդամ Պետությանը (*Gentilhomme, Schaff-Benhadj and Zerouki v. France**, §20): Սակայն, վերջին գործերում վերաբերելիություն / պատասխանատվություն հարցերը քննարկվել են՝ առանց ակնհայտորեն վկայակոչելով *ratione personae* համատեղելիությունը (*Assanidze v. Georgia* [ՄՊ], §§ 144 et seq. *Hussein v. Albania and 20 Other Contracting States* (որոշում), *Isaak and Others v. Turkey* (որոշում), և *Stephens v. Malta (no. 1)*, § 45):

3. Պատասխանատվություն և վերաբերելիություն

140. Պետությունները կարող են պատասխանատու լինել իրենց իշխանությունների գործողությունների համար, որոնք կատարվում են ինչպես ներպետական սահմաններում, այնպես էլ դրանցից դուրս, որոնք առաջացնում են սեփական տարածքից դուրս հետևանքներ (*Drozd and Janousek v. France and Spain*, § 91, *Soering v. the United Kingdom*, §§ 86 և 91, և *Loizidou v. Turkey* (նախնական առարկություններ), § 62): Սակայն, դա բացառիկ երևույթ է (*Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], § 314, և *Banković and Others v. Belgium*

and 16 Other Contracting States (որոշում) [ՄՊ], §71), մասնավորապես, երբ Անդամ Պետությունն ունի ազդեցիկ վերահսկողություն կամ նվազագույնը՝ վճռորոշ ազդեցություն տվյալ տարածքի վրա (*Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], §§ 314-16 and 392, *Medvedyev and Others v. France* [ՄՊ], §§ 63-64, և «ընդհանուր վերահսկողության» գաղափարը՝ *Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], §§ 315-16, տե՛ս նաև *Banković and Others v. Belgium and 16 Other Contracting States* [ՄՊ] (որոշում), §§ 67 և այլն, և §§ 79-82, *Cyprus v. Turkey* [ՄՊ], §§ 75-81, *Loizidou v. Turkey* (նախնական առարկություններ), § 52, և *Markovic and Others v. Italy* [ՄՊ], § 54):

159. Պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել Կոնվենցիայով երաշխավորված այն անձանց իրավունքների խախտման համար, ովքեր ուրիշ պետության տարածքում են բնակվում, բայց գտնվում են առաջին պետության իշխանության տակ (*Issa and Others v. Turkey*, § 71, *Sánchez Ramirez v. France* (որոշում), *Öcalan v. Turkey* [ՄՊ], § 91, և *Medvedyev and Others v. France* [ՄՊ], §§ 66-67): Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի բուֆերային գոտում տեղի ունեցող գործողություններին՝ տե՛ս *Isaak and Others v. Turkey* (որոշում):

160. Այնպիսի տարածքների առնչությամբ ներկայացված գանգատները, որոնք իրավաբանորեն գտնվում են Անդամ Պետության իրավասության ներքո, սակայն չեն ենթարկվում այդ Պետության իշխանությանը և վերահսկողությանը, կարող են համարվել անհամատեղելի Կոնվենցիայի դրույթների հետ (*An and Others v. Cyprus* (որոշում)), բայց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Կոնվենցիայով սահմանված Պետության պոզիտիվ պարտավորությունների վրա (*Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], §§ 312-13, §§ 333 և այլն): Նաև, տե՛ս՝ *Stephens v. Cyprus, Turkey and the United Nations* (որոշում):

161. Գոյություն ունեն բացառություններ, երբ անհատի ֆիզիկական ներկայությունը Անդամ Պետություններից մեկի տարածքում նշանակում է, որ այդ անհատը գնվում է տվյալ պետության իրավասության ներքո, օրինակ, երբ պետության տարածքում տեղակայված է այն միջազգային կազմակերպության գլխամասային գրասենյակը, որի դեմ ուղղված են դիմումատուի բողոքները: Այն փաստը, որ միջազգային քրեական տրիբունալն ունի իր նստավայրը և տարածքները Նիդեռլանդներում, բավարար հիմք չի հանդիսանում այդ Պետությանը վերագրել որևէ ենթադրյալ գործողություններ կամ անգործություններ միջազգային տրիբունալի կողմից՝ դիմումատուի դատապարտման կապակցությամբ (*Galić v. the Netherlands* (որոշում), և *Blagojević v. the Netherlands* (որոշում)): Միջազգային կազմակերպության մշտական նստավայր հանդիսացող Անդամ Պետության դեմ բերված գանգատի համար, տե՛ս՝ *Lopez Cifuentes v. Spain** (որոշում), §§ 25-26: Անդամ Պետության տարածքում միջազգային քաղաքացիական ադմինիստրացիայի ընդունման համար, տե՛ս՝ *Berić and Others v. Bosnia and Herzegovina* (որոշում), § 30.

162. Պետության մասնակցությունը մեկ այլ Պետության վարույթում որպես պատասխանող, չի հանդիսանում արտատարածքային իրավազորության իրականացում (*McElhinney v. Ireland and the United Kingdom* (որոշում) [ՄՊ],

Treska v. Albania and Italy (որոշում), և *Manoilescu and Dobrescu v. Romania and Russia* (որոշում), §§ 99-111):

163. Անդամ Պետության պատասխանատվությունը մասնավոր անձանց գործողությունների համար, որը սովորաբար քննարկվում է *ratione personae*-ի հետ համատեղելիության վերնագրի տակ, հնարավոր է նաև պայմանավորված լինի Կոնվենցիայում ամրագրված անհատական իրավունքների պայմաններով և այդ իրավունքներին կցված դրական պարտավորությունների շրջանակով (տե՛ս, օրինակ՝ *Siliadin v. France*, §§ 77-81, և *Beganović v. Croatia*, §§ 69-71): Կոնվենցիան կարող է առաջադրել Պետության պատասխանատվության հարց՝ կապված մասնավոր անձանց այնպիսի գործողությունների նկատմամբ իշխանությունների ցուցաբերած լուռ համաձայնության ու ներողամտության հետ, որոնք խախտում են իր իրավասության ներքո գտնվող ուրիշ անհատների Կոնվենցիայով նախատեսված իրավունքները (*Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], § 318):

164. Դատարանը նաև սահմանել է սկզբունքներ, որոնք վերաբերում են արտատարածքային պատասխանատվությանը՝ հանձման ընթացակարգի շրջանակներում իրականացվող ձերբակալմանը և կալանավորմանը (*Stephens v. Malta (no. 1)*, § 52):

4. Հարցեր կապված Կոնվենցիայի Անդամ Պետությունների հնարավոր պատասխանատվությանը՝ միջազգային կազմակերպության անդամակցության շրջանակներում իրենց գործողությունների կամ անգործությունների վերաբերյալ

141. Կոնվենցիան իրավասություն չի տալիս Դատարանին գնահատելու Անդամ Պետությունների այն գործողություններն ու անգործությունները, որոնք իրականացվում են ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի որոշումներով նախքան ՄԱԿ-ի կողմից իրականացվող միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու առաքելությունները կամ դրանց ընթացքում: Հակառակ դեպքում՝ տեղի կունենա միջամտություն ՄԱԿ-ի հիմնական առաքելության իրականացմանը (*Behrami and Behrami v. France and Saramati v. France, Germany and Norway* (որոշում) [ՄՊ], §§ 146-52):

166. Ինչ վերաբերում է միջազգային դատարանների որոշումներին՝ Դատարանն ընդհանուր առմամբ որոշել է, որ չունի *ratione personae* իրավասություն քննության առնելու նախկին Հարավսլավիայի վերաբերյալ Միջազգային Քրեական Տրիբունալի կողմից փաստացի քննվող գանգատները, քանի որ այն ստեղծվել է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի որոշման ուժով (*Galić v. the Netherlands* (որոշում) և *Blagojević v. the Netherlands* (որոշում)): ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի որոշմամբ սահմանված իշխանության հիմքով Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Ներկայացուցիչների կողմից պետական պաշտոնյաներին պաշտոնանկ անելու վերաբերյալ որոշման առնչությամբ, տե՛ս՝ *Berić and Others v. Bosnia and Herzegovina* (որոշում), §§ 26):

167. Դատարանը չի կարող պետությանը վերագրել Կոնվենցիայի ենթադրյալ խախտման պատասխանատվություն այնպիսի որոշման կամ միջոցի համար, որն ընդունվել է միջազգային կազմակերպության որևէ մարմնի կողմից, որի անդամ հանդիսանում է տվյալ պետությունը, այն դեպքում, երբ չի կարելի հաստատել կամ նույնիսկ ենթադրել, որ հիմնականում միջազգային կազմակերպության կողմից իրականացվող հիմնարար իրավունքների պաշտպանությունը «համարժեք չէ» Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությանը և պետությունը ուղղակի կամ անուղղակի չի մասնակցել քննարկվող գործությանը (*Gasparini v. Italy and Belgium** (որոշում)):

168. Այսպիսով, Դատարանը որոշել է, որ այն չունի իրավասություն *ratione personae* քննության առնելու այն գանգատները, որոնք ուղղված են միջազգային կազմակերպության իրավասու մարմնի կողմից կայացրած անհատական որոշումների դեմ, որոնք կրում են աշխատանքային տարածայնությունների համատեքստ և ամբողջովին ընկնում են այնպիսի կազմակերպության ներքին իրավական կարգավորման մեջ, որի իրավաբանական անձն առանձնացված է իր Անդամ Պետություններից, որտեղ այդ Պետություններն ուղղակիորեն կամ անուղղակի երբևէ չեն միջամտել վեճի լուծմանը և ոչ մի գործողություն կամ անգործություն իր հերթին չի ներգրավվել իրենց պատասխանատվությունը Կոնվենցիայի շրջանակում (*Boivin v. 34 Member States of the Council of Europe* (որոշում)՝ անհատական աշխատանքային բանավեճեր Եվրոկոնտրոլի հետ; *Lopez Cifuentes v. Spain** (որոշում)՝ կարգապահական վարույթներ Ինտերնեյշնլ Օլիվ Քաունսլի շրջանակներում, §§ 28-29; և *Beygo v. 46 Member States of the Council of Europe** (որոշում)՝ կարգապահական վարույթներ Եվրոպայի Խորհրդի շրջանակներում): Եվրոպական Խորհրդում պաշտոնանկությունների արդյունքում Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների մասին, ինչպես նաև Առաջին Ատյանի Դատարանում և Եվրոպական Համայնքների Արդարադատության Դատարանում բողոքարկման կարգի մասին տես՝ *Connolly v. 15 Member States of the European Union** (dec.): Դատավարությունը Եվրոպական արտոնագրային գերատեսչության առաջ տե՛ս՝ *Rambus Inc. v. Germany* (որոշում):

Ուսուցողական է համեմատել Անդամ Պետությունների իրավասությունների որոշակի մասը տնօրինող միջազգային կազմակերպության ներքին մեխանիզմում գոյություն ունեցող ենթադրյալ կառուցվածքային թերությունների Դատարանի քննության արդյունքները, որի ժամանակ վիճարկվեց այն փաստը, որ կազմակերպության կողմից հիմնական իրավունքների պաշտպանությունը «համարժեք» չէ Կոնվենցիայով երաշխավորված ընթացակարգին (*Gasparini v. Italy and Belgium** (որոշում)):

169. Դատարանն ընդունում է այլ մոտեցում այդ դեպքերի վերաբերյալ, որտեղ նախատեսվում է Անդամ Պետության ուղղակի կամ անուղղակի միջամտություն այնպիսի վեճի քննարկման հարցում, որի նկատմամբ տվյալ պետությունն ունի միջազգային պատասխանատվություն՝ տե՛ս՝ *Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland* [ՄՊ], § 153, համեմատե՛ք *Behrami and Behrami v. France and Saramati v. France Germany and Norway* (որոշում) [ՄՊ], § 151, գործի հետ: Նաև, տե՛ս, հետևյալ օրինակները.

- որոշում՝ չգրանցել դիմումատուի թեկնածությունը՝ Եվրոպական Ընկերակցությունների կողմից կազմված պայմանագրի հիման վրա (*Matthews v. the United Kingdom* [ՄՊ]);
- Ընկերակցության հրահանգն իրականացնող դիմումատուի նկատմամբ ֆրանսիական օրենքի կիրառումը (*Cantoni v. France* [ՄՊ]),
- Գերմանիայում դատարանի մատչելիության իրավունքի խախտում (*Beer and Regan v. Germany* [ՄՊ], և *Waite and Kennedy v. Germany* [ՄՊ]),
- նախարարի հրամանով պետության մարմինների կողմից պատասխանող պետության տարածքում գույքի բռնագրավումը՝ համաձայն համայնքի իրավունքի ներքո ստանձնած իր իրավական պարտավորությունների (*Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland*) (Ընկերակցության Կանոնակարգը հրապարակվել էր ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի որոշման կատարման համար, տե՛ս՝ §§ 153-54),
- ներպետական դատարանի գանգատը ներկայացված Եվրոպական Ընկերակցության Արդարադատության Դատարան (*Cooperatieve Producentenorganisatie van de Nederlandse Kokkelvisserij U.A. v. the Netherlands* (որոշում)):

170. Այսպիսով, Ընկերակցության օրենքի կիրառման առնչությամբ Եվրոպական Միության Անդամ Պետությունների դեմ ներկայացված գանգատները պարտադիր չէ, որ անընդունելի ճանաչվեն այդ հիմքով (*Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland* [ՄՊ], § 137, և *Matthews v. the United Kingdom* [ՄՊ], §§ 26-35):

171. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի անդամ չհանդիսացող Եվրոպական Ընկերակցության կառույցների դեմ բերված գանգատներին, գոյություն ունի ավելի բարձր մարմին, որը դրանք ճանաչում է *ratione personae* անընդունելի (*Confédération française démocratique du travail v. the European Communities* (որոշում), որպես այլ տարբերակ՝ նրանց անդամ պետությունները՝ (ա) համատեղ և (բ) առանձին. այլ հղումներ՝ *Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland*, § 152, *Cooperatieve Producentenorganisatie van de Nederlandse Kokkelvisserij U.A. v. the Netherlands* (որոշում)):

Այս դիրքորոշումը նաև ընդունվել է Եվրոպական Արտոնագրային Գերատեսչության համար (*Lenzing AG v. Germany* (որոշում)):

172. Այն հարցի համար, թե արդյոք կարող է պետության վրա դրվել պատասխանատվություն իր Սահմանադրության առնչությամբ, որը հանդիսանում է միջազգային պայմանագրի մաս, տե՛ս՝ *Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina* [ՄՊ], § 30:

Բ. Անհամատեղելիությունը՝ *ratione loci*

Հոդված 35 § 3 (ա) Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է որ.

ա. այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ ... »

Հոդված 32 Դատարանի իրավասությունը

«1. Դատարանի իրավասությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33, 34, 46 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավասության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը»:

1. Սկզբունքները

173. *Ratione loci* պահանջում է, որ Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները տեղի ունենան Անդամ Պետության իրավասության ներքո գտնվող կամ իր կողմից վերահսկվող տարածքում (*Cyprus v. Turkey* [ՄՊ], §§ 75-81, և *Drozd and Janousek v. France and Spain*, §§ 84-90):

174. Եթե գանգատները հիմնված են այնպիսի դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել Անդամ Պետության տարածքից դուրս և առկա չէ որևէ կապ այդ դեպքերի և Անդամ Պետության մարմինների միջև, ապա դրանք կճանաչվեն Կոնվենցիայի շրջանակներում *ratione loci* անհամատեղելի:

175. Եթե գանգատները վերաբերում են այնպիսի գործողություններին, որոնք տեղի են ունեցել Անդամ Պետության տարածքից դուրս, կառավարությունը կարող է բարձրացնել նախնական առարկություն, որ գանգատը *ratione loci* անհամատեղելի է Կոնվենցիայի հետ (*Loizidou v. Turkey* (նախնական առարկություններ), § 55, և *Rantsev v. Cyprus and Russia*, § 203): Նման առարկությունը կքննարկվի Կոնվենցիայի 1-ին հոդվածի ներքո (սույն հոդվածի «իրավասության» շրջանակներում հայեցակարգի վերաբերյալ տե՛ս՝ *Banković and Others v. Belgium and 16 Other Contracting States* (որոշում) [ՄՊ], § 75):

176. Առարկությունները շատ հաճախ բարձրացվում են Պատասխանող Պետության կողմից առ այն, որ գանգատն անընդունելի է, քանի որ անհամատեղելի է *ratione loci* Կոնվենցիայի հետ այն հիմքով, որ վարույթների ընթացքում դիմումատուն բնակվում էր մեկ ուրիշ Անդամ Պետությունում, բայց վարույթներ էր հարուցում պատասխանող պետությունում, քանի որ այդ պետությունում սահմանված կարգավորումներն ավելի բարենպաստ էին: Դատարանը նաև ուսումնասիրում է գանգատները 1-ին հոդվածի տեսանկյունից (*Haas v. Switzerland** (որոշում)):

177. Սակայն պարզ է, որ պետությունը պատասխանատու կլինի իր դիվանագիտական և հյուպատոսական արտերկրի ներկայացուցիչների գործողությունների համար, և *ratione loci* հարց չի կարող ծագել դիվանագիտական առաքելությունների վերաբերյալ (*X v. Federal Republic of*

Germany (որոշում), և *M. v. Denmark* (որոշում), § 1 և այնտեղ վկայակոչված հղումները) կամ գործողությունները իրագործել են տվյալ պետության գրանցված կամ այդ պետության դրոշը կրող օդանավերում (*Banković and Others v. Belgium and 16 Other Contracting States* (որոշում) [ՄՊ], § 73):

178. Վերջապես, *ratione loci* իրավասության բացակայության հաստատմամբ նույնիսկ Դատարանը կարող է քննել դիմումատուների մեկ կամ ավել Անդամ Պետությունների իրավասության ներքո գտնվելու հարցը՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի նպատակով (*Droz and Janousek v. France and Spain*, § 90):

Ուստի առարկությունները, որ դիմումատուները չեն գտնվում պատասխանող պետության իրավասության շրջանակներում, կարող են բարձրացվել առ այն, որ Կոնվենցիայի շրջանակներում գանգատը *ratione personae* անհամատեղելի է (պատասխանող կառավարության ներկայացված դիրքորոշումները տե՛ս՝ *Banković and Others v. Belgium and 16 Other Contracting States* (որոշում) [ՄՊ], § 35; *Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], § 300; և *Weber and Saravia v. Germany* (որոշում)):

2. Հայրուկ գործեր

179. Գանգատը *ratione loci* անհամատեղելի կճանաչվի, եթե այն վերաբերում է կախյալ տարածքներին և Անդամ Պետությունը Կոնվենցիայի 56-րդ հոդվածի համաձայն (նախկին 63-րդ հոդված) չի ներկայացրել հայտարարություն վիճարկվող տարածքի նկատմամբ Կոնվենցիայի կիրառման մասին (*Gillow v. the United Kingdom*, §§ 60-62; *Bui Van Thanh and Others v. the United Kingdom* (որոշում); և *Yonghong v. Portugal* (որոշում)): Կոնվենցիայի կիրառման ընդլայնման մոտեցումը տարածվում է նաև Կոնվենցիային կից Արձանագրությունների վրա (*Quark Fishing Limited v. the United Kingdom* (որոշում)):

Եթե Անդամ Պետությունը ներկայացրել է նման հայտարարություն համաձայն 56-րդ հոդվածի, անհամատեղելիության հարց չի առաջանա (*Tyrer v. the United Kingdom*, § 23):

180. Եթե կախյալ տարածքը դառնում է անկախ, ապա հայտարարությունն ինքստինքյան ուժը կորցնում է: Հետևաբար մետրոպոլիտան պետության դեմ ներկայացված գանգատները կճանաչվեն *ratione personae* անհամատեղելի (*Church of X v. the United Kingdom* (որոշում)):

181. Եթե կախյալ տարածքը դառնա Անդամ Պետության մետրոպոլիտան տարածքի մաս, ապա Կոնվենցիան ինքնաբերաբար կտարածվի նաև տվյալ նախկին կախյալ տարածքի վրա (*Hingtaq 53 and Others v. Denmark* (որոշում)):

Գ. Անհամատեղելիությունը՝ *ratione temporis*

Հոդված 35 § 3 (ա) Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանը անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է որ.

ա. այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ»:

Հոդված 32 Դատարանի իրավասությունը

«1. Դատարանի իրավասությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33, 34, 46 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավասության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը»:

1. Ընդհանուր սկզբունքեր

182. Միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների համաձայն (պայմանագրերի հետադարձ ուժ չունենալու մասին սկզբունքը) Կոնվենցիան չի պարտավորեցնում Պայմանավորվող կողմին կատարված որևէ գործողության կամ փաստի կամ իրավիճակի վերաբերյալ, որը դադարել է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից (*Blecic v. Croatia* [ՄՊ], § 70; *Šilih v. Slovenia* [ՄՊ], § 140; և *Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 130)

183. Իրավասությունը *ratione temporis* ուժի մեջ է Պատասխանող Պետության կողմից միայն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների վավերացումից հետո: Այնուամենայնիվ, Կոնվենցիան չի սահմանում ոչ մի յուրահատուկ պարտավորություն Պայմանավորվող կողմից պահանջելու վնասի փոխհատուցում, որը պատճառվել է Կոնվենցիայի վավերացումից առաջ (*Kopecký v. Slovakia* [ՄՊ], § 38):

184. Վավերացման ամսաթվից սկսած՝ Պետության բոլոր ենթադրյալ գործողությունները և անգործությունները պետք է համաձայնվեցվեն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների հետ, և հաջորդող փաստերը պետք է դիտարկվեն Դատարանի իրավասության շրջանակներում, նույնիսկ, եթե դրանք հանդիսանում են արդեն գործող իրավիճակների շարունակությունը (*Almeida Garrett, Mascarenhas Falcão and Others v. Portugal*, § 43): Դատարանը կարող է հաշվի առնել վավերացման օրվան նախորդող այն փաստերը, որոնք առաջացել են տվյալ ամսաթվից հետո կամ անհրաժեշտ են այդ ամսաթվից հետո կատարված փաստերը հասկանալու հետ (*Hutten-Czapska v. Poland* [ՄՊ], §§ 147-53):

185. Վարույթների ցանկացած փուլում Դատարանն իրավասու է իր նախաձեռնությամբ քննարկել *ratione temporis* հարցը, քանի որ այն ավելի շատ դատարանի իրավասության ներքո քննարկվող խնդիր է, քան իր նեղ իմաստով՝ ընդունելիության հարց (*Blecic v. Croatia* [ՄՊ], § 67):

2. Այս սկզբունքների կիրառումը

(ա) Կոնվենցիայի վավերացման կամ Կոնվենցիոն ինստիտուտների իրավասության ընդունման ամսաթիվը

186. Սկզբունքորեն, Դատարանի ժամանակավոր իրավասությունը սահմանող ամսաթիվ է հանդիսանում Կողմի նկատմամբ Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների ուժի մեջ մտնելու օրը (օրինակ՝ *Šilih v. Slovenia* [ՄՊ], § 164):

187. Այնուամենայնիվ, 1950թ. Կոնվենցիան Հանձնաժողովին ստանձնեց անհատական գանգատները քննելու իրավասությամբ (հոդված 25) և սահմանեց, որ Դատարանի իրավասությունը (հոդված 46) կախված է Պայմանավորվող Պետությունների կողմից ներկայացված առանձնահատուկ հայտարարություններից: Այս հայտարարություններում, մասնավորապես, կարող են ներկայացվել ժամանակային սահմանափակումների մասին պահանջներ: Այն երկրները, որոնք ներկայացրել են այդպիսի հայտարարություններ Կոնվենցիայի վավերացումից հետո, Հանձնաժողովը և Դատարանն ընդունել են իրենց իրավասության ժամանակային սահմանափակումները այն փաստերի նկատմամբ, որոնք կատարվել են Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու և տվյալ հայտարարության ընթացքում (*X v. Italy* (որոշում), և *Stamoulakatos v. Greece (no. 1)*, § 32):

188. Այն դեպքում, երբ պետության կողմից արված հայտարարության մեջ բացակայում է սահմանափակման մասը, Կոնվենցիոն ինստիտուտները կարող են ընդունել, որ իրենց իրավասությունն ունի հետադարձ ազդեցություն (*X v. France* (որոշում)), տե՛ս՝ *France's declaration*, 2 հոկտեմբեր 1981թ., որտեղ նշված չէ ժամանակավոր սահմանափակման մասին:

Դատարանի իրավասության մասին այս հայտարարությունների մեջ ներառված ժամանակային սահմանափակումները վավեր են՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի և Թիվ 11⁵ Արձանագրության 6-րդ հոդվածի ներքո անհատական գանգատներ ընդունելու համար (*Blecic v. Croatia* [ՄՊ], § 72): Դատարանը, ընդհանուր առմամբ հաշվի առնելով նախորդ համակարգը, գտավ, որ իրավասությունը սկսվում է առաջին հայտարարության օրվանից՝ ճանաչելով անհատական գանգատի իրավունքը Հանձնաժողովի նկատմամբ, անկախ հայտարարության և Դատարանի իրավասության ճանաչման միջև առկա ժամանակային տարբերության (*Cankoçak v. Turkey*, § 26; *Yorgiyadis v. Turkey*, § 24; and *Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 133):

(բ) Փաստեր, որոնք առաջացել են նախքան ուժի մեջ մտնելը կամ հայտարարություն ներկայացնելը կամ դրանից հետո

189. Դատարանի ժամանակային իրավասությունը պետք է սահմանվի ենթադրյալ միջամտության վերաբերյալ փաստերի հիման վրա: Հետևաբար յուրաքանչյուր գործում անհրաժեշտ է հստակեցնել ենթադրյալ միջամտության ճշգրիտ պահը: Այս կապակցությամբ Դատարանը պետք է հաշվի առնի

դիմումատուի կողմից ներկայացված գանգատի փաստերը և Կոնվենցիայիով երաշխավորված իրավունքի ենթադրյալ խախտման փաստը (*Blecic v. Croatia* [ՄՊ], § 82, և *Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 131):

190. Կիրառելով այս թեսթը վճռորոշ ամսաթվին նախորդող կամ հաջորդող տարբեր դատական որոշումների նկատմամբ, Դատարանը հաշվի է առնում այն վերջնական վճիռը, որն ինքնին կարող էր խախտել դիմումատուի իրավունքները (Գերագույն Դատարանի վճիռը, որը կասեցրել է դիմումատուի վարձակալության իրավունքը՝ *Blecic v. Croatia* [ՄՊ], § 85; և վերաքննիչ դատարանի վճիռը՝ *Mrkic v. Croatia* (որոշում)), չնայած համապատասխան իրավական պաշտպանության միջոցների առկայությանը, որոնք թույլ են տվել միջամտությունը (հաջորդող Սահմանադրական Դատարանի որոշումը հաստատում է Գերագույն Դատարանի որոշումը՝ *Blecic v. Croatia* [ՄՊ], § 85; կամ Գերագույն և Սահմանադրական Դատարանների երկու որոշումները՝ *Mrkic v. Croatia* (որոշում):

Միջամտությամբ խախտված իրավունքը վերականգնող դատավարության բացասական արդյունքը չի կարող առաջացնել Դատարանի ժամանակային իրավասություն (*Blecic v. Croatia* [ՄՊ], §§ 77-79): Դատարանը բազմիցս նշել է, որ ներպետական դատարանները պարտավոր չեն կիրառել Կոնվենցիան հետադարձ ուժով այն միջամտությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչ վճռորոշ ամսաթիվը (*Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 130):

191. Համապատասխան օրինակներ.

- միջամտություններ, որոնք կատարվել են մինչ վճռորոշ ամսաթիվը և դատարանի վերջնական որոշումները, որոնք ծանուցվել են այդ ամսաթվից հետո (*Meltex Ltd v. Armenia* (որոշում));
- միջամտություններ, որոնք կատարվել են վճռորոշ ամսաթվից հետո (*Lepojic v. Serbia*, § 45, և *Filipovic v. Serbia*, § 33);
- վճռորոշ ամսաթվից հետո կայացրած դատական ակտերում այնպիսի ապացույցի օգտագործումը, որը ձեռք է բերվել վատ վերաբերմունքի արդյունքում մինչ վճռորոշ ամսաթիվը (*Harutyunyan v. Armenia*, § 50);
- սեփականության իրավունքի չեղյալ հայտարարումը, որն իրականացվել է մինչ վճռորոշ ամսաթիվը, սակայն ավարտվել է դրանից հետո (*Turgut and Others v. Turkey**, § 73);
- սեփականության իրավունքի վերջնականապես դադարեցնելու օրը (*Fener Rum Patrikligi (Ecumenical Patriarchy v. Turkey** (որոշում):

192. Տե՛ս նաև՝

- հունական դատարանների կողմից դիմումատուի *in absentia* դատապարտումը մինչ Հունաստանի կողմից հայտարարություն ներկայացնելը համաձայն 25-րդ հոդվածի (*Stamoulakatos v. Greece (no. 1)*, § 33);
- Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի կողմից մինչ վավերացման օրն ընդունած որոշումը, որով մերժվեց միջնորդությունը ստորագրել այն դիմողի խնդրանքը, ով չուներ անձնագրային կնիք, չնայած դրա կապակցությամբ

վարույթները հարուցվել էին տվյալ ամսաթվից հետո (*Kadikis v. Latvia** (որոշում));

- դիմումատուին գործից ազատելը և վավերացման օրվանից առաջ իր կողմից ներկայացված քաղաքացիական հայցը, որին հետևում է Սահմանադրական Դատարանի որոշումը այդ ժամկետից հետո (*Jovanovic v. Croatia* (որոշում));
- նախարարի հրաման՝ դիմումատու կազմակերպության ղեկավարությունը էկոնոմիկայի Նախարարության կողմից նշանակված վարչություն տեղափոխելու մասին՝ զրկելով նրանց դատարան դիմելու իրավունքներից, մինչդեռ դիմումատուների բողոքը մերժելու մասին Գերագույն Դատարանի վճիռը տրվել էր վճռորոշ ամսաթվից հետո (*Kefalas and Others v. Greece*, § 45):
- 46-րդ հոդվածի ներքո արված հայտարարությունից հետո՝ մինչ այդ ամսաթիվը լրագրողներին արված հայտարարությունների հետանքով դիմումատուի դատապարտումը (*Zana v. Turkey*, § 42):
- դիմումատու կազմակերպության տարածքի զննումը և փաստաթղթերի բռնագրավումը, մինչդեռ դատավարությունները սկսվել են վավերացումից հետո (*Veeber v. Estonia (no. 1)*, § 55; տե՛ս նաև՝ *Kikots and Kikota v. Latvia** (որոշում):

142. Այնուամենայնիվ, եթե դիմումատուն ներկայացնում է առանձին գանգատ Կոնվենցիայի հաջորդող դատավարությունների համապատասխանության հարցի վերաբերյալ, ապա Դատարանը կարող է հայտարարել, որ դատական միջոցների նկատմամբ նա ունի *ratione temporis* իրավասություն (թերթի տպագրությունն ու տարածումը կասեցնող առաջին ատյանի դատարանի կարգադրության դեմ բերված վճռաբեկ բողոք՝ *Kerimov v. Azerbaijan* (որոշում):

194. *Blecic v. Croatia* [ՄՊ] գործում հաստատված թեսթը և չափանիշներն ունեն ընդհանուր բնույթ. որոշ իրավունքների առանձնահատուկ բնույթը, ինրպիսիք են օրինակ Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներում նախատեսված իրավունքները, պետք է հաշվի առնվեն այդ չափանիշները կիրառելու ժամանակ (*Šilih v. Slovenia* [ՄՊ], § 147):

3. Հատուկ իրավիճակներ

(ա) Շարունակական խախտումներ

195. Կոնվենցիոն ինստիտուտներն ընդունել են իրենց *ratione temporis* իրավասության ընդլայնումն այն իրավիճակների նկատմամբ, որոնք ունեն շարունակական խախտումների բնույթ, և որոնք առաջացել են մինչև Կոնվենցիան ուժի մեջ մտնելը, բայց շարունակվում են այդ օրվանից հետո (*De Becker v. Belgium** (որոշում):

196. Դատարանը հետևել է այս մոտեցմանը սեփականության իրավունքին վերաբերող մի քանի դեպքերում՝

- դիմումատուներին պատկանող հողի շարունակական անօրինական բռնագավթումը նավատորմի զինվորների կողմից առանց փոխհատուցման (*Papamichalopoulos and Others v. Greece*, § 40);

- Հյուսիսային Կիպրոսում դիմումատուի սեփականության իրավունքից օգտվելու մերժումը (*Loizidou v. Turkey* (նախնական առարկություններ), §§ 46-47);
- պետականացված սեփականության համար վերջնական փոխհատուցման ձախողումը (*Almeida Garrett, Mascarenhas Falcão and Others v. Portugal*, § 43);
- դիմումատուի սեփականության վերականգնման և իր տունը վարձակալության հանձնելու դիմաց համարժեք վարձավճար ստանալու շարունակական անհնարինությունը, որը հետևանք է Լեհաստանի կողմից Թիվ 1 Արձանագրության վավերացումից առաջ և հետո գործող օրենքների (*Hutten-Czapska v. Poland* [ՄՊ], §§ 152-53):

197. Սահմանափակումներ. անձին սեփականությունից կամ տնից զրկելն ընդհանուր առմամբ հանդիսանում է «մեկանգամյա գործողություն» և առնչվող իրավունքների նկատմամբ չի առաջացնում «զրկման» շարունակական իրավիճակ (*Blecic v. Croatia* [ՄՊ], § 86): Նախորդ իշխանության ժամանակ 1945թ.-ից հետո սեփականության զրկման առանձնահատուկ դեպքի համար՝ *Preussische Treuhand GmbH & Co. Kg a. A. v. Poland* (որոշում), §§ 55-62:

198. Խախտման շարունակական բնույթը նույնպես կարող է սահմանվել Կոնվենցիայի որևէ այլ հոդվածի վերաբերյալ (2-րդ հոդվածի և մինչ վճռորոշ ամսաթիվը մահապատժի ենթարկված դիմումատուների համար՝ *Ilascu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], §§ 406-08):

(բ) Մինչ վճռորոշ ամսաթիվն ի հայտ եկած անհետացումները հետաքննելու «շարունակական» ընթացակարգային պարտավորությունը

199. «Անհետացումը»՝ դա «ակնթարթային» գործողություն կամ երևույթ չէ: Հակառակը, Դատարանը դիտարկում է անհետացումը որպես յուրահատուկ ֆենոմեն, որը բնութագրվում է որպես անկայունության և անհաշվետու շարունակական իրավիճակ, որտեղ կա տեղեկատվության պակաս կամ նույնիսկ դիտավորյալ քողարկում և կատարվածի մասին անգիտակցություն: Հետևաբար, անհայտ կորած մարդու գտնվելու վայրի և ճակատագրի վերաբերյալ պատասխանատու լինելու ձախողումը հանգեցնում է շարունակական իրավիճակի: Այդ իսկ պատճառով, հետաքննելու ընթացակարգային պարտավորությունները կմնան անփոփոխ այնքան, քանի դեռ անձի ճակատագիրն անհայտ է. անհրաժեշտ հետաքննություն իրականացնելու շարունակական ձախողումը կդիտարկվի որպես շարունակական խախտում, նույնիսկ եթե մահվան փաստը կարող է ենթադրվել (*Varnava and Others v. Turkey* [ՄՊ], §§ 148-49): *Varnava*-ի նախադեպի համար տե՛ս՝ *Palic v. Bosnia and Herzegovina*, § 46:

(գ) Հոդված 2-ով նախատեսված մահը հետաքննելու ընթացակարգային պարտավորությունը. դատարանի ժամանակային իրավասությունից դուրս գտնվող փաստերի առնչությամբ իրականացվող վարույթները

143. Դատարանը տարբերակում է կասկածելի մահ կամ սպանություն և կասկածելի անհետացումը հետաքննելու պարտավորությունները:

Այսպես, Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն արդյունավետ հետաքննության իրականացման պոզիտիվ պարտավորությունը հանդիսանում է առանձին պարտավորություն, և կարող է առաջանալ Պետության համար նույնիսկ այն դեպքում, երբ մահը տեղի ունեցել վճռորոշ ամսաթվից առաջ (*Šilih v. Slovenia* [ՄՊ], § 159՝ գործը վերաբերում է մահվան այն դեպքին, որը կատարվել է վճռորոշ ամսաթվից առաջ, իսկ հետաքննության ընթացքում տեղի գտած բացթողումներն ու թերությունները՝ այդ ժամկետից հետո): Այդ պարտավորությունների հետ համապատասխանությունը վերանայելու Դատարանի ժամանակային իրավասությունն իրագործվում է որոշ սահմանափակումներով՝ հաշվի առնելով օրենքի հստակության սկզբունքը (*Šilih v. Slovenia* [ՄՊ], §§161-63): Առաջին հերթին, միայն վճռորոշ ամսաթվից հետո կատարված ընթացակարգային գործողությունները և/կամ անգործությունները կարող են ընկնել Դատարանի ժամանակային իրավասության տակ (§ 162): Այնուհետ, Դատարանն ընդձում է, որպեսզի ընթացակարգային պարտավորությունները մտնեն ուժի մեջ, պետք է առկա լինի իրական կապ մահվան և տվյալ Պատասխանող Պետության նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջև: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է, որ ընթացակարգային քայլերի նշանակալից մասը, ներառյալ ոչ միայն անձի մահվան առնչությամբ իրականացվող արդյունավետ հետաքննությունը, այլ նաև մահվան պատճառները և մեղավոր անձանց բացահայտելու նպատակով համապատասխան դատավարությունների հարուցումը, իրականացվի տվյալ Պետության կողմից Կոնվենցիան վավերացնելուց հետո: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է նաև, որ որոշակի հանգամանքներում կապը հնարավոր է պատճառաբանված լինի նաև Կոնվենցիայի երաշխիքների և դրա հիմքում ընկած արժեքների իրական և արդյունավետ պահպանման անհրաժեշտությամբ (§ 163): «Իրական կապ»-ի կիրառման համար, տե՛ս, օրինակ, *Sandru and Others v. Romania**, § 57; *Šilih* վճիռը, տե՛ս *Çakir and Others v. Cyprus* (որոշում):

201. *Tuna v. Turkey** գործում մահ առաջացրած խոշտանգումների արդյունքում, առաջին անգամ Դատարանը կիրառեց *Šilih*-ի վճռով սահմանված սկզբունքները, միասին քննելով դիմումատուների կողմից 2-րդ և 3-րդ հոդվածների ներքո ներկայացված ընթացակարգային բողոքները: Դատարանը կրկնեց ընթացակարգային պարտավորությունների «առանձնակիության» սկզբունքները, մասնավորապես այն երկու չափանիշները, որոնք կիրառվում են իր *ratione temporis* իրավասությունը սահմանելու համար, երբ փաստերը, որոնք իրավական առումով վերաբերում են 2-րդ և 3-րդ հոդվածներին, տվյալ գործում տեղի էին ունեցել իր իրավասության ժամկետից դուրս, մինչդեռ ընթացակարգային հարցերին վերաբերող փաստերը (այսպես կոչված հաջորդող ընթացակարգը) կատարվել էին առնվազն այդ ժամկետի սահմաններում:

(դ) Նախորդող փաստերի վերլուծությունը

202. Դատարանն ենթադրում է, որ «կարող է հաշվի առնել Կոնվենցիայի վավերացմանը նախորդող փաստերն այնքանով, որքանով դրանք ստեղծում են իրավիճակ, որը շարունակել է գոյություն ունենալ վավերացումից հետո կամ այն

դեպքում, երբ դրանք անհրաժեշտ են հասկանալու հետո առաջացած իրավիճակը (*Broniowski v. Poland* (որոշում) [ՄՊ], § 74):

(ե) Շարունակական դատավարություններ կամ կալանքներ

203. Առանձնահատուկ իրավիճակ է ծագում իրավական դատավարությունների տևողության վերաբերյալ բողոքներից (հոդված 6§1), որոնք առաջացել են Կոնվենցիայի վավերացումից առաջ, բայց շարունակվում են նաև հետո: Չնայած Դատարանի իրավասությունը սահմանափակ է վճռորոշ ամսաթվին նախորդող ժամանակահատվածի վերաբերյալ, այն, որպես ուղեցույց, հաճախ հաշվի է առնում մինչ այդ ժամկետը դատավարությունների ընթացքը, օրինակ՝ *Humen v. Poland* [ՄՊ], §§ 58-59, և *Foti and Others v. Italy*, § 53):

Նույնը կիրառվում է մինչդատական կալանքի հետ առնչվող գործերին (հոդված 5§3, տե՛ս *Klyakhin v. Russia*, §§ 58-59) կամ կալանքի պայմանների վերաբերյալ (հոդված 3, տե՛ս *Kalashnikov v. Russia*, § 36):

204. Դատավարության անաչառության վերաբերյալ Դատարանը կարող է ուսումնասիրել այն փաստը, թե արդյոք դատավարության փուլում վճռորոշ ամսաթվից առաջ կատարված հետաքննություննում թերությունները կարող են հատուցվել ընթացակարգային երաշխիքներով (*Barberà, Messegué and Jabardo v. Spain*, §§ 61 and 84): Այդ կապակցությամբ, Ստրասբուրգի դատավորները դատավարությունը դիտարկում են ամբողջությամբ՝ *Kerojärvi v. Finland*, § 41:

205. Հոդված 5-ի համաձայն՝ ընթացակարգային բողոքը չի կարող ընկնել Դատարանի ժամանակային իրավասության մեջ, երբ ազատագրվումը կատարվել է մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը (*Korizno v. Latvia** (որոշում):

(զ) Սխալ դատապարտման համար փոխհատուցման իրավունք

206. Դատարանը հայտարարել է, որ ունի իրավունք քննության առնելու Թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո բերված բողոքն այն դեպքում, երբ անձը դատապարտվել է վճռորոշ ամսաթվից առաջ, բայց դատապարտումը չեղյալ է հայտարարվել այդ օրվանից հետո (*Matveyev v. Russia*, § 38):

Դ. Անհամատեղելիությունը՝ *ratione materiae*

Հոդված 35 § 3 (ա) Ընդունելիության չափանիշներ

«3. Հոդված 34 համաձայն Դատարանը անընդունելի է համարում ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ

(ա) այն անհամատեղելի է Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրության դրույթների հետ ...»:

Հոդված 32 Դատարանի իրավազորությունը

«1. Դատարանի իրավազորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերվում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրության կիրառման և մեկնաբանմանը, և որոնք իրեն հանձնվում են 33, 34, 46 և 47 հոդվածների դրույթով նախատեսված դեպքերում:

2. ատարանի իրավազորության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը»:

144. Կոնվենցիային գանգատի *ratione materiae* համատեղելիությունը բխում է Դատարանի հիմնական իրավասությունից: Որպեսզի բողոքը լինի Կոնվենցիային հետ *ratione materiae* համատեղելի, անհրաժեշտ է, որ այն իրավունքը, որին հղում է կատարում դիմումատունն պաշտպանվի ուժի մեջ մտած Կոնվենցիայով և դրան կից Արձանագրությամբ: Օրինակ՝ գանգատներն անընդունելի են, երբ վերաբերում են վարորդական իրավունքի տրամադրման իրավունքին (*X v. Federal Republic of Germany* (որոշում), ինքնորոշման իրավունքին և օտարերկրացիների երկիր մուտք գործելու և Պայմանավորվող պետությունում ապրելու իրավունքին (*Peñafiel Salgado v. Spain** (որոշում), քանի որ, այս իրավունքները, որպես այդպիսին, արտացոլված չեն Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրավունքների և ազատությունների շարքում:

208. Չնայած Դատարանն իրավասու չէ քննելու ենթադրյալ խախտված այն իրավունքները, որոնք պաշտպանված են այլ միջազգային փաստաթղթերով, Կոնվենցիայի բովանդակության մեջ ներառված եզրույթներն ու հասկացությունները մշակելիս այն պետք է հաշվի առնի Կոնվենցիայից բացի նաև միջազգային իրավունքի տարրերը (*Demir and Baykara v. Turkey* [ՄՊ], § 85):

209. Դատավարության յուրաքանչյուր փուլում Դատարանը պարտավոր է քննարկել իր *ratione materiae* իրավասության հարցը, անկախ այն բանից, որ Կառավարությունը զրկվում է այդ հարցը բարձրացնելու իրավունքից (*Tanase v. Moldova* [ՄՊ], § 131)

210. Կոնվենցիայի դրույթին վերաբերող գանգատները, որի վերաբերյալ պատասխանող Պետությունը որոշակի վերապահում է կատարել, հայտարարվում են անհամատեղելի *ratione materiae* Կոնվենցիայի հետ, օրինակ՝, *Kozlova and Smirnova v. Latvia* (որոշում) և այն պայմանով, որ դրույթի պահպանումը վավերական է համարվում Դատարանի կողմից Կոնվենցիայի 57-րդ հոդվածի համաձայն (տե՛ս *Belilos v. Switzerland*):

211. Ի հավելումն, Դատարանը չունի իրավասություն քննելու Դատարանի վճիռներից որևէ մեկով Պայմանավորվող Կողմերի համար նախատեսված պարտավորության կատարումը: Այն չի կարող քննել այդ բնույթի բողոքները առանց Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի լիազորություններին միջամտելու, որը վերահսկում է վճիռների կատարումը Կոնվենցիայի հոդվածի 46§2-ի համաձայն: Այնուամենայնիվ, Նախարարների Կոմիտեի դերն այս ոլորտում չի նշանակում այն, որ պատասխանող Պետության կողմից Դատարանով հայտնաբերված խախտված իրավունքը վերականգնելու համար ձեռնարկված միջոցները չեն կարող առաջացնել մի նոր վճռով չորոշված խնդիր և ստեղծել գանգատի նոր առարկա, որը կքննվի Դատարանի կողմից (*Verein gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (no. 2)* [ՄՊ], §62): Այլ կերպ ասած, Դատարանը կարող է քննել բողոքը, որն իր վճիռներից մեկի իրագործումով ներպետական մակարդակով դատավարության վերաբացման կհանգեցնի և կառաջացնի Կոնվենցիայի մի նոր խախտում (*ibid.*, և *Lyons v. the United Kingdom* (որոշում):

212. Այնուամենայնիվ, որոշումների մեծամասնությունը՝ ճանաչելու գանգատներն անընդունելի՝ *ratione materiae* անհամատեղելիության հիմքով, սահմանափակվում են Կոնվենցիայի հոդվածներով կամ դրան կից Արձանագրություններով, մասնավորապես՝ հոդվածը 6 (արդար դատաքննության իրավունք), հոդված 8 (անձնական և ընտանեկան կյանքը, բնակարան և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք), և Թիվ 1 Արձանագրության հոդված 1 (սեփականության պահպանումը):

1. «Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ» հասկացությունը

Հոդված 6 § 1 Արդար դատաքննության իրավունք

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

(ա) Հոդված 6 § 1 կիրառելիության ընդհանուր պահանջները

145. «Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ» հասկացությունը չի կարող մենկաբանվել միայն պատասխանող Պետության ներպետական օրենքի տեսակետից. այն Կոնվենցիայից բխող «ինքնուրույն հասկացություն» է: Կոնվենցիայի հոդված 6§1-ը կիրառվում է անկախ կողմերի կարգավիճակից, վեճը կարգավորող օրենսդրության բնույթից և գործը քննելու իրավասություն ունեցող մարմնից (*Georgiadis v. Greece*, § 34):

214. Չնայած այն մոտեցմանը, որ Կոնվենցիայի մեջ ընդգրկված ինքնուրույն հասկացությունները պետք է մենկաբանվեն ժամանակակից պայմանների ներքո, այն թույլ չի տալիս Դատարանին հոդված 6 § 1-ի մեկնաբանության ժամանակ անտեսել «քաղաքացիական» ածականը (*Ferrazzini v. Italy* [ՄՊ], § 30):

215. Հոդված 6 § 1 վերաբերելիությունը քաղաքացիական գործերին առաջին հերթին կախված է վեճի առկայությունից: Երկրորդ հերթին, վեճը պետք է վերաբերի «իրավունքներին և պարտականություններին», որոնք առնվազն պետք է ճանաչվեն ներպետական օրենքի ներքո: Ի վերջո, այս «իրավունքները և պարտականությունները» պետք է լինեն քաղաքացիական՝ համապատասխանելով Կոնվենցիայի բովանդակությանը, չնայած որ հոդված 6-ն ինքնին առանձնահատուկ նյութական իմաստ չի տալիս Պայմանավորվող Կողմերի իրավական համակարգերին:

(բ) «Վեճ» հասկացությունը

216. «Վեճ» բառին պետք է տրվի ավելի շատ նյութական, քան ձևական նշանակություն (*Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium*, § 40): Անհրաժեշտ է այն դիտարկել արտաքին ձևից և լեզվական իմաստից վեր և կենտրոնանալ իրականության վրա՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր գործի հանգամանքները (*ibid.*, և *Gorou v. Greece (no. 2)* [ՄՊ], §§ 27 և 29): Հոդված 6-ը չի վերաբերում միակողմանի և անվիճարկելի վարույթին, որում բացակայում են

շահեր ունեցող հակառակ կողմերը և, որոնք կարող են հարուցվել միայն այն դեպքում, եթե չկա վեճ իրավունքների վերաբերյալ (*Alaverdyan v. Armenia* (որոշում), § 33):

217. Իր բնույթով «վեճ»-ը պետք է լինի լուրջ և էական (*Sporrong and Lönnroth v. Sweden*, § 81): Այդպիսին չէ, օրինակ, այն քաղաքացիական դատավարությունը, որը վերաբերել է բանտի իշխանությունների դեմ բերված ՁԻԱՀ-ով վարակված բանտարկյալների բացահայտմանն առնչվող բողոքներին (*Skorobogatykh v. Russia* (որոշում): Որպես հակադրում՝ Դատարանն ընդունել է, որ «վեճ»-ն էական է, երբ այն վերաբերվել էր վճռաբեկ բողոք բերելու համար հանրային դատախազին ուղղված խնդրանքին, քանի որ այն կազմում էր ամբողջ դատավարության անքակտելի մասը, որին դիմողը միացել էր իբրև քաղաքացիական կողմ՝ փոխհատուցում ստանալու ակնկալիքով (*Gorou v. Greece (no. 2)* [ՄՊ], § 35):

218. Վեճը կարող է վերաբերվել ինչպես իրավունքի փաստացի գոյությանը, այնպես էլ դրա ծավալին կամ կիրառման ոլորտին (*Bentham v. the Netherlands*, § 32): Վեճը կարող է լինել նաև փաստացի հանգամանքների վերաբերյալ:

219. Դատավարության արդյունքը պետք է վճռորոշ լինի վիճարկվող իրավունքի համար՝ *Ulyanov v. Ukraine* (որոշում): Հետևաբար, թույլ կապը կամ հեռավոր հետևանքները բավական չեն հոդված 6§1-ը կիրառելու համար: Օրինակ՝ Դատարանը համարեց, որ ատոմակայանի գործող լիցենզիայի օրինականության ժամկետի երկարացմանը վերաբերող դատավարությունը չի ընկնում հոդված 6§1-ի ներքո, քանի որ ժամկետի երկարացման որոշման և դիմումատուների կյանքը, ֆիզիկական անձեռնամխելիությունը և սեփականության իրավունքը պաշտպանելու միջև կապը շատ «թույլ և հեռավոր» է, և դիմումատուները չեն կարողացել ցույց տալ, որ իրենք անձամբ ենթարկվել են վտանգի (*Balmer-Schafroth and Others v. Switzerland*, § 40, և *Athanassoglou and Others v. Switzerland* [ՄՊ], §§ 46-55; ամենավերջին գործերից՝ *Sdruzeni Jihoceske Matky v. the Czech Republic** (որոշում); գործարանի կողմից աղմուկը սահմանափակելու մասին, տե՛ս՝ *Zapletal v. the Czech Republic** (որոշում) կամ հանքարդյունաբերական թափոնների վերացման վերաբերյալ շրջակա միջավայրի վրա գործարանի ենթադրյալ ազդեցության համար, տե՛ս՝ *Ivan Atanasov v. Bulgaria*, §§ 90-95): Նմանապես, այն դատավարությունները, որտեղ պետական համակարգի երկու աշխատակիցներ վիճարկում էին իրենց կոլլեգաների պաշտոնի նշանակումը, կարող են ունենալ միայն հեռավոր ազդեցություն իրենց քաղաքացիական իրավունքների վրա (*Revel and Mora v. France** (որոշում)):

220. Հոդված 6§1 կիրառելի է այն գործի նկատմամբ, երբ թմբի կառուցումը կարող էր ջրհեղեղ առաջացնել դիմումատուի գյուղում (*Gorraiz Lizarraga and Others v. Spain*, § 46), ինչպես նաև այն դեպքում, երբ դիմումատուի գյուղի մոտակայքում ոսկու հանքի շահագործման թույլատվությանը, որի մշակման համար օգտագործվելու էր ցիանիդ (*Taskin and Others v. Turkey*, § 133; տե՛ս նաև՝ *Zander v. Sweden*, §§ 24-25): Մեկ այլ վերջերս կայացրած վճռում, որում շրջակա միջավայրի պահպանության տեղական ասոցացիան պահանջել էր մերժել կառուցապատման թույլատվությունը, Դատարանը որոշեց, որ վեճն ունի

բավարար կապ այդ իրավաբանական անձի պահանջի և իրավունքի միջև, հաշվի առնելով դիմումատու-կազմակերպության կարգավիճակը, նրա հիմնադիրներին, ինչպես նաև ստեղծման նպատակը, և իր գործունեության հստակ գծագրված աշխարհագրական սահմանները (*L'Erablière A.S.B.L. v. Belgium**, §§ 28-30):

(գ) Ներպետական օրենքում վիճարկելի իրավունքի առկայությունը

221. Հոդված 6-ը չի պահանջում որոշակի նյութական բովանդակություն ունեցող «իրավունքի» առկայություն Պայմանավորվող Կողմերի ներպետական օրենսդրության մեջ: Սկզբունքորեն, սուբյեկտիվ իրավունքի առկայության փաստը Դատարանը պետք է որոշի ներպետական օրենքին հիման վրա: Դատարանը կարող է որոշում կայացնել հետևյալ իրավունքների առնչությամբ՝ կյանքի, առողջության, առողջ միջավայրի և սեփականությունը հարգելու իրավունք, եթե դրանք ճանաչվում են ներպետական օրենքում (*Athanassoglou and Others v. Switzerland* [ՄՊ], § 44):

222. Վիճարկվող իրավունքը պետք է ունենա իրավական հիմք ներպետական օրենքում: Դատարանը չի կարող հոդված 6§1-ի մեկնաբանությամբ ստեղծել նյութական քաղաքացիական իրավունք, որը կլինի անհիմն Պետության իրավական համակարգում (*Fayed v. the United Kingdom*, § 65):

223. Այնուամենայնիվ, ներպետական հայց ներկայացնելու համար անհրաժեշտ հիմքի առկայությունը պայմանավորված է ոչ միայն քաղաքացիական իրավունքի ներպետական օրենքով սահմանված բովանդակությունից, այլ նաև դատարան բողոքներ ներկայացնելու ընթացակարգային արգելքների (կանխարգելում կամ սահմանափակում) առկայությունից: Կոնվենցիայի հոդված 6§1-ի կիրառումը նման հանգամանքների նկատմամբ տե՛ս հետևյալ գործերում՝ *Al-Adsani v. the United Kingdom* [ՄՊ], §§ 46-47, և *Fogarty v. the United Kingdom* [ՄՊ], § 25):

Այնուամենայնիվ, սկզբունքորեն, հոդված 6-ը չի կարող կիրառվել այ դեպքերում, երբ ներպետական իրավունքը սահմանել է իրավունքի սահմանափակում (*Roche v. the United Kingdom* [ՄՊ], § 119):

224. Որոշելու համար առկա է արդյոք քաղաքացիական «իրավունք» կամ սահմանափակումը նյութական կամ ընթացակարգային դասակարգելու համար որպես հիմք պետք է առաջին հերթին հաշվի առնել ներպետական իրավունքին առնչվող դրույթները և ներպետական դատարանների մեկնաբանությունը (*Masson and Van Zon v. the Netherlands*, § 49): Անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպես է ներպետական իրավունքը դասակարգում տվյալ սահմանափակումը և կենտրոնանալ իրականության վրա (*Van Droogenbroeck v. Belgium*, § 38): Ի վերջո, պարտադիր չէ, որ դատարանի վերջնական որոշումը հետադարձ ուժով զրկի դիմումատուներին իրենց գանգատներում բարձրացված իրավունքը վիճարկելիությունից (*Le Calvez v. France*, § 56): Օրինակ՝ արտաքին քաղաքականության գործողության (ՆԱՏՕ-ի օդային հարվածները Սերբիայի վրա) դատական վերանայման սահմանափակ իրավասությունը չի կարող հետադարձ ուժով զրկել դիմումատուի կողմից Պետության դեմ ներկայացված գանգատները վիճարկելիությունից, քանի որ ներպետական դատարաններն

առաջին անգամ են ըստ էության քննության առնելու այդ հարցը (*Markovic and Others v. Italy* [ՄՊ], §§ 100-02):

225. Այս չափանիշների ներքո, հաշվի առնելով նյութական և ընթացակարգային սահմանափակումները, Դատարանը, օրինակ, որոշեց, որ հոդված 6 § 1 կիրառվի այն պարտականությունների կատարման մասին քաղաքացիական այն հայցերի նկատմամբ, որոնք բերվել են ոստիկանության (*Osman v. the United Kingdom*) կամ տեղական իշխանությունների դեմ (*Z. and Others v. the United Kingdom* [ՄՊ]): Դատարանը քննարկեց այն հարցը, թե արդյոք տեղի են ունեցել 6§1 հոդվածին համապատասխան հատուկ սահմանափակումներ: Մեկ այլ գործում Դատարանը որոշեց, որ զինված ուժերի անդամների նկատմամբ քաղաքացիական պատասխանատվությունից Միացյալ Թագավորության ազատումը հանդիսացել է նյութական սահմանափակում և ներպետական օրենքը, հետևաբար, չի երաշխավորել «սուբյեկտիվ իրավունք» Կոնվենցիայի 6 § 1 հոդվածի իմաստով (*Roche v. the United Kingdom* [ՄՊ], § 124; *Hotter v. Austria* (որոշում), և *Andronikashvili v. Georgia* (որոշում)):

226. Դիմումատուները նույնպես պետք է ունենան ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավունքների նկատմամբ ողջամիտ հայցի հնարավորություն: Դատարանն ընդունել է, որ ասոցացիաները նույնպես ընկնում են հոդվածի 6§1-ի պաշտպանության ներքո, իրենց առանձնահատուկ իրավունքների և անդամների շահերի ճանաչման (*Gorraiz Lizarraga and Others v. Spain*, § 45) կամ նույնիսկ որոշակի իրավունքների ճանաչման նկատմամբ որպես իրավաբանական անձ իրենց կողմից ներկայացված պահանջների ներկայացման դեպքերում (օրինակ՝ հանրության տեղեկացված լինելու իրավունքը և շրջակա միջավայրի հետ կապված հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը՝ տե՛ս՝ *Collectif national d'information et d'opposition à l'usine Melox- Collectif Stop Melox et Mox v. France** (որոշում), կամ երբ ասոցիացիայի գործողությունը չի կարող դիտվել իբրև *actio popularis* (*L'Erablière A.S.B.L. v. Belgium**)):

227. Երբ օրենսդրությունը սահմանում է աշխատանքի կամ որևէ մասնագիտության ընդունելության պայմաններ, թեկնածուն, ով համապատասխանում է պահանջներին, իրավունք ունի ընդունվելու այդ աշխատանքին կամ մասնագիտությանը (*De Moor v. Belgium*, § 43): Օրինակ, եթե դիմումատուն ներկայացնում է հիմնավոր պահանջ առ այն, որ համապատասխանում է բժշկի համար սահմանված իրավական պահանջներին, ապա այս դեպքում հոդված 6-ը կիրառվում է (*Chevrol v. France*, § 55; *Bouilloc v. France** (որոշում)): Ամեն դեպքում, երբ քաղաքացիական իրավունքի վերաբերյալ ընթացակարգերի օրինականության վիճարկման համար նախատեսված է իրավական միջոց, որից դիմումատուն օգտվել է, պետք է ենթադրել, որ տեղի է ունեցել «վեճ» «քաղաքացիական իրավունք»-ի վերաբերյալ, նույնիսկ եթե դիմումատուն փաստացի չի համապատասխանել սահմանված պահանջներին (օրինակ՝ արտասահմանում ստացած բժշկական մասնագիտացմամբ գործունեությունը շարունակելու իրավունք, տե՛ս *Kök v. Turkey**, § 37):

(դ) Իրավունքի «քաղաքացիական» բնույթը

228. Կոնվենցիայի շրջանակներում որպեսզի իրավունքը ճանաչվի քաղաքացիական՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել իրավունքի նյութական բովանդակությանը, այլ ոչ ներպետական օրենսդրությամբ սահմանված դրա իրավական դասակարգմանը: Իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ Դատարանը պետք է հաշվի առնի Կոնվենցիայի օբյեկտը, նպատակը, ինչպես նաև Պայմանավորվող Կողմերի ներպետական իրավական համակարգերի առանձնահատկությունները (*König v. Germany*, § 89):

229. Հիմնականում՝ 6-րդ հոդվածի կիրառելիությունը մասնավոր անձանց միջև ծագած վեճերի նկատմամբ, որոնք դասակարգվել են որպես քաղաքացիական բնույթի վեճեր ներպետական օրենսդրության մեջ, Դատարանի առջև անառարկելի են (տե՛ս՝ *Airey v. Ireland*, § 21):

(ե) Իրավունքի մասնավոր բնույթը՝ նյութական մասը

230. Դատարանը գտնում է, որ հոդված 6 § 1-ի ներքո կարող են ընկնել այն ընթացակարգերը, որոնք ներպետական օրենսդրության մեջ թեև հանդես են գալիս «հանրային իրավունք»-ի ներքո, դրանց արդյունքն որոշիչ է մասնավոր իրավունքների և պարտականությունների համար: Այսպիսի ընթացակարգերը կարող են, *inter alia*, առնչվել հողը կամ տարածքը վաճառելու թույլտվության հետ (*Ringeisen v. Austria*, § 94), մասնավոր կլինիկա ունենալու (*König v. Germany*, §§ 94-95), կառուցապատման թույլտվության (տե՛ս, ի թիվս այլոց, *Sporrong and Lönnroth v. Sweden*, § 79), եկեղեցական կառույցի նկատմամբ սեփականության և օգտագործման իրավունքի (*Sâmbata Bihor Greco-Catholic Parish v. Romania**, § 65), գործունեություն իրականացնելու համար վարչական թույլտվության (*Bentham v. the Netherlands*, § 36), ոգելից խմիչքներ վաճառելու լիզենզիայի (*Tre Traktörer Aktiebolag v. Sweden*, § 43) կամ վեճի փոխհատուցումը վճարելու՝ աշխատանքի հետ առջվող հիվանդության կամ վթարի հարցերին (*Chaudet v. France**, § 30):

Նույն հիմքով 6-րդ հոդվածը կիրառվում է մասնագիտական մարմինների նկատմամբ կարգապահական վարույթների վերաբերյալ, երբ վտանգված է մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը (*Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium*), Պետության դեմ պարտականությունների չկատարման վերաբերյալ հայցի նկատմամբ (*X v. France*), հայցվորի իրավիճակը վատթարացնող վարչական որոշումը չեղյալ հայտարարելու հայցի նկատմամբ (*De Geouffre de la Pradelle v. France*), հայցվորներին սեփականության իրավունքով պատկանող ջրերում ձկնորսություն իրականացնելու արգելքին վերաբերող վարչական վարույթների նկատմամբ (*Alatulkkila and Others v. Finland*, § 49) և պետական պատվերի ընթացակարգերի նկատմամբ, որը կարող է առնչություն ունենալ քաղաքացիական իրավունքի խախտման հետ, օրինակ, երբ հայտերի ընտրության ժամանակ խտրականություն կցուցաբերվի կրոնական կամ քաղաքական կազմակերպությունների նկատմամբ (*Tinnelly & Sons Ltd and Others and McElduff and Others v. the United Kingdom*, §61; հակառակը տե՛ս՝ *I.T.C. Ltd. v. Malta* (որոշում):

231. Քրեական դատավարություններում հողված 6§1-ը կիրառվում է քաղաքացիական հայցի նկատմամբ (*Perez v. France* [ՄՊ], §§ 70-71), բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հայցը ներկայացվել է միայն անձնական վրեժխնդրության կամ պատժիչ նպատակներով (*Sigalas v. Greece**, § 29, և *Mihova v. Italy** (որոշում): Կոնվենցիան որպես այդպիսին չի երաշխավորում երրորդ կողմի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ քրեական հանցագործության համար դատապարտելու իրավունքը: Կոնվենցիայի շրջանակների ներքո ընկնելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդ իրավունքը ուղղակիորեն կապված լինի զոհի կողմից ներպետական օրենսդրությամբ երաշխավորված քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունքի հետ, նույնիսկ եթե այդ հայցը տրվել է միայն սիմվոլիկ փոխհատուցում ստանալու կամ «բարի համբավ»-ը պահպանելու համար (*Perez v. France* [ՄՊ], § 70; տե՛ս նաև՝ սիմվոլիկ պարգևատրում, *Gorou v. Greece (no. 2)* [ՄՊ], § 24): Այդ իսկ պատճառով, քրեական դատավարություններում 6-րդ հողվածը կիրառվում է այն ընթացակարգերի նկատմամբ, որի ժամանակ կողմը դառնում է քաղաքացիական հայցվոր, բացառությամբ այն դեպքերի, երբ ուղղակի հրաժարվել է փոխհատուցում ստանալու իր իրավունքից:

232. Հողված 6 § 1-ը նույնպես կիրառվում է այն քաղաքացիական վարույթների նկատմամբ, որի ժամանակ հայցվորը ներկայացրել է Պետության կողմից վատ բուժօգնություն ցուցաբերելու արդյունքում պատճառված վնասի փոխհատուցում՝ (*Aksoy v. Turkey*, § 92):

(գ) Այլ վեճերի նկատմամբ կիրառումը

233. Դատարանը գտել է, որ հողված 6 § 1 կիրառվում է այն վեճերի նկատմամբ, որոնք վերաբերում են սոցիալական հարցերին, օրինակ՝ աշխատողին մասնավոր կազմակերպությունից հեռացնելու դեպքում՝ *Buchholz v. Germany*, սոցիալական ապահովագրության նպաստների վճարման՝ *Feldbrugge v. the Netherlands*, որոնք գոյացել է ոչ ներդրումային ֆոնդերից (*Salesi v. Italy*), և նույնպես պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին վերաբերող գործերին (*Schouten and Meldrum v. the Netherlands*): Այս դեպքերում Դատարանը հաշվի է առել այն, որ մասնավոր իրավունքի ասպեկտները գերակշռել են հանրային իրավունքի նկատմամբ: Ի լրումն, այն գտել է նաև, որ առկա էին նմանություններ սոցիալական նպաստներ ստանալու և նացիստների հետապնդումից փոխհատուցում ստանալու իրավունքի միջև (*Wos v. Poland*, § 76):

234. Պետական ծառայողներին վերաբերող վեճերը սկզբունքորեն ընկնում են հողված 6 § 1-ի ներքո: *Pellegrin v. France* [ՄՊ], §§ 64-71, գործում Դատարանն ընդունել է «գործառնական» չափանիշ: *Vilho Eskelinen and Others v. Finland* [ՄՊ], §§ 50-62, վճռում Դատարանը որոշել է ընդունել մի նոր մոտեցում: Սկզբունքն այսուհետ կայանում էր նրանում, որ հողված 6-ի կիրառելիության դեպքում պատասխանող կառավարությունը պետք է առաջինը՝ ցույց տա, որ ներպետական օրենսդրությունը քաղաքացիական ծառայողի համար չի երաշխավորում դատարանի մատչելիության իրավունք և, երկրորդ՝ քաղաքացիական ծառայողի

հոդված 6-ով երաշխավորված իրավունքների սահմանափակումն արդարացված է: Եթե դիմումատուն ներպետական օրենսդրության համաձայն ունեցել է արդար դատաքննության իրավունք, ապա հոդված 6-ը կիրառելի է (նույնիսկ գործող սպաների և նրանց հայցերի զինվորական դատարանների առջև՝ *Pridatchenko and Others v. Russia*, § 47): Երկրորդ չափանիշի կապակցությամբ՝ սահմանափակումը պետք է արդարացվի հիմնվելով՝ «Պետության շահերի հետ կապված օբյեկտիվ հիմունքների վրա», որը պարտադրում է Պետությանը ցույց տալ, որ քննարկվող վեճի առարկան կապված է հանրային իշխանության իրագործման հետ կամ վեճը ընդգրկում է հարցեր, որոնք վերաբերում են քաղաքացիական ծառայողին և Պետությանը: Այդ իսկ պատճառով, սկզբունքորեն, չի կարելի հանել սովորական աշխատանքային վեճերը (աշխատավարձ, նպաստ կամ նմանատիպ իրավունքներ) հոդված 6-ի շրջանակներից դուրս, ելնելով քաղաքացիական ծառայողի և Պետության միջև առանձնահատուկ բնույթ կրող հարաբերություններից (վեճ, որը վերաբերում է հատուկ նպաստ ստանալու ուստիկանի իրավունքին՝ *Vilho Eskelinen and Others v. Finland* [ՆՊ]): Վերջերս *Vilho Eskelinen* վճռում ամրագրված չափանիշից ելնելով, Դատարանը գտավ, որ հոդված 6§1-ը կիրառելի է դեսպանատան աշխատողներին անհիմն ազատման գործի նկատմամբ (Լեհական դեսպանատան աշխատակիցներ հանդիսացող քարտուղարը և հեռախոսավարը, տե՛ս *Cudak v. Lithuania* [ՄՊ], §§ 44-47), ավագ ուստիկանը (*Šikic v. Croatia*, §§ 18-20) կամ զինվորական սպայերը զինվորական դատարաններում (*Vasilchenko v. Russia*, §§ 34-36), պառլամենտական օգնականի պաշտոնի ձեռք բերման իրավունքը (*Savino and Others v. Italy**), դատավորների դեմ կարգապահական վարույթը (*Olujic v. Croatia*), դատախազի հայցով հարուցված նախագահի որոշումը՝ իր տեղափոխման մասին (*Zalli v. Albania* (որոշում և այլն) և մաքսատան ծառայողի մասնագիտական կարիերան (պաշտոնի բարձրացման համար դիմում ներկայացնելու իրավունք՝ *Fiume v. Italy**, §§ 33- 36):

235. Սահմանադրական վեճերը կարող են նույնպես ընկնել հոդված 6-ի շրջանակների ներքո, եթե սահմանադրական դատավարությունները ընդհանուր իրավասության դատարաններում ունեն որոշիչ դեր վեճի արդյունքի վրա («քաղաքացիական» իրավունքի մասով) (*Ruiz-Mateos v. Spain*): Սա չի կիրառվում այն վեճերի դեպքում, որոնք վերաբերում են նախագահի՝ իբրև բացառիկ միջոց անձին քաղաքացիություն շնորհելու որոշմանը կամ այն որոշմանը, որը վերաբերում է Նախագահի կողմից երդման ենթադրյալ խախտմանը, քանի որ այդ դատավարությունները չեն վերաբերում քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին (*Paksas v. Lithuania* [ՄՊ], §§ 65-66): Հոդված 6-ի կիրառումը Սահմանադրական դատարանի կողմից միջանկյալ միջոցի ստանձման դեպքում, տե՛ս *Kübler v. Germany*, §§ 47-48:

236. Ի վերջո, հոդված 6-ը նույնպես կիրառվում է այլ ոչ նյութական հարցերի նկատմամբ, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրը, որտեղ կարող են ծագել կյանքի, առողջության և առողջ միջավայրի հետ կապված վեճեր (*Taskin and Others v. Turkey*), երեխաների դաստիարակման հարցերը (*McMichael v. the United Kingdom*), երեխաներին դպրոց տեղավորելու՝ *Ellès and Others v. Switzerland**, §§

21-23), հայրություն ճանաչելու իրավունքը (*Alaverdyan v. Armenia* (որոշում), § 33), ազատության իրավունքը (*Laidin v. France (no. 2)**), բանտարկյալի կալանքի պայմանների հետ կապված հարցերը, օրինակ՝ խիստ ռեժիմի տակ գտնվող (տե՛ս *Enea v. Italy* [ՄՊ], §§ 97-107) կամ բարձր անվտանգության մակարդակ ունեցող բանտախցերի բանտարկյալների նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ վեճերը (*Stegarescu and Bahrin v. Portugal**) կամ կարգապահական վարույթները, որոնց արդյունքում սահմանափակումներ են դրվում բանտում ընտանեկան այցելությունների վրա (*Gülmez v. Turkey*, § 30), բարի համբավի իրավունքը (*Helmerts v. Sweden*, § 27), վարչական փաստաթղթերի մատչելիության իրավունքը (*Loiseau v. France* (որոշում), կամ ոստիկանության համակարգում անձի անունն ընդգկելու վեճը, որը կարող է ազդել բարի համբավի իրավունքի, սեփականության պահպանման իրավունքի և աշխատանքի տեղավորվելու հնարավորության, և, հետևաբար, ապրուստ վաստակելու իրավունքի վրա (*Pocius v. Lithuania*, §§ 38-46, և *Užkauskas v. Lithuania*, §§ 32-40), ասոցիացիայի անդամ դառնալու իրավունքի վրա (*Sakellaropoulos v. Greece** (որոշում): Նմանապես ասոցիացիայի գրանցման հետ կապված հարցերը կարող են շոշափել վերջինիս քաղաքացիական իրավունքները, նույնիսկ եթե ներպետական օրենսդրության համաձայն, ասոցիացիայի անկախության հարցը ընկնում է հանրային օրենքի շրջանակին՝ *APEH Üldözötteinek Szövetsége and Others v. Hungary*, §§ 34-35) և ի վերջո, բարձրագույն կրթությունը արտասահմանում շարունակելու իրավունքը (*Emine Araç v. Turkey*, §§ 18-25), որը *a fortiori*, վերաբերում է կրթության իրավունքին (*Oršuš and Others v. Croatia* [ՄՊ], § 104): Այս ընդլայնումը թույլ է տալիս Դատարանին դիտարկելու հոդված 6-ի քաղաքացիական մասը ոչ միայն որպես նյութական իրավունքներին, այլ նաև անձի անձնական բնույթ ունեցող իրավունքներին անդրադարձող:

(ե) Հոդվածի շրջանակներից դուրս հարցեր

237. Միայն այ փաստը, որ վեճը նյութական բնույթ ունի, բավական չէ հոդված 6 § 1-ը քաղաքացիական մասի ներքո կիրառելու համար (*Ferrazzini v. Italy* [ՄՊ], § 25):

238. Հոդված 6-ի շրջանակներից դուրս հարցերը ներառում են հարկերի հետ կապված դատավարությունները. հարկերը հանդիսանում են հանրային իրավունքի պրերոգատիվը՝ հարկ վճարողի և հանրության միջև գերիշխում են հանրային ասպեկտները (*Ferrazzini v. Italy* [ՄՊ], § 29): Նմանապես, մաքսատուրքերի վճարումների վերաբերյալ նախնական դատավարությունները նույնպես բացառված են հոդված 6-ի շրջանակներից (*Emesa Sugar N.V. v. the Netherlands* (որոշում):

239. Նույնը վերաբերում է նաև իմիգրացիոն՝ օտարերկրացու մուտքի, ապրուստի և դուրս բերման հարցերի հետ, քաղաքական ապաստան տալու կամ դեպորտին առնչվող դատավարություններին (միջնորդություն՝ դեպորտի մասին դատական որոշումը չեղարկելու մասին) *Maaouia v. France* [ՄՊ] § 38; հանձնում՝ տե՛ս՝ *Peñafiel Salgado v. Spain** (որոշում), և *Mamatkulov and Askarov v. Turkey* [ՄՊ] §§ 81-83, և ապաստան փնտրողի կողմից ապաստան տալու մերժման

արդյունքում առաջացած վնասի վերաբերյալ գործողության մասով՝ տե՛ս՝ *Panjeighalehei v. Denmark* (որոշում), հաշվի չառնելով անձնական կամ ընտանեկան կյանքի բարդությունները կամ աշխատանքային հեռանկարները: Չկիրառելիությունը տարածվում է նաև Շենգենյան տեղեկատվության համակարգում օտարերկրացու ներառմանը՝ *Dalea v. France** (որոշում): Անձնագիր և քաղաքացիություն ունենալու իրավունքը չի ընկնում հոդված 6-ի շրջանակներում (*Smirnov v. Russia* (որոշում): Այնուամենայնիվ, օտարերկրացու կողմից աշխատանքի թույլտվություն ստանալու իրավունքը կարող է ընկնել հոդված 6-ի ներքո ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի համար, նույնիսկ այն պարագայում, երբ ներպետական օրենքի համաձայն, աշխատողը չունի *locus standi* դիմելու համար, հիմնավորելով, որ ներառվածը հանդիսանում է միայն որպես ընթացակարգային արգելք և չի ազդում իրավունքի էության վրա (*Jurisc and Collegium Mehrerau v. Austria*, §§ 54-62):

240. Համաձայն *Vilho Eskelinen and Others v. Finland* [ՄՊ] վճռի, պետական ծառայողներին վերաբերող վեճերը չեն ընկնում հոդված 6-ի շրջանակների ներքո, երբ սահմանված երկու չափանիշներն առկա են (տե՛ս վերը՝ 234 պարբերությունը): Սա այն դեպքն է, երբ կարգապահական հիմունքներով ծառայությունից ազատված զինվորը զրկվել էր դատական կարգով որոշումը բողոքարկելու իրավունքից, քանի որ վիճարկվում էր առանձնահատուկ կապը հայցվորի և Պետության միջև (*Sukit v. Turkey* (որոշում): Նույնը կիրառվել է թոշակի անցած դատավորին նախկին պաշտոնին վերականգնելու մասին վեճին (*Apay v. Turkey** (որոշում):

241. Ի վերջո, քաղաքական իրավունքները, օրինակ՝ ընտրություններին թեկնածությունը դնելու կամ մանդատը պահպանելու իրավունքը (ընտրական վեճ, տե՛ս՝ *Pierre-Bloch v. France*, § 50), որպես խորհրդարանի նախկին անդամ թոշակ ստանալու իրավունքը (*Papon v. France* (որոշում), կամ քաղաքական գործունեությունը շարունակելու կուսակցության իրավունքը (կուսակցության լուծարում՝ *Refah Partisi (The Welfare Party) and Others v. Turkey** (որոշում)) չի կարող համարվել քաղաքացիական իրավունք Կոնվենցիայի հոդված 6 § 1-ի բովանդակության համաձայն: Նմանապես, հոդված 6 § 1-ի ներքո ենթակա չեն քննման նաև այն դատավարությունները, որտեղ ոչ պետական կազմակերպությունները, որոնք կատարում են խորհրդարանական ընտրությունների դիտարկումներ, ստացել են հայցվորին չվերաբերող փաստաթղթերին ծանոթանալու մերժում (*Geraguyun Khorhurd Patgamavorakan Akumb v. Armenia* (որոշում):

Ի լրումն, Դատարանը վերջերս վերահաստատեց, որ բաց դատավարության հրապարակման իրավունքը՝ քաղաքացիական իրավունք չէ (*Mackay and BBC Scotland v. the United Kingdom*, §§ 20-22):

(ը) Հոդված 6-ի կիրառելիությունը նախնական և այլ ոչ հիմնական դատավարությունների նկատմամբ

242. Նախնական դատավարությունները, որոնք վերաբերում էին միջանկյալ միջոցների կիրառմանը, հիմնականում չեն դիտարկվում որպես քաղաքացիական

իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցը «լուծող» ընթացակարգեր և չեն ընկնում հոդված 6-ի ներքո (տե՛ս, *ի թիվս այլոց, Verlagsgruppe News GmbH v. Austria* (որոշում), և *Libert v. Belgium** (որոշում): Այնուամենայնիվ, Դատարանը վերջերս փոխել է նախորդ դատական նախադեպերում ձևավորած իր մոտեցումը՝ սահմանելով նորը (*Micallef v. Malta* [ՄՊ], §§ 83-86): Նշված գործում Դատարանը սահմանեց, որ 6-րդ հոդվածի կիրառելիությունը միջանկյալ միջոցների նկատմամբ պայմանավորված է որոշակի հանգամանքներով: Առաջին՝ վիճարկվող իրավունքը պետք է ինչպես հիմնական, այնպես էլ միջանկյալ միջոցների վերաբերյալ դատավարություններում լինի «քաղաքացիական» Կոնվենցիայի իմաստով: Երկրորդ՝ միջանկյալ միջոցի բնույթը, օբյեկտը, նպատակը և հետևանքները պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն: Յուրաքանչյուր դեպքում, երբ կորոշվի, որ տվյալ միջոցը, անկախ դրա գործողության ժամկետի, սահմանում է քաղաքացիական իրավունք կամ պարտականություն, հոդված 6-ը կիրառելի կլինի:

Հոդված 6-ը կիրառելի է այն նախնական միջանկյալ միջոցների դատավարությունների նկատմամբ, որոնց առարկան համընկնում է հիմնական դատավարության առարկային և միջոցի ընդունման մասին որոշումը ենթակա է անհապաղ կատարման և վերաբերում է միևնույն իրավունքին (*RTBF v. Belgium**, §§ 64-65):

243. Ինչ վերաբերում է քրեական և քաղաքացիական դատավարություններին, այն դեպքում, երբ ներպետական օրենսդրությունը նախատեսում է դատավարության երկու փուլ (առաջին փուլում դատարանը որոշում է վնասի հատուցման իրավունքի առկայություն և երկրորդ փուլում դատարանը սահմանում է գումարի չափը), Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի իմաստից ելնելով՝ ողջամիտ է դիտարկել քաղաքացիական իրավունքը որպես չորոշված, քանի դեռ գումարի հստակ չափը չի սահմանվել: Իրավունքը սահմանելը նշանակում է ոչ միայն դրա առկայության հաստատումը, այլ նաև այդ իրավունքի ծավալի կամ իրագործման պայմանների որոշումը, որի ժամանակ կորոշվի նաև պատճառված վնասի հատուցման չափը (*Torri v. Italy*, § 19):

244. Ինչ վերաբերում է դատարանի որոշումների իրականացմանը, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառվում է «քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելու» դատավարությունների բոլոր փուլերի նկատմամբ՝ ներառյալ ըստ էության վճռից հետո հաջորդող փուլերը: Դատարանի կողմից կայացված վճռի իրականացումը, այդ իսկ պատճառով, 6-րդ հոդվածի համաձայն պետք է դիտարկվի իբրև դատավարության անբաժանելի մասը (*Hornsby v. Greece*, § 40, և *Romanczyk v. France**, § 53): Անկախ նախնական դատավարությունների նկատմամբ 6-րդ հոդվածը կիրառելիությունից, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործը լուծող ակտը պարտադիր չէ կայացվի 6-րդ հոդվածը կիրառմամբ իրականացվող վճռի շրջանակներում (*Buj v. Croatia*, § 19): Օտարերկրյա դատարանի կողմից ընդունված բռնագրվման մասին որոշման *euxequatur-ն* ընկնում է 6-րդ հոդվածի քաղաքացիական մասի ներքո (*Saccoccia v. Austria* (որոշում)):

245. Դատավարությունների վերաբացման դեպքերում հողված 6-ը չի կիրառվում, եթե գործն ավարտվել է դատարանի վերջնական վճռով (*Sablon v. Belgium**, § 86): Այս մոտեցումը տարածվում է նաև գործի վերաբացման մասին այն դիմումներին, որոնք ներկայացվել են Դատարանի կողմից Կոնվենցիայի խախտումն արձանագրելուց հետո (*Verein gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (no. 2)* [ՄՊ], § 24): Այնուամենայնիվ, առկա են նաև բացառիկ դեպքեր, երբ ներպետական համակարգում վերաբացման համար նախատեսված դատավարությունը հանդիսանում է այն միակ միջոցը, որը հնարավորություն կտա հայցվորին պահանջել քաղաքացիական իրավունքի խախտման արդյունքում պատճառված վնասի փոխհատուցում և, որի արդյունքը վճռորոշ է «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» համար (*Melis v. Greece**, §§ 19-20):

2. «Քրեական մեղադրանք» հասկացությունը

Հոդված 6 § 1 Արդար դատավարության իրավունք

«1. Յուրաքանչյուր ոք... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վար ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք...»

(ա) Ընդհանուր սկզբունքներ

246. «Քրեական մեղադրանք» հասկացությունն ունի «ինքնուրույն» իմաստ, անկախ է անդամ Պետությունների իրավական համակարգերում սահմանված դասակարգումներից (*Adolf v. Austria*, § 30):

247. «Մեղադրանք» հասկացությունը պետք է դիտարկվի Կոնվենցիայի իմաստով: Այդ իսկ պատճառով, այն կարող է սահմանվել իբրև «իրավասու մարմնի կողմից անձին ներկայացված պաշտոնական ծանուցում իր կողմից կատարված քրեական հանցանքի մասին»: Այս սահմանումը նույնպես համապատասխանում է այն թեսթին, թե արդյոք «[կասկածյալի] դրությունն էականորեն ազդեցության էր ենթարկվել» (տե՛ս, օրինակ, *Deweert v. Belgium*, §§ 42 և 46, և *Eckle v. Germany*, § 73): Հետևաբար, օրինակ՝ պարեկային սուուգման ժամանակ անձի կողմից արած հայտարարությունները, առանց նրան տեղյակ պահելու իր հարցաքննության պատճառի կամ նրա դեմ կասկածի բնույթի և պատճառի մասին, կամ իրեն տեղեկացրել են, որ իր հայտարարությունները կարող են օգտագործվել իր դեմ, էականորեն ազդել են նրա դրության վրա, չնայած որ նա պաշտոնապես չի մեղադրվել որևէ քրեական հանցանք կատարելու մեջ (*Aleksandr Zaichenko v. Russia*, § 43): Դատարանը նույնպես գտավ, որ ոստիկանությունում պահվող անձը, որից պահանջվել էր երդվել մինչև որպես վկա հարցաքննվելը, արդեն իսկ հանդիսանում էր «քրեական մեղադրանք»-ի առարկա և ուներ լրություն պահպանելու իրավունք (*Brusco v. France** §§ 46-50):

248. Ինչ վերաբերում է «քրեական» հասկացության ինքնուրույնությանը՝ Կոնվենցիան չի առարկում Պայմանավորվող Պետություններում «ապաքրեականացմանը» տանող գործողությունների դեմ: Այնուամենայնիվ, ապաքրեականացմանը հաջորդող որպես «կարգավորող» դասակարգվող

հանցանքները, կարող են ընկնել «քրեական» հանցանքի ինքնուրույն գաղափարի ներքո: Այդ հանցանքների բացառումը Պետության հայեցողության վրա թողնելը կարող է հանգեցնել Կոնվենցիայի նպատակի հետ անհամապատասխանության (*Öztürk v. Germany*, § 49):

249. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական տեսանկյունի կիրառելիությունը գնահատելու մեկնարկային կետը հիմնված է այն չափանիշի վրա, որն ընդգծված է *Engel and Others v. the Netherlands* (§§ 82-83) գործում. 1. դասակարգումը ներպետական օրենսդրության մեջ, 2. հանցանքի բնույթը, և 3. պատժի խստությունը, որ պետք է կրի անձը:

250. Առաջին չափանիշը հարաբերական կշիռ է և ծառայում է որպես մեկնարկային կետ: Եթե ներպետական օրենսդրությունը դասակարգում է հանցանքը որպես քրեական, ապա այն պետք է լինի վճռորոշ: Այլ կերպ Դատարանը կդիտարկի ներպետական դասակարգումներից դուրս և կքննի քննարկվող վարույթի էությունը:

251. Գնահատելով երկրորդ չափանիշը, որը համարվում է ավելի կարևոր (*Jussila v. Finland* [GC], § 38), պետք է հաշվի առնվեն հետևյալ գործոնները՝

- արդյո՞ք իրավաբանական օրենքն ուղղված է միայն մի առանձնահատուկ խմբի կամ ունի ընդհանուր պարտադիր բնույթ (*Bendenoun v. France*, § 47)
- արդյո՞ք դատավարությունները հարուցված են պետական այն մարմնի կողմից, որն օժտված է հարկադրանք կիրառելու լիազորություններով (*Benham v. the United Kingdom* [GC], § 56)
- արդյո՞ք իրավաբանական օրենքն ունի պատժիչ նպատակ (*Öztürk v. Germany*, § 53, and *Bendenoun v. France*, § 47);
- արդյո՞ք որևէ պատժի սահմանումը կախված է մեղավորության հայտնաբերման հետ (*Benham v. th United Kingdom* [GC], § 56)
- ինչպես են դասակարգված համեմատական դատավարությունները Եվրոպական Խորհրդի անդամ Պետություններում (*Öztürk v. Germany*, § 53)
- այն փաստը, որ հանցանքը չի առաջացնում քրեական գրառում կարող է լինել կարևոր, բայց ոչ վճռական, քանի որ այն սովորաբար արտացոլվում է ներպետական դասակարգումներում (*Ravnsborg v. Sweden*, § 38):

252. Երրորդ չափանիշը սահմանվում է պատժի հնարավոր առավելագույն չափին հղում կատարելով, որի համար կիրառվում է համապատասխան օրենքը (*Campbell and Fell v. the United Kingdom*, § 72, and *Demicoli v. Malta*, § 34):

253. Երկրորդ և երրորդ չափանիշները, որոնք ամրագրվել են *Engel and Others v. the Netherlands* գործում այլընտրանքային են և ոչ պարտադիր կերպով կուտակային: Որպեսզի կիրառվի հոդված 6-ը, բավական է, որ Կոնվենցիայի տեսակետից քննվող հանցանքն իր բնույթով դիտարկվի որպես քրեական կամ այն, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող տույժի բնույթը և խստության չափը ընդհանուր առմամբ համապատասխան են «քրեական» ոլորտին (*Öztürk v. Germany*, § 54, և *Lutz v. Germany*, § 55): Կուտակային մոտեցումը կարող է, այնուամենայնիվ, ընդունվել այն դեպքում, երբ յուրաքանչյուր

չափանիշի առանձին վերլուծությունը թույլ չի տալիս հասնելու պարզ եզրահանգմանը, այսինքն՝ քրեական մեղադրանքի առկայությանը (*Bendenoun v. France*, § 47):

254. «Քրեական մեղադրանք» և «մեղադրվող քրեական հանցանք կատարելու մեջ» եզրույթներն օգտագործելիս՝ 6-րդ հոդվածի երեք պարբերությունները վերաբերում են նմանատիպ իրավիճակներին: Այդ իսկ պատճառով, հոդված 6-ի կիրառելիության թեսթը, իր քրեական մասի համաձայն, երեք պարբերությունների համար կլինի նույնը:

(բ) Ընդհանուր սկզբունքների կիրառումը

Կարգապահական դատավարություններ

255. Զինվորական կարգապահության դեմ ուղղված հանցանքները, կարգապահական միավորումում կրելով մի քանի ամիս տևողությամբ կալանավորման պատժամիջոց, ընկնում են Կոնվենցիայի հոդված 6-ի քրեական մասի ներքո (*Engel and Others v. the Netherlands*, § 85): Ընդհակառակը, երկօրյա ձերբակալությունը հանդիսանում է չափազանց կարճ տևողություն ունեցող պատժամիջոց՝ «քրեական օրենքի» ոլորտի շրջանակներին պատկանելու համար:

256. Կոնվենցիայի հոդված 6-ը հստակորեն կիրառվում է զինվորական դատարանում իրականացվող դատավարությունների նկատմամբ (*Findlay v. the United Kingdom*, § 69):

257. Մասնագիտական կարգապահական դատավարությունների վերաբերյալ հարցը մնում է բաց, քանի որ Դատարանն որոշել է, որ այն անհրաժեշտ չէ գործի որոշման համար՝ եզրակացնելով, որ դատավարությունը պատկանում է քաղաքացիական ոլորտին (*Albert and Le Compte v. Belgium*, § 30): Կարգապահական դատավարությունների դեպքում, որոնց արդյունքում քաղաքացիական ծառայողն ուղարկվում է հարկադիր թոշակի, Դատարանը հայտնաբերեց, որ այսպիսի դատավարությունները հոդված 6-ի իմաստի սահմաններում քրեական չեն այն նկատառումով, որ ներպետական իշխանությունները կարողացել են պահպանել իրենց որոշումը բացառապես վարչական ոլորտի շրջանակներում (*Moulet v. France* (որոշում)):

258. Հաշվի առնելով բանտի հետ առնչվող և բանտի առանձնահատուկ կարգապահական ռեժիմը, հոդված 6-ը կարող է կիրառվել բանտի կարգապահության դեմ ուղղված հանցագործությունների դեմ, մեղադրանքների և պատիժների խստության բնույթի հիման վրա (վերահսկողություն իրականացնող տեսուչին սպանելու սպառնանքին վերաբերվող մեղադրանքը և բանտի տեսուչի վրա հարձակվելը, որի արդյունքում համապատասխանաբար ավելացվում է 47 օրվա կալանք (*Ezeh and Connors v. the United Kingdom* [ՄՊ], § 82; ի հակառակն տե՛ս *Stitic v. Croatia*, §§ 51-63, որտեղ հոդված 6-ը որոշվել է չկիրառվել այն կարգապահական դատավարություններում, որոնք հանգեցնում են 47 օրյա մեկուսի բանտարկության և 3 ամսվա ընթացքում հայցվորի բանտի ներսում տեղափոխման սահմանափակման պատժին, առանց վերջինիս բանտարկման ժամկետի երկարացմանը):

259. Այնուամենայնիվ, բանտային համակարգին վերաբերող դատավարությունները որպես այդպիսին չեն ընկնում հոդված 6-ի քրեական մասի շրջանակների ներքո: Այսպես, օրինակ, բանտարկյալի տեղափոխումը բարձր վերահսկողություն ունեցող բաժանմունք չի վերաբերում քրեական մեղադրանքին. այդ միջոցը և հաջորդող սահմանափակումները վիճարկելու դատարանի մատչելիության իրավունքը պետք է քննվի հոդված 6 § 1 քաղաքացիական մասի համաձայն (*Enea v. Italy* [ՄՊ], § 98):

260. Դատարանի կողմից կարգադրած միջոցները՝ այն կանոնների համաձայն, որոնք վերաբերում են դատարանի առջև ցուցաբերած անկարգ վարքին (անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ), չեն ընկնում հոդված 6-ի շրջանակների ներքո, քանի որ դրանք մոտ են կարգահապահական լիազորությունների իրագործմանը (*Ravnsborg v. Sweden*, § 34, և *Putz v. Austria*, §§ 33-37): Այնուամենայնիվ, պատժի բնույթից և խստության աստիճանից ելնելով հոդված 6-ը կարող է կիրառվել այն դատապարտման նկատմամբ, որը ներպետական օրենքում դասակարգված է որպես քրեական հանցանք՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար (*Kyprianou v. Cyprus* [ՄՊ], §§ 61-64՝ 5 օր կալանավորում) կամ՝ վարչական իրավախախտում (*Zaicevs v. Latvia*, §§ 31-36, որը վերաբերում է 3 -օրյա վարչական կալանքին):

261. Ինչ վերաբերում է դատական հետաքրքրության գաղտնիության խախտմանը, ապա անհրաժեշտ է տարանջատում կատարել մի կողմից, այն անձանց միջև, որոնք բոլորից ի վեր կապված են հետաքննության գաղտնիության հետ, ինչպիսիք են՝ դատավորները, իրավաբանները և մնացած այն անձինք, ովքեր սերտորեն կապված են դատարանների գործունեության հետ, և մյուս կողմից այն կողմերի միջև, որոնք չեն գործում դատական համակարգի կարգապահական ոլորտում (*Weber v. Switzerland*, §§ 33-34):

262. Ինչ վերաբերում է Խորհրդարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքին՝ Դատարանը տարանջատում է օրենսդրի այն լիազորությունների միջև, որոնք մի կողմից կարգավորում են իրենց անդամների արտոնության խախտման վերաբերյալ դատավարություններին և, մյուս կողմից, ընդլայնված իրավասությունը՝ ոչ անդամների նկատմամբ որևէ այլ տեղ կատարված գործողությունների համար պատժելու վերաբերյալ: Առաջին դեպքը կարող է դիտվել իբրև կարգապահական բնույթ ունեցող, իսկ երկրորդ դեպքում՝ դատարանը համարում է քրեական՝ հաշվի առնելով ընդհանուր սկզբունքը և կատարված պատժի խստությունը (մինչև 60 օր բանտարկություն և տուգանք *Demicoli v. Malta*, §32):

Վարչական, հարկային, մաքսային և հակամենաշնորհային իրավունքի դատավարություններ

263. Հետևյալ վարչական իրավախախտումները կարող են ընկնել հոդված 6-ի քրեական մասի շրջանակների ներքո՝

- ճանապարհի և խցանմանը առնչվող իրավախախտումները, որոնք պատժվում են տուգանքով կամ վարորդական սահմանափակումներով (*Lutz v. Germany*, § 182; *Schmautzer v. Austria*; և *Malige v. France*),

ինչպիսին են պատժիչ կետերի կամ որակազրկման միջոցների ավելացումը,

- թեթև վնասվածք պատճառող մանր իրավախախտումներ (*Lauko v. Slovakia*),
- իրավախախտումներ, կատարված սոցիալական ապահովագրության օրենսդրության դեմ (մուծելու անունակությունը՝ չնայած տուգանքի չափի փոքրությանը *Hüseyin Turan v. Turkey**, §§ 18-21):

264. Դատարանը չի ընդունում հոդված 6-ի կիրառելիությունը որպես նախազգուշացնող միջոց, օրինակ՝ վարորդական իրավունքից անհապաղ զրկելու դեպքում (*Escoubet v. Belgium* [ՄԴ]):

265. Հոդված 6-ը որոշվել է կիրառվել հավելյալ հարկի հետ կապված դատավարություններում, հիմնվելով հետևյալ տարրերի վրա՝ 1. տուգանք սահմանող օրենքը ներառել է բոլոր քաղաքացիներին իբրև հարկատուներ, 2. հավելումը չի դիտվել որպես դրամական փոխհատուցում կրած վնասի դիմաց, այլ իրականում պատիժ է կրկնակի խախտումը կանխարգելու համար, 3. այն կատարվել է ընդհանուր օրենքի համաձայն որպես պատժամիջոց և 4. հավելումն էական էր (*Bendenoun v. France*): Հանցանքի քրեական բնույթը կարող է հանդիսանալ բավարար փաստ հոդված 6-ը կիրառելու համար, նույնիսկ հավելյալ հարկի գումարի փոքր լինելու դեպքում (10 տոկոս վերազնահատված հարկ *Jussila v. Finland* [ՄԴ], § 38):

266. Այնուամենայնիվ, հոդված 6-ը չի տարածվում «մաքուր» հարկի չափի որոշման դատավարությունների վրա, ինչպես նաև այն վարույթների վրա, որոնք առնչվում են ժամկետանց տոկոսների վճարման հետ, այն նկատառումով, որ դրանք կիրառվում են հիմնականում որպես հարկային մարմիններին հասցրած վնասի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու համար, քան կրկնակի խախտման կանխարգելման համար (*Mieg de Boofzheim v. France* (որոշում)):

267. Հոդված 6-ի քրեական մասը կիրառվում է մաքսային օրենքի (*Salabiaku v. France*), հակամենաշնորհային իրավունքի (*Société Stenuit v. France*) և Դատարանի կողմից սահմանված ֆինանսական հարցերի իրավասությանը տուգանքների նկատմամբ (*Guisset v. France*):

Քաղաքական հարցեր

268. Հոդված 6-ի քրեական մասի շրջանակներից դուրս են ընտրական սանկցիաները, այն է՝ ընտրությանը մասնակցելու իրավունքից զրկվելը և պարտականություն՝ ընտրական ծախսերի գերակշռող գումարի մուծումը Գանձարան (*Pierre-Bloch v. France*, §§ 53-60):

269. Դատավարությունները, որոնք վերաբերում են քաղաքական կուսակցությունների լուծարմանը և քաղաքական իրավունքներին հոդված 6-ի շրջանակներից դուրս են (*Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey** (որոշում)):

270. Հոդված 6-ը չի կիրառվում նաև Խորհրդարանի կողմից նշանակված քննող հանձնաժողովի նկատմամբ, քանի որ այդ մարմինները հետաքննում են ընդհանուր և հանրային շահերին վերաբերող հարցեր (*Montera v. Italy** (որոշում)):

271. Լյուստրացիային (գաղտնագերծում) վերաբերող դատավարությունների մասով Դատարանը որոշել է, որ քրեական դրսևորումների գերիշխումը (օրինակ՝ հանցանքի բնույթը՝ ոչ ճիշտ լյուստրացիայի հայտարարում, տուգանքի բնույթը և խստությունը, որոշ մասնագիտական գործունեություններ ծավալելու արգելքը երկար ժամանակով) կարող է հանգեցնել նրան, որ այս դատավարությունները քննվեն Կոնվենցիայի հոդված 6-ի քրեական մասի ներքո (*Matyjek v. Poland* (որոշում), տե՛ս՝ *Sidabras and Džautas v. Lithuania* (որոշում)):

272. Հոդված 6-ը որոշվել է չկիրառել քրեական տեսանկյունից այն դատավարությունների նկատմամբ, որոնք առնչվում են երկրի նախագահի կողմից Սահմանադրության կոպիտ խախման արդյունքում պաշտոնանկությանը (*Paksas v. Lithuania* [ՄՊ], §§ 66-67):

Վտարում և հանձնում

273. Օտարերկրյա քաղաքացիների վտարման հետ կապված դատավարությունները հոդված 6-ի շրջանակներից դուրս են, նույնիսկ եթե դրանց մեջ առկա են քրեական տարրեր (*Maaouia v. France* [ՄՊ], § 39): Նույն բացառիկ մոտեցումը կիրառվում է հանձնման վերաբերյալ (*Peñafiel Salgado v. Spain** (որոշում)) կամ Եվրոպական ձերբակալության հրամանին վերաբերող դատավարություններում (*Monedero Angora v. Spain** (որոշում)):

274. Հետևաբար, ազատագրվումը՝ փոխարինելով վտարումով և սեփական երկրից 10 տարով հանձնմամբ և այն փաստը, որ տվյալ անձին չի տրվել հնարավորություն արտահայտելու իր տեսանկյունը և այն, որ որևէ հանգամանք հաշվի չի առնվել, այլ միայն հաշվի է առնվել քրեական օրենքի նոր դրույթի գրեթե անհիմն կիրառումը, ապա դա պետք է դիտարկել իբրև տույժ՝ հիմնվելով նույն հիմունքների վրա, որոնք էլ և կիրառվել են առաջին դատվածության ժամանակ (*Gurguchiani v. Spain**, §§ 40 և 47-48):

Քրեական դատավարության տարրեր փուլերը, օժանդակ վարույթները և դատական պաշտպանության միջոցները

275. Անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու համար կիրառվող միջոցները չեն երաշխավորվում հոդված 6-ով (օրինակ՝ հատուկ վերահսկողություն ոստիկանության կողմից *Raimondo v. Italy*, § 43 կամ ոստիկանության կողմից տրված զգուշացում անչափահասին, որը իր դպրոցի աղջիկներին հասցրել է անառակ գործողություններով զուգորդված հարձակում՝ *R. v. the United Kingdom* (որոշում)):

276. Հոդված 6-ը կարող է կիրառվել ցուցմունքներ ստանալուն ուղղված հարկադիր գործողությունների նկատմամբ նույնիսկ այն դեպքերում, երբ բացակայում են այլ դատավարությունները կամ երբ հայցվորն արդարացվել է գործի ըստ էության քննության արդյունքում (օրինակ՝ որպես ավտոմեքենայի սեփականատեր գրանցված անձը տուգանվել է ճանապարհատրանսպորտային

հանցագործություն կատարող վարորդի ինքնությունը ճանաչելու համար տեղեկություն չտալու համար, չնայած այն փաստի, որ երբեք դրա հետ կապված գործի ըստ էության քննություն չի եղել՝ *O'Halloran and Francis v. the United Kingdom* [ՄՊ], § 35):

277. Հոդված 6-ը չի կիրառվում այն դատավարությունների նկատմամբ, որոնք առնչվում են անվճար իրավաբանական օգնություն ստանալու մասով առաջացած բարդությունների հետ (*Gutfreund v. France*, §§ 36-37):

278. Սկզբունքորեն, բռնագրավում տարածելու միջոցառումները, որոնք ունեցել են վնասակար ազդեցություն այն երրորդ կողմի սեփականության իրավունքների վրա, որոնց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում, չեն դիտարկվում որպես «քրեական մեղադրանքի որոշում» (ինքնաթիռի զավթումը՝ *Air Canada v. the United Kingdom*, § 54 և ոսկե դրամների բռնագրավումը՝ *AGOSI v. the United Kingdom*, §§ 65-66): Այնուամենայնիվ, վարչական զգուշացումը և տպագրության բռնագրավումը (էթնիկական ատելություն սերմանող նյութեր) պատկանում են քրեական ոլորտին՝ հաշվի առնելով իրենց պատժիչ նպատակը և պատժի խստությունը (*Balsyte-Lideikiene v. Lithuania*, § 61):

279. Մինչդատական վարույթները (հարցաքննումը և հետաքննությունը) և գործի դատական փուլը Դատարանը դիտարկում է մեկ միասնության մեջ: Հետևաբար, հոդված 6-ի որոշ պահանջներ, ինչպիսին են ողջամիտ ժամանակի կամ պաշտպանության իրավունքի պահանջը, կարող են նույնպես լինել էական դատավարության այս փուլում այնքանով, որքանով որ դրանց կոպիտ խախտումը վնասի արդարության իրականացումը (*Imbrioscia v. Switzerland*, § 36): Այնուամենայնիվ, այն թե ինչպես են այս երաշխիքները կիրառվում նախնական քննության ընթացքում կախված է դատավարությունների առանձնահատուկ գործոնից և գործի հանգամանքներից (*John Murray v. the United Kingdom*, § 62):

280. Չնայած քննող դատավորները չեն որոշում «քրեական մեղադրանքը»՝ իրենց կողմից արված քայլերն ունեն ուղիղ ազդեցություն հաջորդող դատավարությունների արդարության և ընթացքի վրա՝ ներառյալ՝ բուն դատավարությունը: Համապատասխանաբար, հոդված 6§1-ը կարող է կիրառվել հետաքննության դատավարություններում, որոնք իրականացվում են հետաքննող դատավորների կողմից, չնայած որ հոդված 6§1-ով նախատեսված մի քանի ընթացակարգային երաշխիքներ կարող են չկիրառվել (*Vera Fernández-Huidobro v. Spain**, §§ 108-14):

281. Քրեական դատավարության կասեցում խորհրդարանական անձեռնմխելիության պարագայում. Կոնվենցիայի հոդված 6-ով չի երաշխավորվում այնպիսի իրավունք, որը վերաբերում է քրեական դատավարության որոշակի արդյունքի՝ դատապարտման կամ արդարացման, որը հաջորդում է քրեական մեղադրանքին: Սակայն գոյություն ունի անվիճարկելի իրավունք՝ ողջամիտ ժամկետում դատարանում գործ քննության համար: Հետևաբար, քրեական դատավարությանում վարույթի վերսկսման համար խորհրդարանի անդամի իր անձեռնմխելիությունից հրաժարվելու

անկարողությունը, որը պահպանվել է մինչև նրա պաշտոնավարման ժամկետի ավարտը, ընկնում է հոդված 6-ի ներքո (*Kart v. Turkey* [ՄՊ], §§ 67-70):

282. Հոդված 6-ը կիրառվում է դատավարության ամբողջ ընթացքում «քրեական մեղադրանքը» որոշելու համար՝ ներառելով դատավճիռ կայացնելու ընթացքը, օրինակ՝ բռնագրավման հետ կապված դատավարությունները թույլ են տալիս պետական դատարաններին որոշել գումարի չափը, որով բռնագրավման հրամանագիրը պետք է սահմանվի՝ *Phillips v. the United Kingdom*, § 39): Հոդված 6-ը կարող է նույնպես կիրառվել այն դատավարություններում, որոնք առնչվում են տան քանդման հետ, որը կառուցվել է առանց նախագծի թույլտվության և այս դեպքում քանդումը կարող է դիտվել որպես «տուգանք» (*Hamer v. Belgium*, § 60; տե՛ս հոդված 7 վերաբերյալ, մերձափնյա տարածքում տարածքի բռնագրավումը՝ անօրինական շինության արդյունքում, *Sud Fondi Srl and Others v. Italy** (որոշում)): Այնուամենայնիվ, այն չի կիրառվում այն դատավարություններում, որտեղ նախորդ դատավճիռը համապատասխանեցվում է նոր Քրեական Օրենսգրքի ավելի բարենպաստ դրույթների հետ (*Nurmagedov v. Russia*, § 50):

283. Դատավճռի կատարման հետ կապված դատավարությունները, օրինակ՝ համաներման դիմումի (*Montcornet de Caumont v. France* (որոշում) հետ կապված, վաղաժամկետ-պայմանական ազատման վարույթ (*Aldrian v. Austria* (որոշում)), տեղափոխման հետ կապված՝ Դատապարտված Անձանց Տեղափոխումը Կոնվենցիայի համաձայն (*Szabó v. Sweden* (որոշում)), հակառակն առկա է՝ *Buijen v. Germany*, §§ 40-45՝ հաշվի առնելով գործի որոշակի հանգամանքները, կամ *exequatur* դատավարությունները, որոնք առնչվում են օտարերկրյա դատարանի կողմից բռնագրավման որոշման կատարման հետ (*Saccoccia v. Austria* (որոշում)), այս ամենը չի ընկնում հոդված 6-ի քրեական մասի ներքո:

284. Հոդված 6-ի երաշխիքները սկզբունքորեն կարող են կիրառվել վճռաբեկ բողոքների (*Meftah and Others v. France* [GC], § 40) և սահմանադրական վարույթների նկատմամբ (*Gast and Popp v. Germany*, §§ 65-66); *Caldas Ramírez de Arrellano v. Spain* (որոշում)), և նման վարույթները հանդիսանում են համապատասխան քրեական դատավարության հետագա փուլը և դրանց արդյունքները կարող են վճռորոշ լինել դատապարտված անձանց համար:

285. Եվ, վերջապես, հոդված 6-ը չի կիրառվում այն դատավարությունների նկատմամբ, որոնք վերաբերում են գործի վերաբացմանը, որովհետև անձը, որի նկատմամբ կայացրած վճիռը վերջնական է, և որն էլ հայց է ներկայացնում իր գործը վերաբացելու համար, այլևս դիտարկվում որպես քրեական հանցանքի մեջ մեղադրվող՝ հոդված 6-ի կիրառելիության տեսանկյունից (*Fischer v. Austria* (որոշում)): Միայն նոր դատավարությունները, որոնցից հետո վերաբացման պահանջը բավարարվել է, կարող է դիտվել իբրև քրեական մեղադրանքի որոշում (*Löffler v. Austria*, §§ 18-19): Նմանապես, հոդված 6-ը չի կիրառվում այն պահանջի նկատմամբ, որն առչվում է քրեական դատավարությունների վերաբացմանը՝ հետևելով խախտման հայտնաբերմանը Դատարանի կողմից (*Öcalan v. Turkey** (որոշում)): Այնուամենայնիվ, վերահսկող-վերանայող դատավարությունները, որոնք վերաբերում են վերջնական դատավճռի փոփոխմանը չեն ընկնում հոդված 6-ի քրեական մասի ներքո (*Vanyan v. Russia*, §

58):

(գ) Կոնվենցիայի այլ հոդվածների և Արձանագրությունների միջև կապը

286. Հոդված 5-ի (գ) ենթակետը թույլ է տալիս ազատագրվումը՝ միայն քրեական դատավարությունների դեպքում: Սա ակնհայտ է դառնում այդ դրույթի ձևակերպումից, որը պետք է մենկաբանվի՝ (գ) ենթակետի և 3-րդ պարբերության հետ միասին (*Ciulla v. Italy*, § 38): Այդ իսկ պատճառով, «քրեական մեղադրանք» գաղափարը նույնպես առնչվում է հոդված 5 § 1 (ա) և (գ) և հոդված 3-ի երաշխիքների հետ (օրինակ՝ *Steel and Others v. the United Kingdom*, § 49): Հետևաբար, այն դատավարությունները, որոնք վերաբերում են 5-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերից որևէ մեկով նախատեսված կալանավորմանը ինչպիսին է օրինակ՝ հոգեկան խանգարում ունեցող անձի կալանավորումը (կետ (ե)), չեն ընկնում հոդված 6-ի քրեական մասի շրջանակների ներքո (*Aerts v. Belgium*, § 59):

287. Չնայած քրեական դատավարությունների շրջանակներում առկա է սերտ կապ հոդված 5 § 4 և հոդված 6 § 1 միջև, պետք է հաշվի առնել այն, որ նշված հոդվածները հետապնդում են տարբեր նպատակներ և հետևաբար հոդված 6-ի քրեական մասը չի առնչվում այն դատավարությունների հետ, որոնք վերաբերում են կալանավորման օրինականության վերանայմանը, որն ընկնում է հոդված 5 § 4 ներքո, որը հանդիսանում է *ex specialis* հոդված 6-ի նկատմամբ (*Reinprecht v. Austria*, §§ 36, 39, 48 և 55):

288. Կոնվենցիայի հոդված 7-ի համաձայն «տուգանք»-ի գաղափարը նույնպես ինքնուրույն մի հասկացությունն է (*Welch v. the United Kingdom*, § 27): «Տուգանգի» առկայության գնահատման հարցում Դատարանը որպես մեկնարկային կետ դիտարկում է այն հարցը, թե արդյոք քննարկվող միջոցը կիրառվել է «քրեական հանցանքի» արդյունքում դատապարտվելուց հետո: Այս պարագայում *Engel and Others* գործում դիտարկված եռակի թեսթն է կիրառելի (*Brown v. the United Kingdom* (որոշում)):

289. Ի վերջո, «քրեական հանցանք» և «տուգանք» գաղափարները նույնպես կարող են առնչվել հոդված 2-ի և Թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածի հետ (*Greco v. Romania**, § 81, և *Sergey Zolotukhin v. Russia* [ՄԴ], §§ 52-57):

3. «Անձնական կյանք» և «ընտանեկան կյանք» հասկացությունները

Հոդված 8 Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաեւ անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

(ա) Հոդված 8-ի շրջանակը

146. Հոդված 8-ն ուղղված է պաշտպանելու անձնական ինքնավարության չորս բնագավառները՝ անձնական կյանքը, ընտանեկան կյանքը, բնակարանը և անձնական նամակագրությունը, սակայն այդ բնագավառներն իրարամերժ չեն և միջամտությունը կարող է լինել միաժամանակ և՛ ընտանեկան և՛ անձնական կյանքին (*Mentes and Others v. Turkey*, § 73; *Stjerna v. Finland*, § 37; *López Ostra v. Spain*, § 51; *Burghartz v. Switzerland*, § 24; և *Ploski v. Poland*, § 32):

(բ) «Անձնական կյանք»-ի ոլորտը

291. Գոյություն չունի անձնական կյանքի հասկացության սպառիչ սահմանում (*Niemietz v. Germany*, § 29), այն լայն եզրույթ է (*Peck v. the United Kingdom*, § 57, և *Pretty v. the United Kingdom*, § 61) և ներառում է հետևյալ ոլորտները՝

- անձի ֆիզիկական, հոգեբանական կամ բարոյական ամբողջականությունը (*X and Y v. the Netherlands*, § 22), ներառյալ բուժումը և հոգեբուժական զննումը (*Glass v. the United Kingdom*, §§ 70-72; *Y.F. v. Turkey*, § 33, որը վերաբերում է հարկադիր զննմանը գինեկոլոգի մոտ; *Matter v. Slovakia*, § 64; և *Worwa v. Poland*, § 80) և մտավոր առողջությանը (*Bensaid v. the United Kingdom*, § 47); հղի կնոջ ֆիզիկական ամբողջականությունը՝ հղիության արհեստական ընդհատման առնչությամբ (*Tysic v. Poland*, §§ 107 և 110, և *A, B and C v. Ireland* [ՄՊ], §§ 244-46); ինչպես նաև ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունն ընտանեկան բռնության զոհերի վերաբերյալ (*Hajduová v. Slovakia*, § 46);

- անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության տեսանկյունները (օրինակ՝ անձի ծնողների ինքնությունը և անձի ծագումը պարզելու համար տեղեկություն ձեռք բերելու իրավունք, տե՛ս՝ *Mikulic v. Croatia*, § 53, և *Odièvre v. France* [ՄՊ], § 29); ինչ վերաբերում է անձի ինքնությունն ապացուցելու համար փաստաթղթերի բռնագրավմանը, տե՛ս *Smirnova v. Russia*, §§ 95-97;

- անձի անունը և հայրանունը (*Mentzen v. Latvia* (որոշում); *Burghartz v. Switzerland*, § 24; *Guillot v. France*, §§ 21-22; *Güzel Erdagöz v. Turkey**, § 43; և *Losonci Rose and Rose v. Switzerland**, § 26);

- անձի ամուսնական կարգավիճակը որպես նրա անձնական և սոցիալական ինքնության անբաժանելի մասը (*Dadouch v. Malta*, § 48)

- իրավաբանական դրույթների սահմանումը, որը վերաբերում է հոր հարաբերություններին իր ենթադրյալ երեխայի հետ, օրինակ՝ դատավարություններ՝ հայրությունը վիճարկելու վերաբերյալ (*Rasmussen v. Denmark*, § 33, և *Yildirim v. Austria* (որոշում))

- անձի նկարների և պատկերների իրավունքը (*Von Hannover v. Germany*, §§ 50-53; *Sciacca v. Italy*, § 29; և *Reklos and Davourlis v. Greece*, § 40)

- անձի համբավը (*Chauvy and Others v. France*, § 70; *Pfeifer v. Austria*, § 35; *Petrina v. Romania**, § 28; և *Polanco Torres and Movilla Polanco v. Spain**, § 40) և պատիվը (*A. v. Norway*, § 64);

- սեռական ինքնությունը (*B. v. France*, §§ 43-63), ներառելով

տրանսսեքսուալների հետվիրահատական կարգավիճակի իրավաբանական ճանաչման իրավունքը (*Christine Goodwin v. the United Kingdom* [ՄՊ], § 77)

- սեքսուալ ուղղվածությունը (*Dudgeon v. the United Kingdom*, § 41);

- սեռական կյանքը (ibid.; *Laskey, Jaggard and Brown v. the United Kingdom*, § 36; և *A.D.T. v. the United Kingdom*, §§ 21-26)

- իրավունք՝ հաստատելու և զարգացնելու հարաբերություններ այլ մարդկանց և արտաքին աշխարհի հետ (*Niemietz v. Germany*, § 29)

- սոցիալական կապերի ստեղծումը գաղթականների և այն համայնքի միջև, որտեղ նրանք ապրում են՝ անկախ «ընտանեկան կյանքի» առկայությունից *Üner v. the Netherlands* [ՄՊ], § 59)

- զգացմունքային հարաբերություններ երկու համասեռ անձանց միջև (*Mata Estevez v. Spain* (որոշում))

- անձի զարգացման և անձնական ինքնավարության իրավունք (*Pretty v. the United Kingdom*, §§ 61 և 67, որը վերաբերում է անձի ընտրությանը խուսափելու անարժանապատիվ և վշտալի կյանքի ավարտից), չնայած որ, այն չի վերաբերում անձի այն գործողությանը, որով ինքը կարող է հարաբերվել հանրության այլ մարդկանց հետ (օրինակ՝ շներով վայրի կենդանիներին որսալը՝ *Friend and Others v. the United Kingdom* (որոշում), §§ 40-43);

- անձի իրավունքը որոշելու, թե ինչպես և երբ իր կյանքը պետք է ավարտվի, հիմնվելով, որ նա իրավունք ունի ձևավորելու իր իսկ ազատ կամքը և գործել համապատասխան կերպով (*Haas v. Switzerland**, § 51)

- գենետիկորեն ծնող դառնալու կամ չդառնալու ընտրության հարգանքի իրավունքը (*Evans v. the United Kingdom* [ՄՊ], § 71), ներառելով ծնող դառնալու համար պայմաններ ընտրելու իրավունքը (*Ternovszky v. Hungary*, § 22, տնային պայմաններում ծննդաբերության վերաբերյալ): Այնուամենայնիվ, դատարանն անավարտ է թողել որդեգրելու իրավունքը միայն հողված 8-ի շրջանակներում դիտարկելու հարցը, ընդունելով, որ միայնակ ծնողների իրավունքը կիրառվում է այն դեպքում, երբ թույլտվությունը սահմանվում է ներպետական օրենսդրության հողված 8-ի շրջանակների ներքո (*E.B. v. France* [ՄՊ], §§ 46 և 49; տե՛ս նաև, ապահովելով ընթացակարգը որդեգրման մատչելիության համար, *Schwizgebel v. Switzerland**, § 73): Կոնվենցիան չի երաշխավորում անձի որդեգրման իրավունքը՝ այն վերջ տալու նպատակով (*Gotia v. Romania** (որոշում));

- մասնագիտական կամ գործարարական բնույթի գործողություններ (*Niemietz v. Germany*, § 29; *Halford v. the United Kingdom*, § 44; և *Özpınar v. Turkey**, § 46) կամ աշխատանք (*Sidabras and Dziutas v. Lithuania*, §§ 47-50; *Bigaeva v. Greece**, §§ 22-25); սահմանափակումներ որոշ մասնագիտությունների կամ աշխատանքի տեսակի նկատմամբ;

- անձնական կամ հանրային բնույթի ֆայլեր կամ տվյալներ (օրինակ՝ տեղեկություն մարդու քաղաքական գործունեության մասին) հավաքած կամ պահված անվտանգության ծառայության կամ պետական այլ իշխանության կողմից (*Rotaru v. Romania* [ՄՊ], §§ 43-44; *Amann v. Switzerland* [ՄՊ], §§ 65-67; և *Leander v. Sweden*, § 48; ԴՆԹ-ի պրոֆիլների, բջջային նշումների և մատնահետքերի վերաբերյալ, տե՛ս՝ *S. and Marper v. the United Kingdom* [ՄՊ],

§§ 68-86);

- տեղեկություն՝ անձի առողջության վերաբերյալ (օրինակ՝ տեղեկություն ՁԻԱՀ-ով վարակվելու մասին: տե՛ս՝ *Z. v. Finland*, § 71, և *C.C. v. Spain**, § 33; կամ վերատադրողական կարողությունների վերաբերյալ, տե՛ս՝ *K.H. and Others v. Slovakia*, § 44); տեղեկություն անձի առողջությանը սպառնացող ռիսկերի մասին (*McGinley and Egan v. the United Kingdom*, § 97, և *Guerra and Others v. Italy*, § 60);

- էթնիկ ինքնությունը (*S. and Marper v. the United Kingdom* [ՄՊ], § 66, և *Ciubotaru v. Moldova*, § 53) և ազգային փոքրամասնության անդամների իրավունքը պահպանելու իրենց ինքնությունը և այդ սովորույթին համապատասխան անձնական ու ընտանեկան կյանք վարելու իրավունքը (*Chapman v. the United Kingdom* [ՄՊ], § 73);

- տեղեկություն անձի հավատքի և փիլիսոփայական համոզմունքների վերաբերյալ (*Folgerø and Others v. Norway* [GC], § 98)

- անդամալույծ անձանց որոշ իրավունքների վերաբերյալ. հոդված 8-ը որոշվել է կիրառել այն դեպքում, երբ անձին պարտադրվում է վճարել հարկ՝ զինվորական ծառայությունից ազատվելու համար, չնայած, որ նա համարվել է ծառայության համար ոչ պիտանի (*Glor v. Switzerland**, § 54), բայց չի վերաբերում անդամալույծ անձանց արձակուրդի ժամանակ ծովային հանգստից օգտվելու իրավունքին (*Botta v. Italy*, § 35):

147. Անձնական կյանքը հարգելու իրավունքին հնարավոր միջամտության ձևերը հետևյալն են՝

- խուզարկումներ և բռնագրավումներ (*McLeod v. the United Kingdom*, § 36, և *Funke v. France*, § 48)

- հասարակական վայրում անձին կանգնեցնելն ու խուզարկելը (*Gillan and Quinton v. the United Kingdom*, §§ 61-65)

- հաղորդակցության և հեռախոսային զրույցների հսկողությունը (*Halford v. the United Kingdom*, § 44, և *Weber and Saravia v. Germany* (որոշում), §§ 76-79), նույնիսկ առանց գաղտնի գործակալների (*Lüdi v. Switzerland*, § 40)

- տեսահսկումը հասարակական վայրերում, որի արդյունքները ձայնագրվում, պահվում և բացահայտվում են հանրության առջև (*Peck v. the United Kingdom*, §§ 57-63)

- անձին GPS համակարգով հսկումն և ստացված տվյալների օգտագործումն ու մշակումը (*Uzun v. Germany**, § 52)

- գործատուի կողմից աշխատակցի հսկումը տեսախցիկների միջոցով, օրինակ՝ սուպերմարկետում գողության կասկած առաջացնող գանձապահի նկատմամբ (*Köpke v. Germany* (որոշում))

- միջավայրի խիստ աղտոտումը, որն ազդում է անձանց բարեկեցության վրա և խոչընդոտում է իրենց տներից անարգել օգտվելու իրավունքից՝ ազդելով նրանց անձնական և ընտանեկան կյանքի վրա (*López Ostra v. Spain*, § 51, և *Tatar v. Romania**, § 97), ներառելով մոտակա բանտի աղբանոցից եկող վնասակար հոտերը, որն արդեն իսկ հասել է բանտարկյալի խցին, իսկ խուցը նրա համար դիտվում է իբրև մի քանի տարով միակ հնարավոր «ապրելու վայրը» (*Brânduse v. Romania**, §§ 64-67), և աղմուկը (*Deés v. Hungary*, §§ 21-24, ճանապարհային

երթևեկությունից առաջացած աղմուկի առնչությամբ, և *Mileva and Others v. Bulgaria*, § 97, բնակելի շենքերի մեջ տեղակայված համակարգչային ակունքի գործունեությունից առաջացած անհանգստությունների առնչությամբ):

- ընտանիքի անդամների հուղարկավորության այն հարցերի վերաբերյալ, որոնց նկատմամբ հոդված 8-ը նույնպես կիրառվում է երբեմն առանց Դատարանի պարզաբանման, թե արդյոք միջամտությունը վերաբերում է անձնական կյանքի, թե ընտանեկան կյանքի հասկացությանը. դիտարկումից հետո երեխայի մարմինը իշխանությունների կողմից չափազանց ուշ վերադարձնելը (*Pannullo and Forte v. France*, §36); դիմումատուի ամուսնու աճյունը պարունակող տարրայի տեղափոխման արգելքը (*Elli Poluhas Dödsbo v. Sweden*, § 24); մոր իրավունքը ներկա լինելու իր մահացած նորածին երեխայի հուղարկավորության արարողությանը և այնուհետև երեխայի մարմնի տեղափոխումը համապատասխան փոխադրման միջոցով (*Hadri-Vionnet v. Switzerland**, § 52);

- հղիության արհեստական ընդհատման արգելք՝ առողջության պահպանման և բարեկեցության սկզբունքներից ելնելով, չնայած հոդված 8-ը չի կարող մեկնաբանվել որպես հղիության արհեստական ընդհատման իրավունքը թույլատրող (*A, B and C v. Ireland* [ՄԴ], §§ 214 և 216);

- որոշ հանգամանքներում քաղաքացիության կամայական մերժումը, չնայած որոշակի ազգություն ձեռք բերելու իրավունքը, որպես այդպիսին, չի երաշխավորվում Կոնվենցիայի կողմից (*Karashev and family v. Finland* (որոշում):

148. Մինչ հոդված 8-ն ապահովում է այն ոլորտը, որտեղ անձինք կարող են ազատորեն հետևել իրենց անհատականության զարգացմանն ու ինքնադրսևորմանը (*Brüggemann and Scheuten v. Germany*, § 55), այն սահմանափակված չէ այնպիսի չափանիշներով, որոնց ազդեցությունը զգացվում է մարդկանց վրա իրենց տանը կամ սեփական տարածքներում. գոյություն ունի փոխգործակցության գոտի անհատի և այլ անձանց միջև (*P.G. and J.H. v. the United Kingdom*, §§ 56 և 57):

294. Յուրաքանչյուր գործողություն չէ, որն ազդելով ֆիզիկական և բարոյական ամբողջականության վրա, միջամտություն է անձնական կյանքը հարգելու իրավունքին: Այնուամենայնիվ, վերաբերմունքը, որը չի հասնում հոդված 3-ով նախատեսված դաժանության շեմին, կարող է խախտել հոդված 8-ը անձնական կյանքի տեսանկյունից այն դեպքում, երբ բավարար չափով առկա են ֆիզիկական և բարոյական ամբողջականության վրա ազդող բացասական արդյունքներ (*Costello-Roberts v. the United Kingdom*, § 36): Որոշակի հանգամանքներում հոդված 8-ը կարող է երաշխավորել պաշտպանություն կալանքի այնպիսի պայմանների նկատմամբ, որոնք չունեն հոդված 3-ով նախատեսված դաժանության մակարդակը (*Raninen v. Finland*, § 63):

(գ) «Ընտանեկան կյանք»-ի ոլորտը

295. Ընտանեկան կյանքի եզրույթը ինքնուրույն հասկացություն է (*Marckx v. Belgium*, Դատարանի վճիռ, § 31, և *Marckx v. Belgium**, Հանձնաժողովի

ժողովածու, § 69): Հետևաբար, ընտանեկան կյանքի առկայությունը հիմնականում փաստացի հանգամանք է, որը հիմնվում է սերտ անձնական կապերի առկայության վրա (*K. v. the United Kingdom* (որոշում): Հետևաբար, Դատարանն այդ ընտանեկան կապերը պետք է դիտի որպես *de facto*, օրինակ հայցվորների համատեղ կյանքը, ընտանեկան կյանքի իրավաբանական ճանաչման բացակայության դեպքում (*Johnston and Others v. Ireland*, § 56): Մյուս գործոնները ներառում են հարաբերությունների երկարատևությունը և զույգերի դեպքում, նրանց պատրաստակամությունը ընդհանուր երեխա ունենալու վերաբերյալ (*X, Y and Z v. the United Kingdom* [ՄՊ], § 36): Կրկին անգամ, քանի դեռ գոյություն չունի ընտանեկան կյանքի սպառիչ սահմանում, Դատարանի նախադեպային իրավունքը վերաբերում է հետևյալին՝

Ծնող դառնալու իրավունք

296. Ինչպես «անձնական կյանք»-ի գաղափարը, «ընտանեկան կյանք» գաղափարը նույնպես ներառում է գենետիկ ծնողներ դառնալու որոշումները հարգելու իրավունքը (*Dickson v. the United Kingdom* [ՄՊ], § 66): Հետևաբար, զույգի իրավունքը օգտագործելու բժշկական աջակցությամբ ծնունդ տալուն, ընկնում է հողված 8-ի շրջանակների ներքո՝ որպես անձնական և ընտանեկան կյանքի արտահայտում (*S.H. and Others v. Austria*, § 60): Այնուամենայնիվ, հողված 8-ի դրույթները, առանձին վերցված, չեն երաշխավորում ընտանիք կազմելու կամ որդեգրելու իրավունքը (*E.B. v. France* [ՄՊ]):

Երեխաների վերաբերյալ

297. Մոր և իր երեխայի միջև բնական կապի վերաբերյալ, տե՛ս՝ *Marckx v. Belgium*, § 31, և *Kearns v. France*, § 72:

298. Ամուսնությունից ծնված երեխան *ipso jure* հանդիսանում է հարաբերությունների մի մասը, հետևաբար երեխայի ծնվելու պահից սկսած և այդ իսկ փաստից ելնելով գոյություն ունի երեխայի և ծնողների միջև կապ, որն էլ առաջացնում է ընտանեկան կյանք, որը հնարավոր չէ փլուզել հետագա իրադարձություններով՝ բացառությամբ որոշակի դեպքերում (*Ahmut v. the Netherlands*, § 60; *Gül v. Switzerland*, § 32; *Berrehab v. the Netherlands*, § 21; և *Hokkanen v. Finland*, § 54):

299. Կենսաբանական հոր և ամուսնությունից դուրս ծնված իր երեխայի առնչությամբ համապատասխան գործոններն են՝ համատեղ բնակությունը, ծնողների միջև հարաբերությունների բնույթը և երեխային նկատմամբ իր հետաքրքրությունը (*Keegan v. Ireland*, §§ 42-45; *M.B. v. the United Kingdom* (որոշում); *Nylund v. Finland* (որոշում); *L. v. the Netherlands*, §§ 37-40; և *Shavdarov v. Bulgaria**, § 40):

300. Ընդհանուր առմամբ, այնուամենայնիվ, համատեղ բնակությունը չի հանդիսանում *sine qua non* ընտանեկան կյանք երեխաների և ծնողների միջև (*Berrehab v. the Netherlands*, § 21):

301. Ինչ վերաբերում է որդեգրված երեխաներին և նրանց որդեգրող ծնողներին, տե՛ս՝ *X v. France* (որոշում); *X v. Belgium and the Netherlands*

(որոշում); և *Pini and Others v. Romania*, §§ 139-40 և 143-48, օրինական և իրական որդեգրումը կարող է ստեղծել «ընտանեկան կյանք», նույնիսկ համատեղ բնակության կամ որդեգրած երեխաների և նրանց որդեգրող ծնողների միջև որևէ իրական կապերի բացակայության դեպքում (ibid., §§ 143- 48):

302. Դատարանը կարող է ճանաչել *de facto* «ընտանեկան կյանք»-ի առկայություն խնամող ծնողների և իրենց հետ ապրող երեխայի միջև, հաշվի առնելով իրար հետ անցկացրած ժամանակը, հարաբերությունների որակը և ծնողի դերը երեխայի կյանքում (*Moretti and Benedetti v. Italy**, §§ 48-52):

303. Երեխայի և մերձավոր բարեկամների, ինչպիսիք են տատիկները, պապիկները և թոռները, միջև կապի վերաբերյալ (քանի որ բարեկամները կարող են ունենալ նշանակալից դեր ընտանեկան կյանքում). տե՛ս *Price v. the United Kingdom* (որոշում), և *Bronda v. Italy*, § 51:

304. Ընտանեկան կյանքը չի ավարտվում, երբ երեխան վերցվում է խնամքի տակ (*Johansen v. Norway*, § 52) կամ երբ ծնողներն ամուսնալուծվում են (*Mustafa and Armagan Akin v. Turkey*, § 19):

305. Արտագաղթի դեպքում ծնողների և մեծահասակ երեխաների միջև առկա չէ ընտանեկան կյանք, քանի դեռ նրանք չեն կարող ցուցաբերել սովորական զգացմունքային կապերից բացի նաև հավելյալ կախվածության տարրեր (*Slivenko v. Latvia* [ՄԴ], § 97, և *Kwaky-Nti and Dufie v. the Netherlands* (որոշում): Այնուամենայնիվ, այսպիսի կապերը կարող են հաշվի առնվել «անձնական կյանք»-ի շրջանակներում (*Slivenko v. Latvia* [ՄԴ], § 97): Դատարանն որոշում է կայացրել մի քանի դեպքերի վերաբերյալ, որոնք առնչվում են մեծահասակ երեխաներին, ովքեր դեռ չեն հիմնել իրենց սեփական ընտանիքը և իրենց հարաբերությունները իրենց ծնողների և այլ մերձավոր ընտանիքի անդամների հետ՝ նույնպես համարելով «ընտանեկան կյանք» (*Maslov v. Austria* [ՄԴ], § 62):

Զույգերի վերաբերյալ

306. «Ընտանիք» գաղափարը հոդված 8-ի շրջանակներում չի սահմանափակվում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերություններով, այն կարող է ներառել այլ *de facto* ընտանեկան կապեր, որտեղ կողմերն ապրում են միասին ամուսնությունից դուրս (*Johnston and Others v. Ireland*, § 56):

307. Նույնիսկ համատեղ բնակության բացակայության դեպքում, այն կարող է հանդիսանալ որպես բավարար կապ՝ ընտանեկան կյանք վարելու համար (*Kroon and Others v. the Netherlands*, § 30):

308. Ամուսնությունները, որոնք չեն համապատասխանում պետական օրենքի հետ, չեն հանդիսանում խոչընդոտ ընտանեկան կյանքի համար (*Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom*, § 63): Զույգը, որն ամուսնացել է զուտ կրոնական կանոններով, որը չի ճանաչվում որպես իրավաբանական փաստ պետության օրենքով, կարող է ընկնել հոդված 8-ի «ընտանեկան կյանք»-ի շրջանակների ներքո: Այնուամենայնիվ, հոդված 8-ը պարտականություն չի դնում Պետության վրա՝ ճանաչելու կրոնական

ամուսնությունը, օրինակ՝ ժառանգության իրավունքների և կենսաթոշակների դեպքերում (*Serife Yigit v. Turkey* [ՄՊ], §§ 97-98 և 102):

309. Նշանադրությունն իր բնույթով չի ստեղծում ընտանեկան կյանք (*Wakefield v. the United Kingdom* (որոշում):

310. Համասեռ զույգը, ապրելով կայուն հարաբերություններով, պատկանում է «ընտանեկան կյանք» գաղափարին նույնքան, որքան տարասեռ զույգը (*Schalk and Kopf v. Austria*, §§ 92-94, և *P.B. and J.S. v. Austria*, § 30):

Այլ հարաբերությունների վերաբերյալ

311. Ընտանեկան կյանքը նույնպես կարող է գոյություն ունենալ քույրերի և եղբայրների միջև (*Moustaquim v. Belgium*, § 36, և *Mustafa and Armagan Akin v. Turkey*, § 19) և մորաքույրների, հորաքույրների /հորեղբայրների, մորեղբայրների, զարմիկների/զարմուհիների միջև (*Boyle v. the United Kingdom*, §§ 41-47): Այնուամենակնիվ, ավանդական մոտեցումն այն է, որ մերձավոր հարաբերությունները՝ հակիրճ ձևով հանդիսանալով որպես ընտանեկան կյանք, ընդհանուր առմամբ պատկանում են «անձնական կյանք»-ի ոլորտին (*Znamenskaya v. Russia*, § 27 և նույն տեղում արված հղումները):

Նյութական շահեր

312. «Ընտանեկան կյանք»-ը չի ներառում սոցիալական, բարոյական կամ մշակութային հարաբերություններ, այն նույնպես բաղկացած է դրամական բնույթ ունեցող հարցերից, ինչպիսիք են օրինակ՝ պահպանման պարտավորությունները և Պայմանավորվող Պետությունների մեծամասնությունների ներպետական իրավական համակարգերում սահմանված «*réserve héréditaire*»: Դատարանը, այդ իսկ պատճառով, ընդունել է, որ ժառանգության իրավունքը երեխաների և ծնողների, թոռների և տատիկ/պապիկների միջև այնքան սերտորեն կապված է ընտանեկան կյանք գաղափարի հետ, որ ընկնում է հոդված 8-ի շրջանակների ներքո (*Marckx v. Belgium*, § 52, և *Pla and Puncernau v. Andorra*, § 26): Հոդված 8-ը, այնուամենայնիվ, չի կարգադրում, որ երեխան ճանաչվի ժառանգ իր մահացած ծնողից հետո՝ ելնելով ժառանգության նպատակներից (*Haas v. the Netherlands*, § 43):

313. Դատարանը որոշել է, որ ընտանեկան նպաստ տալը հնարավորություն է տալիս Պետությանը «ցույց տալու իր հարգանքը ընտանեկան կյանքի նկատմամբ» Կոնվենցիայի հոդված 8-ի բովանդակության համաձայն, և այդ իսկ պատճառով, նպաստն ընկնում է այդ դրույթի շրջանակների ներքո (*Fawsie v. Greece**, § 28):

314. «Ընտանեկան կյանք» գաղափարը չի կիրառվում դիմումատուի հարսնացուի մահվան դեպքում երրորդ կողմի դեմ վնասների փոխհատուցման վերաբերյալ ներկայացված հայցին (*Hofmann v. Germany* (որոշում):

4. «Բնակարան» և «նամակագրություն» գաղափարները

Հոդված 8 Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր որ ունի անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգելու իրավունք
2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների, ազատությունների պաշտպանության նպատակով:

(ա) Հոդված 8-ի շրջանակը

315. Հոդված 8-ն ուղղված է պաշտպանելու անձնական ինքնավարության չորս բնագավառները՝ անձնական կյանքը, ընտանեկան կյանքը, բնակարանը և անձնական նամակագրությունը, սակայն այդ բնագավառներն իրարամերժ չեն և միջամտությունը կարող է լինել միաժամանակ և՛ ընտանեկան և՛ անձնական կյանքին, և՛ բնակարանին ու նամակագրությանը (*Mentes and Others v. Turkey*, § 73; *Klass and Others v. Germany*, § 41; *López Ostra v. Spain*, § 51; and *Margareta and Roger Andersson v. Sweden*, § 72):

(բ) «Բնակարան» հասկացության շրջանակը

316. Բնակարանն ինքնուրույն հասկացություն է, և արդյոք որոշակի կացարանը կամ ապրելավայրը հանդիսանում է հոդված 8 (1)-ով երաշխավորված «բնակարան», թե ոչ, կախված է փաստացի հանգամանքներից, մասնավորապես՝ որոշակի վայրի նկատմամբ բավարար և շարունակական կապերի առկայությունից (*Prokopovich v. Russia*, § 36; *Gillow v. the United Kingdom*, § 46; and *McKay-Kopecka v. Poland* (որոշում): Ավելին, «բնակարան» տերմինը հոդված 8-ի անգլերեն տարբերակում չպետք է մեկնաբանվի նեղ իմաստով, այն ժամանակ, երբ ֆրանսերենի համարժեք «*domicile*» տերմինն ունի ավելի լայն իմաստ (*Niemietz v. Germany*, § 30): Հասկացությունը՝

- վերաբերում է մեկ այլ անձին պատկանող այն տան վրա, որը զբաղեցվում է որոշակի ժամկետով ամեն տարի (*Mentes and Others v. Turkey*, § 73): Հոդված 8-ի նպատակներից ելնելով պարտադիր չէ, որ դիմումատուն հանդիսանա տան սեփականատերը;
- սահմանափակված չէ օրենքով հաստատված բնակության վայրերի նկատմամբ (*Buckley v. the United Kingdom*, § 54, և *Prokopovich v. Russia*, § 36);
- կարող է, հետևաբար, կիրառվել դիմումատուի կողմից որպես վարձակալ զբաղեցրած սոցիալական բնակարանների նկատմամբ, նույնիսկ եթե ներպետական օրենքով վարձակալության իրավունքն ավարտվել է (*McCann v. the United Kingdom*, § 46);

- սահմանափակված չէ ավանդական բնակության վայրերով և կարող է ներառել օրինակ՝ քարավանները կամ այլ ոչ ֆիքսված բնակության վայրերը (*Buckley v. the United Kingdom*, Հանձնաժողովի կարծիքը, § 64, և *Chapman v. the United Kingdom* [ՄՊ], §§ 71-74);
- կարող է նույնպես տարածվել երկրորդական տների կամ հանգստյան տների վրա (*Demades v. Turkey*, §§ 32-34);
- անձի գրասենյակի և սեփական տան միջև կամ անձնական և գործնական գործունեության միջև հստակ սահմանման բացակայության դեպքում կարող է կիրառվել գործարար տարածքների վրա (*Niemietz v. Germany*, §§ 29-31);
- կարող է կիրառվել նաև գրանցված կազմակերպության գրասենյակի, մասնաճյուղերի կամ այլ գործնական տարածքների հանդեպ (*Société Colas Est and Others v. France*, § 41);
- չի տարածվում հողակտորի վրա տուն կառուցելու մտադրության վրակամ որոշակի տարածքում որևէ մեկի արմատներ ունենալու փաստի վրա (*Loizidou v. Turkey* (ըստ էության), § 66);
- չի կիրառվում լվացքատան սենյակի վրա, որը միաժամանակ պատկանում է բնակարանների կոճղի մի քանի սեփականատերերի և ձևավորվել է ժամանակ առ ժամանակ օգտագործման համար (*Chelu v. Romania**, § 45), նկարչի հանդերձարանի վրա (*Hartung v. France** (որոշում) կամ այն հողի վրա, որտեղ տերերը զբաղվում են կամ թույլատրում են զբաղվել սպորտով, օրինակ՝ որսորդությունը՝ *Friend and Others v. the United Kingdom* (որոշում), § 45):

Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ «բնակարան» հասկացությունը պահանջվում է կիրառել այնպիսի սեփականության նկատմամբ, որը երբեք կամ հավանաբար երբեք չի զբաղեցվել դիմումատուի կողմից կամ չի զբաղեցվել էական ժամկետով, կապերն այդ սեփականության նկատմամբ բավականին կասկածելի են, որպեսզի խնդիր բարձրացվի հողված 8-ի սահմաններում (տե՛ս, օրինակ, *Andreou Papi v. Turkey*, § 54): Նման գույք ժառանգելու հնարավորությունը չի հանդիսանում ամուր կապ՝ որպես «բնակարան» վերաբերվելու համար (*Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ], §§ 136-37):

(գ) Միջամտության օրինակներ

317. Անձի բնակարանը հարգելու իրավունքի հնարավոր միջամտությունները ներառում են՝

- տան միտումնավոր ավիրումը (*Selçuk and Asker v. Turkey*, § 86);
- տեղահանված անձանց տուն վերադառնալու չթույլատրումը (*Cyprus v. Turkey* [ՄՊ], §§ 165- 77);
- խուզարկումներ (*Murray v. the United Kingdom*, § 88; *Chappell v. the United Kingdom*, §§ 50 and 51; և *Funke v. France*, § 48) կամ այլ միջամտություններ ոստիկանության կողմից (*Evce v. the Netherlands* (որոշում), և *Kanthak v. Germany* (որոշում));

- նախագծային որոշումներ (*Buckley v. the United Kingdom*, §60) և հարկադիր օտարման կարգադրություններ (*Howard v. the United Kingdom* (որոշում));
- միջավայրի հետ կապված խնդիրներ (*López Ostra v. Spain*, § 51; *Powell and Rayner v. the United Kingdom*, § 40; և *Deés v. Hungary*, §§ 21-24);
- հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում (*Klass and Others v. Germany*, § 41);
- տան մի մասը կազմող անձնական իրերը չպահպանելը (*Novoseletskiy v. Ukraine*):

318. Տունը տնօրինելու հետ կապված որոշ միջոցներ, այնուամենայնիվ, քննվում են Թիվ 1 Արձանագրության հոդված 1-ի համաձայն: Այն կարող է ներառել՝

- սովորական օտարման դեպքերը (*Mehmet Salih and Abdülsamet Çakmak v. Turkey**, § 22; *Mutlu v. Turkey*, § 23);
- վարձակալության որոշ տեսակներ, ինչպիսին են վարձակալության փուլերը (*Langborger v. Sweden*, § 39):

319. Որոշ միջոցներ, որոնք հանդիսանում են հոդված 8-ի խախտում, պարտադիր չէ, որ հանգեցնեն Թիվ 1 Արձանագրության հոդված 1-ի խախտմանը (*Surugiu v. Romania**):

320. Ինչ վերաբերում է դրական պարտավորություններին, բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքը կարող է նույնպես հանգեցնել պետական իշխանությանների կողմից այնպիսի միջոցների ընդունմանը, որոնք կապահովեն այդ իրավունքը նույնիսկ անձերի միջև հարաբերություններում, ինչպիսին է դիմումատուի բնակարանին մուտքի արգելքը և միջամտությունը (*ibid.*, § 59 և նույն տեղում արված հղումները, և *Novoseletskiy v. Ukraine*, § 68):

(դ) «Նամակագրություն» հասկացության շրջանակը

321. Նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի նպատակն է պահպանելու անձնական հաղորդակցության գաղտնիությունը (*B.C. v. Switzerland* (որոշում), և այդպիսի մեկնաբանությամբ այն տարածվում է հետևյալ ոլորտների վրա՝

- նամակագրություն անձերի միջև, նույնիսկ երբ ուղարկողը և ստացողը բանտարկյալներ են (*Silver and Others v. the United Kingdom*, § 84, և *Mehmet Nuri Özen and Others v. Turkey**, § 41), ներառելով մաքսատան ծառայողների կողմից փաթեթների բռնագրավումը (*X v. the United Kingdom* (որոշում));
- հեռախոսային խոսակցությունները (*Klass and Others v. Germany*, §§ 21 և 41; *Malone v. the United Kingdom*, § 64; և *Margareta and Roger Andersson v. Sweden*, § 72), ներառելով տեղեկություն նրանց վերաբերյալ, օրինակ՝ դրանց ժամկետը, զանգի տևողությունը և հավաքած համարները (*P.G. and J.H. v. the United Kingdom*, § 42);
- փեյջերի հաղորդագրությունները (*Taylor-Sabori v. the United Kingdom*);

- ավելի հին էլեկտրոնային հաղորդագրության միջոցները, օրինակ՝ տելեքսները (*Christie v. the United Kingdom* (որոշում));
- էլեկտրոնային հաղորդագրությունները և տեղեկությունը՝ ստացած անձնական համացանցի օգտագործումի վերահսկողությունից (*Copland v. the United Kingdom*, §§ 41-42);
- անձնական ռադիո (*X and Y v. Belgium* (որոշում)), երբ այն չի գտնվում հանրային ալիքի վրա և մատչելի է բոլորի համար (*B.C. v. Switzerland* (որոշում));
- գործնական գործողությունների ընթացքում կամ գործնական տարածքում գաղտնի կերպով ձեռք բերած նամակագրությունը (*Kopp v. Switzerland*, § 50, և *Halford v. the United Kingdom*, §§ 44-46)
- էլեկտրոնային տվյալները, որոնք բռնագրավվել են իրավաբանական գործակալության խուզարկության ընթացքում (*Wieser and Bicos Beteiligungen GmbH v. Austria*, § 45):

322. Նամակագրության բովանդակությունը կապ չունի իրավունքին միջամտության հարցի հետ (*A. v. France*, §§ 35-37, և *Frérot v. France*, § 54):

323. Գոյություն չունի *de minimis* սկզբունք միջամտության համար, նամակի բացումը արդեն իսկ բավական է (*Narinen v. Finland*, § 32):

324. Մինչ այսօր, Դատարանը պատրաստ էր գտնել հատկապես նամակագրության վերաբերյալ հետևյալ դրական պարտականությունները՝

- հանրային դոմեյնում անձնական խոսակցությունների բացահայտման կանխարգելման պարտականությունը (*Craxi v. Italy (no. 2)*, §§ 68-76)
- պարտականություն՝ մատակարարելու բանտարկյալներին գրելու համար անհրաժեշտ պարագաներով (*Cotlet v. Romania* *, §§ 60-65):

5. «Գույք» հասկացությունը

Թիվ 1 Արձանագրության 1-ին Հոդված. Սեփականության պահպանումը

1. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

...

(ա) Պաշտպանված գույք

325. Դիմումատուն կարող է հայտարարել Թիվ 1 Արձանագրության հոդված 1-ի խախտման մասին միայն այն դեպքում, եթե վիճարկված որոշումները վերաբերվել են իր «գույքին» սույն դրույթի իմաստով: «Գույք»-ը կարող է լինել «առկա սեփականություն»-ը կամ ակտիվները, ներառյալ նաև այն հայցերը, որոնք դիմումատուն կարող է վիճարկել կամ վերջինս առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելուց «իրավական ակնկալիք» (*J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. the United Kingdom* [ՄՊ], § 61; *Maltzan and Others v. Germany* (որոշում) [ՄՊ], § 74 (գ); և *Kopecký v. Slovakia* [ՄՊ], § 35 (գ)):

«Ակնկալիք»-ը համարվում է օրինական, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (*Saghinadze and Others v. Georgia*, § 103):

(բ) Ինքնուրույն իմաստ

326. «Գույք» հասկացությունը Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում ունի ինքնուրույն իմաստ, որը չի սահմանափակում նյութական իրերի սեփականությամբ և անկախ է ներպետական օրենսդրության մեջ դասական դասակարգումներից. ակտիվներ հանդիսացող որոշակի այլ իրավունքներ և շահեր կարող են նույնպես դիտարկվել որպես «գույքային իրավունքներ», և, այդպիսով, «գույք»՝ սույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործում քննարկման խնդիր է հանդիսանում այն, թե արդյոք գործի բոլոր հանգամանքները, ընդհանուր առմամբ, շնորհում են դիմումատուին Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունք (*Depalle v. France* [ՄՊ], § 62; *Anheuser-Busch Inc. v. Portugal* [ՄՊ], § 63; *Öneri [A/Z] v. Turkey* [ՄՊ], § 124; *Broniowski v. Poland* [ՄՊ], § 129; *Beyeler v. Italy* [ՄՊ], § 100; և *Iatridis v. Greece* [ՄՊ], § 54):

Ոչ-նյութական ակտիվների դեպքում, Դատարանը հաշվի է առել հատկապես այն փաստը, թե արդյոք քննվող իրավական դիրքորոշումն առաջացրել է ֆինանսական իրավունքներ և շահեր և, հետևաբար, ունեցել է տնտեսական արժեք (*Paeffgen GmbH v. Germany* (որոշում):

(գ) Առկա գույք

327. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը կիրառվում է միայն անձի գոյություն ունեցող սեփականության դեպքում (*Marckx v. Belgium*, § 50, և *Anheuser-Busch Inc. v. Portugal* [ՄՊ], § 64): Այն չի երաշխավորում սեփականություն ստանալու իրավունքը (*Slivenko and Others v. Latvia* (որոշում) [ՄՊ], § 121, և *Kopecný v. Slovakia* [ՄՊ], § 35 (բ):

328. Անձը, ով բողոքարկում է իր սեփականության իրավունքի խախտման դեմ, պետք է առաջին հերթին ցույց տա այն, որ այդպիսի իրավունքը գոյություն ունի (*Pišťorová v. the Czech Republic*, § 38; *Des Fours Walderode v. the Czech Republic* (որոշում); և *Zhigalev v. Russia*, § 131):

329. Որոշելու համար, թե արդյոք դիմումատուն ունի գույքային շահ, որը պաշտպանվում է Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով, Դատարանը պետք է սահմանի դիմումատուի իրավական կարգավիճակը (*J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. the United Kingdom* [ՄՊ], § 61):

(դ) Հայցերը և պարտքերը

330. Երբ հայցն ունի գույքային շահի բնույթ, այն կարող է դիտարկվել որպես «ակտիվ» միայն այն դեպքում, երբ ներպետական օրենքում այն ունի բավարար հիմք, օրինակ, երբ առկա է ներպետական դատարաններում հաստատված և

լուծված նախադեպ (*Plechánov v. Poland*, § 83; *Vilho Eskelinen and Others v. Finland* [ՄՊ], § 94; *Anheuser-Busch Inc. v. Portugal* [ՄՊ], § 65; *Kopecný v. Slovakia* [ՄՊ], § 52; և *Draon v. France* [ՄՊ], § 68):

331. Պարտքի վերաբերյալ Դատարանի վճիռը, որը ենթակա է կիրառման, հանդիսանում է «գույք» (*Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece*, § 59, և *Burdov v. Russia*, § 40):

332. Դատարանի նախադեպը չի սահմանում «իրավական ակնկալիք»-ը որպես «իրական վեճ»-ի կամ «վիճարկելի հայց»-ի առկայության չափանիշ՝ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն (*Kopecný v. Slovakia* [ՄՊ], § 52, և *Vilho Eskelinen and Others v. Finland* [ՄՊ], § 94):

333. Ոչ իրավական ակնկալիքը կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ առկա է վեճ՝ ներպետական օրենքի ճիշտ մեկնաբանության և հայցի վերաբերյալ, և դիմումատուների փաստարկները, հետևաբար, մերժվել են ներպետական դատարանների կողմից (*Anheuser-Busch Inc. v. Portugal* [ՄՊ], § 65, և *Kopecný v. Slovakia* [ՄՊ], § 50):

(ե) Սեփականության վերականգնում

334. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի պարտադրում Անդամ Պետություններին մինչև Կոնվենցիայի վավերացումն իրենց փոխանցված սեփականությունը վերադարձնելու ընդհանուր պարտականություն: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի սահմանափակում Պայմանավորվող Կողմերի ազատությունը՝ որոշելու սեփականության վերականգնման շրջանակը և ընտրելու այն պայմանները, որոնց առկայությամբ կվերականգնվեն նախկին սեփականատերերի գույքային իրավունքը:

335. Մասնավորապես, Անդամ Պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ՝ նախկին սեփականատերերի որոշակի տեսակին իրավունքի շնորհումը բացառելու համար: Այն դեպքում, երբ սեփականության իրավունքը բացառվում է նման կարգով, դրա վերականգնման մասին հայցերը չեն կարող հիմք հանդիսանալ «իրավական ակնկալիքի» համար՝ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

336. Մյուս կողմից, այն դեպքում, երբ Անդամ Պետությունները վավերացնում են Կոնվենցիան՝ ներառելով Թիվ 1 Արձանագրությունը, և ընդունում են համապատասխան օրենսդրություն, որն ապահովում է նախորդ ռեժիմի ընթացքում բռնագրավված սեփականության ամբողջական կամ մասնակի վերականգնումը, ապա այսպիսի օրենսդրությունը Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում պետք է դիտվի որպես նոր գույքային իրավունք ընձեռնող այն անձանց համար, ովքեր բավարարում են իրավունքը ստանալու պահանջները: Նույն մոտեցումը կարող է կիրառվել նաև իրավունքի վերականգնման նախապատրաստական աշխատանքների կամ մինչև վավերացումը գործող օրենսդրությամբ սահմանված փոխհատուցման ընթացակարգի նկատմամբ, եթե այդ օրենսդրությունը մնացել է ուժի մեջ Անդամ Պետությունների կողմից Թիվ 1 Արձանագրության վավերացումից հետո (*Maltzan and Others v. Germany* (որոշում) [ՄՊ], § 74(դ), *Kopecný v. Slovakia* [ՄՊ], § 35 (դ):

337. Սեփականության իրավունքի ճանաչման հույսը, որի արդյունավետ իրականացումն անհնարին էր, չի կարող դիտարկվել որպես «գույք» Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի բովանդակության շրջանակներում. այն չի կարող դիտարկվել նաև որպես պայմանական հայց՝ պայմանի չկատարման հետևանքով (*Malhous v. the Czech Republic* (որոշում) [ՄՊ], և *Kopecký v. Slovakia* [ՄՊ], § 35 (գ)):

338. Այն համոզմունքը, որ նախկինում գործող օրենքը կփոխվի ի օգուտ դիմումատուի, չի կարող դիտվել որպես իրավական ակնկալիքի տեսակ՝ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված նպատակների համար: Գոյություն ունի տարբերություն վերականգնման հույսի, նույնիսկ գիտակցելով, թե ինչ է հասկացվում հույս բառի տակ, և իրավական ակնկալիքի միջև, որը պետք է իր բնույթով լինի ավելի հստակ, քան զուտ հույսը, և պետք է հիմնված լինի իրավական դրույթի կամ իրավական ակտի՝ դատական վճռի վրա (*Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic* (որոշում) [ՄՊ], § 73, և *Maltzan and Others v. Germany* (որոշում) [ՄՊ], § 112):

(գ) Ապագա եկամուտ

339. Ապագա եկամուտը հանդիսանում է «գույք», այն դեպքում, երբ այն վաստակվել է կամ դրա վերաբերյալ առկա է հայց (*Ian Edgar (Liverpool) Ltd v. the United Kingdom* (որոշում); *Wendenburg v. Germany* (որոշում); *Levänen and Others v. Finland* (որոշում); և *Anheuser-Busch Inc. v. Portugal* [ՄՊ], § 64):

(ե) Մասնագիտական հաճախորդներ

340. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը տարածվում է մասնագիտական գործունեությունների և նրանց հաճախորդների վրա, քանի որ դրանք հանդիսանում են որոշակի արժեք ունեցող մարմիններ, որոնք բազմաթիվ առումներով ունեն մասնավոր իրավունքի բնույթ, հանդես են գալիս որպես ակտիվներ, հետևաբար, 1-ին հոդվածի նախադասության իմաստից ելնելով՝ գույք (*Lederer v. Germany* (որոշում); *Buzescu v. Romania*, § 81; *Wendenburg and Others v. Germany* (որոշում); *Olbertz v. Germany* (որոշում); *Döring v. Germany* (որոշում); և *Van Marle and Others v. the Netherlands*, § 41):

(ը) Բիզնես լիզենզավորումներ

341. Գործունեություն իրականացնելու համար լիցենզիան հանդիսանում է գույք. դրա անվավեր ճանաչումը հանդիսանում է միջամտություն Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքին (*Megadat.com SRL v. Moldova*, §§ 62-63; *Bimer S.A. v. Moldova*, § 49; *Rosenzweig and Bonded Warehouses Ltd v. Poland*, § 49; *Capital Bank AD v. Bulgaria*, § 130; and *Tre Traktörer Aktiebolag v. Sweden*, § 53):

(թ) Գնահ

342. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի դնում Պետության վրա որևէ ընդհանուր պարտավորություն՝ պահպանելու ֆինանսական հաստատություններում ներդրված գումարների գնողականությունը՝ խնայողությունների սիստեմատիկ ինդեքսացիայի միջոցով (*Rudzinska v. Poland* (որոշում); *Gayduk and Others v. Ukraine* (որոշում); և *Ryabikh v. Russia*, § 63):

Այն չի պարտադրում Պետությանը պահպանելու հայցի արժեքը կամ մասնավոր հայցերի նկատմամբ կիրառելու գնաճին համապատասխան պարզ տոկոս (*Todorov v. Bulgaria* (dec.):

(ժ) Մտավոր սեփականություն

343. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը կիրառվում է մտավոր սեփականության նկատմամբ (*Anheuser-Busch Inc. v. Portugal* [ՄՊ], § 72).

344. Այն կիրառվում է ապրանքանշանի գրանցման դիմումի նկատմամբ (նույն տեղում, § 78):

(ի) Ընկերության բաժնեմասերը

345. Տնտեսական արժեք ունեցող ընկերության բաժնեմասերը կարող են դիտարկվել որպես գույք (*Olczak v. Poland* (որոշում), § 60, և *Sovtransavto Holding v. Ukraine*, § 91):

(յ) Սոցիալական ապահովության նպաստները

346. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կիրառման համար անհիմն է տարբերակում դնել հատկացումներից և ոչ հատկացումներից ձևավորված նպաստների միջև:

347. Չնայած Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի ներառում սոցիալական ապահովության որևէ վճար ստանալու իրավունք, եթե Պայմանավորվող Պետությունն ունի օրենսդրություն, համաձայն որի նման վճարումն իրականացվում է որպես բարեկեցությանն ուղղված իրավունք, անկախ այն փաստից՝ պայմանական է այն, թե ոչ, այդ օրենսդրությունը պետք է դիտարկվի որպես գույքային իրավունք առաջացնող և այն կրնկնի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո այն անձանց համար, որոնք բավարարում են հոդվածի պահանջները (*Stec and Others v. the United Kingdom* (որոշում) [ՄՊ], §§ 53-55; *Andrejeva v. Latvia* [ՄՊ], § 77; և *Moskal v. Poland*, § 38):

III. ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆՎԱԾ ԳԱՆԳԱՏԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ա. Ակնհայտորեն անհիմն

Հոդված 35§3 (ա) Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանը անընդունելի կհամարի ցանկացած անհատական գանգաղ Հոդված 34 համապատասխան, եթե այն համարի որ՝

(ա) գանգաղը ... ակնհայտորեն անհիմն է ...:

1. Ընդհանուր ներածություն

348. Նույնիսկ այն դեպքում, երբ գանգաղը համապատասխանում է Կոնվենցիային և ընդունելիության բոլոր պահանջները բավարարվել են, Դատարանը, այնուամենայնիվ, կարող է հայտարարել գանգաղն անընդունելի՝ կապված գործի ըստ էության քննության հետ: Մինչ օրս ամենատարածված պատճառը եղել է այն, որ գանգաղը համարվել է ակնհայտորեն անհիմն: Ճիշտ է, որ «ակնհայտորեն» բառի օգտագործումը հոդված 35-ի 3-րդ մասի (ա) կետում կարող է շփոթություն առաջացնել. դրա բառացի դիտարկումը կարող է նշանակել, որ գանգաղն անընդունելի կհայտարարվի միայն այն հիմքով, որ ցանկացած միջին մակարդակի կարդացողի համար այն ակնհայտ անիմաստ և անհիմն է: Այնուամենայնիվ, Կոնվենցիոն ինստիտուտների հաստատված նախադեպային իրավունքից (այսինքն՝ Դատարանը և մինչև Նոյեմբերի 1998թ. Մարդու Իրավունքների Եվրոպական Հանձնաժողովը) պարզ է, որ գործի վերջնական արդյունքի պայմաններում այդ արտահայտությունը պետք է մենկաբանվի ավելի լայնորեն: Փաստորեն, յուրաքանչյուր գանգաղ պետք է համարվի «ակնհայտորեն անհիմն», եթե նախնական քննությունը չի բացահայտում Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտում, որի արդյունքում այն կարող է հայտարարվել անընդունելի ի սկզբանե՝ առանց գործի հետագա ըստ էության քննության փուլ անցնելու (արդյունքում Դատարանը կընդունի վճիռ):

349. Այն փաստը, որ Դատարանն գանգաղի ակնհայտորեն անհիմն լինելու մասին որոշում կայացնելու համար հաճախ կարիք է ունենում հրավիրելու կողմերին ներկայացնելու առարկություններ և սկսելու երկար և մանրակրկիտ բացատրություն տալու իր որոշումների վերաբերյալ, ոչինչ չի անում՝ դիմումի «ակնհայտորեն» անհիմն բնույթը փոխելու համար (*Mentzen v. Latvia* (dec.):

350. Ակնհայտորեն անհիմն գանգաղների մեծամասնությունը Կոնվենցիայի հոդված 27 և 28 համաձայն հայտարարվում է անընդունելի *de plano* մեկ դատավորի կամ երեք դատավորներից կազմված հանձնաժողովի կողմից: Այնուամենայնիվ, որոշ այդպիսի գանգաղներ քննվում են Պալատի կամ նույնիսկ, բացառիկ դեպքերում, Մեծ Պալատի կողմից (*Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic* (որոշում) [ՄՊ], և *Demopoulos and Others v. Turkey* (որոշում) [ՄՊ]):

351. «Ակնհայտորեն անհիմն» եզրույթը կարող է կիրառվել ամբողջապես գանգաղի հանդեպ կամ գործի համատեքստում որոշակի բողոքի նկատմամբ: Այդ իսկ պատճառով, որոշ դեպքերում, գանգաղի մի մասը կարող է մերժվել՝

չորրորդ ատյանի բնույթ ունենալու պատճառով, մինչդեռ մնացած մասը հայտարարվի ընդունելի և նույնիսկ հանգեցնի Կոնվենցիայի խախտման հայտնաբերմանը: Հետևաբար, ավելի ճիշտ է այն ձևակերպել որպես «ակնհայտորեն անհիմն գանգատներ»:

352. «Ակնհայտորեն անհիմն»-ի իմաստը և շրջանակները հասկանալու համար, անհրաժեշտ է հիշել այն, որ Կոնվենցիայի ամբողջ համակարգի հիմնական սկզբունքներից մեկը՝ դա սուբսիդիարության սկզբունք է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշակի համատեքստում այն նշանակում է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանության և իրականացման պատասխանատվությունն ավելի շատ ընկնում է Պայմանավորվող Պետության, քան Դատարանի վրա: Դատարանը կարող է միջամտել միայն այն դեպքում, երբ ներպետական իշխանությունները չեն կատարել իրենց պարտականությունները (*Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], § 140): Հետևաբար, լավագույնը այն է, որ գործի փաստերը և խնդիրները հետաքննվեն ներպետական մակարդակում այնպես, որ ներպետական իշխանությունները, որոնք ունենալով ուղղակի և շարունակական կապերի հնարավորություն իրենց երկրի հիմնական ուժերի հետ, կարողանան ուղղել Կոնվենցիայի ցանկացած ենթադրյալ խախտում (*Varnava and Others v. Turkey* [ՄՊ], § 164):

353. Ակնհայտորեն անհիմն գանգատները կարող են բաժանվել չորս դասակարգերի՝ «չորրորդ ատյանի» գանգատներ, գանգատներ, որտեղ պարզ կամ ակնհայտ կերպով չկա խախտում, անհիմն գանգատեր և, վերջապես, շփոթեցնող կամ անիմաստ գանգատներ:

2. «Չորրորդ ատյան»

354. Դատարան ներկայացված գանգատներից որոշակի տեսակ կազմում են այն գանգատները, որոնք, ընդհանուր առմամբ, դիտարկվում են որպես «չորրորդ ատյանի» գանգատներ: Այս եզրույթը, որը ներառված չէ Կոնվենցիայի տեքստում և սահմանվել է Կոնվենցիոն ինստիտուտների նախադեպերի միջոցով (*Kemmache v. France (no. 3)*, § 44) մի փոքր պարադոքսային է, քանի որ այն շեշտադրում է կատարում այնպիսի երևույթների վրա, որոնց վրա Դատարանը չի անդրադառնում. վերաքննիչ դատարանը կամ դատարանը չեն կարող չեղյալ համարել ներպետական դատարանների կողմից Կոնվենցիայի վերաբերյալ ընդունված որոշումները կամ վերաքննեն իրենց կողմից լաված գործերը, ինչպես նաև այն չի կարող վերաքննել գործերը այնպես, ինչպես Գերագույն Դատարանը: Չորրորդ ատյանի գանգատները, այդ իսկ պատճառով, կարող են առաջանալ դիմումատուի կողմից Կոնվենցիայով հաստատված դատարանի դերի և իրավական համակարգի բնույթի մասին թյուրիմացության հետևանքում:

355. Չնայած իր առանձնահատկություններին, Կոնվենցիան մնում է միջազգային պայմանագիր, որը ենթարկվում է նույն օրենքներին, ինչպես և այլ միջպետական պայմանագրերը, հատկապես նրանք, որոնք արտացոլված են Վիեննայի Կոնվենցիայում Պայմանագրերի մասին Օրենքում (*Demir and Baykara v. Turkey* [ՄՊ], § 65): Դատարանը, հետևաբար, չի կարող անցնել այն ընդհանուր

իրավասությունների սահմանները, որոնք Պայմանավորվող Պետություններն իրենց ինքնիշխան կամքով փոխանցել են իրեն: Այս սահմաններն ամրագրված են Կոնվենցիայի հոդված 19-ով, համաձայն որի՝

«Սույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտականությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան...»:

356. Համապատասխանաբար, Դատարանի լիազորությունները սահմանափակվում են միայն Պայմանավորվող Պետությունների կողմից Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների համաձայն ստանձնած պարտավորությունների համապատասխանության հաստատմամբ: Այնուհետև, Պայմանավորվող Պետությունների իրավական համակարգերում ուղղակի միջամտության լիազորության բացակայության պայմաններում, Դատարանը պետք է հարգի այդ իրավական համակարգերի ինքնավարությունը: Սա նշանակում է, որ Դատարանի խնդիրը չէ քննելու ներպետական դատարանի կողմից ենթադրաբար պատճառած փաստական կամ օրենսդրական սխալները, քանի դեռ այդ խախտումները չեն ոտնահարել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները: Այն չի կարող ինքնուրույն գնահատել այն փաստերը, որոնք հանգեցրել են ներպետական դատարանի կողմից այս կամ այն որոշման ընդունմանը: Հակառակ դեպքում, Դատարանը կգործեր իբրև երրորդ և չորրորդ ատյանի դատարան, այսինքն կարհամարվեն իր գործունեության վրա դրված սահմանները (*García Ruiz v. Spain* [ՄՊ], § 28, և *Perlala v. Greece**, § 25):

357. Հիմնվելով վերոնշյալ նկատառումների վրա, Դատարանը, որպես կանոն, չի կարող կասկածի ենթարկել ներպետական դատարանների որոշումները և եզրակացությունները այն դեպքում, երբ դրանք վերաբերում են՝

- գործի փաստերի հաստատմանը;
- ներպետական օրենքի մեկնաբանմանը և կիրառմանը;
- դատավարության ժամանակ ապացույցի ընդունելիությանը և գնահատմանը;
- քաղաքացիական վեճի արդյունքի էական արդարությանը;
- քրեական դատավարություններում մեղադրյալի մեղավորությանը կամ անմեղությունը:

358. Միակ դեպքը, երբ Դատարանը, որպես սույն կանոնից բացառություն, կարող է կասկածի տակ դնել որոշումները և եզրակացություններն այն է, որ դրանք լինեն ակնհայտորեն չպատճառաբանված և ուղղակիորեն ուղղված լինեն արդարադատության և առողջ դատողության դեմ և ինքնին առաջացնեն Կոնվենցիայի խախտում (*Sisojeva and Others v. Latvia* (ցուցակից հանված) [ՄՊ], § 89):

359. Չորրորդ ատյանի գանգատները կարող են ներկայացվել Կոնվենցիայի ցանկացած դրույթի ներքո, անկախ այն իրավական ոլորտից, որին դատավարությունների ներպետական մակարդակում դրանք պատկանում են: Չորրորդ ատյանի գաղափարը կիրառվում է օրինակ հետևյալ դեպքերում՝

- քաղաքացիական գործեր (*GarcíaRuizv.Spain* [ՄՊ], § 28, և *Pla and*

Puncernau v. Andorra, § 26)

- քրեական գործեր (*Perlalav. Greece**, §25, և *Khanv.theUnitedKingdom*, § 34);
- հարկային գործեր (*Dukmedjian v. France**, § 71)
- սոցիալական հարցերի հետ կապված գործեր (*Marionv.France**, § 22)
- վարչական գործեր (*Agathos and Others v. Greece**, § 26)
- ընտրական իրավունքներին վերաբերող գործեր (*Adamsons v. Latvia**, § 118)
- ոչ-քաղաքացիների մուտքի, բնակության և տեղափոխման հետ կապված գործեր (*Sisojeva and Others v. Latvia* (striking out) [ՄՊ])

360. Այնուամենայնիվ, չորրորդ ատյանի գանգատների մեծամասնությունը ներկայացված են Կոնվենցիայի հոդված 6§1-ի համաձայն, և վերաբերում են քաղաքացիական և քրեական դատավարություններում «արդար դատաքննության» իրավունքին: Պետք է հիշել այն, որ քանզի այն բավական հաճախ հանդիսանում է դիմումատուի կողմից թյուրիմածության աղբյուր, հոդված 6§1-ով պահանջված «արդարությունը» ոչ թե «նյութական», այլ ընթացակարգային արդարություն է (գաղափարը, որը կես-իրավական, կես-էթիկական է և կարող է միայն կիրառվել դատավորի կողմից) (*Star Cate Epilekta Gevmata and Others v. Greece** (որոշում)):

361. Համապատասխանաբար, չորրորդ ատյանի գանգատը Կոնվենցիայի հոդված 6§1-ի համաձայն կմերժվի դատարանի կողմից այն հիմքով, որ դիմումատուն ունի դատավարության մրցակցության իրավունք, որ դատավարության ցանկացած փուլում կարող է ներկայացնել գործի հետ առնչվող փաստարկներ և ապացույցներ, վիճարկել հակառակ կողմի բերված փաստարկներն ու ապացույցները, իր կողմից ներկայացված բոլոր փաստարկները, օբյեկտիվորեն դիտարկումից հետո, առնչվում են գործի լուծմանը և պատշաճ կերպով քննվել և լսվել են դատարանների կողմից և այն, որ վիճարկված որոշման համար ներկայացվել են իրավական և փաստացի պատճառներ և հետևաբար, դատավարությունները, ընդհանուր առմամբ, եղել են արդար (*García Ruiz v. Spain* [ՄՊ], և *Khan v. the United Kingdom*):

3. *Խախտման պարզ և ակնհայտ բացակայություն*

362. Դիմումատուի գանգատը նույնպես կհամարվի ակնհայտորեն անհիմն, նունիսկ եթե ընդունելիության բոլոր ձևական պահանջները բավարարվել են, գանգատը համապատասխանել է Կոնվենցիային, սակայն այն չի հանդիսանում չորրորդ ատյանի գանգատ և առկա չէ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտում: Նման դեպքերում Դատարանի մոտեցումն այն է, որ իրականացնի գանգատի ըստ էության քննություն և տա եզրակացություն առ այն, որ առկա չէ խախտում և հայտարարի, որ գանգատն անընդունելի է: Տարբերակվում են երեք տեսակի գանգատ, որոնց վրա տարածվում է նշված մոտեցումը:

(ա) Անարդարության կամ կողմնակալության բացակայություն

363. Սուբսիդիարության սկզբունքի համաձայն, Կոնվենցիայով երաշխավորված հիմնական իրավունքների պաշտպանությունն առաջին հերթին հանդիսանում է ներպետական մարմինների խնդիրը: Հետևաբար, որպես ընդհանուր կանոն, գործի փաստական հանգամանքների հաստատումը և ներպետական օրենքի մեկնաբանումը բացառապես ներպետական դատարանների և այլ մարմինների խնդիրն է, որոնց որոշումներն ու եզրակացություններն այս առումով պարտադիր են Դատարանի համար: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի ամբողջ համակարգին ներհատուկ իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքից ելնելով, Դատարանը կարող է և պետք է համոզվի, որ որոշման կայացման գործընթացը, որը հանգեցրել է դիմումատուի կողմից բողոքարկման ենթական գործողության, եղել է արդար և անկողմնակալ (քննարկվող գործընթացը կարող է լինել վարչական, իրավական կամ երկուսը միասին):

364. Հետևաբար, Դատարանը կարող է հայտարարել ակնհայտորեն անհիմն այն գանգատը, որն ըստ էության քննվել է իրավասու պետական դատարանների կողմից այնպիսի դատավարություններում, որոնք *a priori* բավարարել են հետևյալ պայմանները (ի հակառակը՝ ապացույցի բացակայության դեպքում):

- դատավարությունները վարվել են ներպետական օրենսդրությամբ նման իրավասություն ունեցող մարմինների առջև,
- դատավարությունները վարվել են ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային պահանջների համաձայն,
- շահագրգիռ կողմը հնարավորություն է ունեցել բերել փաստարկներ և ապացույցներ, որոնք պատշաճ կերպով քննվել են իրավասու մարմնի կողմից,
- իրավասու մարմինները քննել և հաշվի են առել գործի բոլոր փաստական և իրավական տարրերը, որոնք օբյեկտիվության տեսակետից, անհրաժեշտ են գործի արդար լուծման համար,
- դատավարությունները հանգեցրել են պատշաճ հիմնավորված և պատճառաբանված որոշման:

(բ) Միջոցի և նպատակի միջև անհամաչափության բացակայությունը

365. Այն դեպքում, երբ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակումների, որոնք ակնհայտ են (ուղղակիորեն նախատեսված են Կոնվենցիայում) կամ ենթադրելի (սահմանված Դատարանի նախադեպով), ապա Դատարանից հաճախ պահանջվում է գնահատել, թե արդյոք վիճարկվող միջամտությունը համաչափ է, թե ոչ:

366. Համապատասխան սահմանափակումները հստակորեն ձևավորող դրույթների խմբի մեջ կարող է սահմանվել մեկ այլ չորս հոդվածից բաղկացած ենթախումբ՝ հոդված 8՝ անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, հոդված 9՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, հոդված 10՝

ազատորեն արտահայտվելու իրավունքով և հոդված 11՝ խաղաղ հավաքների և միավորման ազատության իրավունքը: Այս բոլոր հոդվածներն ունեն նույն կառուցվածքը. առաջին պարբերությունը սահմանում է քննարկվող հիմնական իրավունքը, մինչդեռ երկրորդ պարբերությունը սահմանում է այն հանգամանքները, որոնց առկայությամբ Պետությունը կարող է սահմանափակել այդ իրավունքի իրականացումը: Երկրորդ պարբերության բառացի ձևակերպումն ամբողջովին նույնատիպ չէ յուրաքանչյուր գործի համար, բայց կառուցվածքը նույնն է: Օրինակ՝ անձնական և ընտանեկան կյանքի հարգելու իրավունքի վերաբերյալ, հոդված 8 § 2 սահմանում է՝

«Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածը (ազատ տեղաշարժվելու իրավունք) նույնպես պատկանում է այս դասակարգին, քանի որ նրա երրորդ պարբերությունը հետևում է նույն մոդելին:

367. Այն դեպքում, երբ Դատարանից պահանջվում է քննության առնել պետական մարմինների կողմից իրականացրած վերոհիշյալ իրավունքներից մեկին միջամտության հարցը, այն միշտ վերլուծում է խնդիրը երեք փուլերով: Եթե իրականում տեղի է ունեցել «միջամտություն» Պետության կողմից (դա մի առանձին խնդիր է, որին անհրաժեշտ է անդրադառնալ առաջին փնտրում է պատասխան հետևյալ երեք հարցերին՝

- արդյո՞ք միջամտությունն իրականացվել է օրենքին համապատասխան, որը եղել է բավական մատչելի և կանխատեսելի,
- եթե այո, արդյո՞ք այն հետապնդել է սպառիչ կերպով թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկը (ցանկը կարող է թեթևակի տարբերվել՝ կախված է հոդվածից),
- եթե դա այդպես է, արդյո՞ք միջամտությունը «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում» նպատակին հասնելու համար: Այլ կերպ ասած, առկա է արդյոք համամասնություն նպատակի և քննարկվող սահմանափակումների միջև:

368. Միայն այն դեպքում, եթե նշված երեք հարցերի պատասխանը դրական է, ապա միջամտությունը կհամարվի Կոնվենցիային համապատասխան: Հակառակ դեպքում՝ կարձանագրվի խախտում: Քննելով երրորդ հարցը, Դատարանը պետք է հաշվի առնի Պետության հայեցողության շրջանակը, որը էականորեն կտարբերվի՝ ելնելով գործի հանգամանքներից, պաշտպանվող իրավունքից և միջամտության բնույթից (*Stoll v. Switzerland* [ՄՊ], § 105; *Demir and Baykara v. Turkey* [ՄՊ], § 119; *S. and Marper v. the United Kingdom* [ՄՊ], § 102; և *Mentzen v. Latvia* (որոշում)):

369. Նույն սկզբունքը կիրառվում է ոչ միայն վերը նշված հոդվածների նկատմամբ, այլ նաև Կոնվենցիայի այլ դրույթների մեծամասնության և քննարկվող հոդվածում չնշված ակնհայտ սահմանափակումների նկատմամբ: Օրինակ՝ Կոնվենցիայի հոդված 6§1-ում նշվում է, որ արդար դատաքննության իրավունքը, բացարձակ չէ և ենթակա է սահմանափակումների, որոնք թույլատրված են, քանի որ դատարանի մատչելիության իրավունքն իր բնույթով կարգավորվում է Պետության կողմից: Այս տեսանկյունից, Պայմանավորվող Կողմերն ունեն հայեցողության որոշակի շրջանակ, այնուամենայնիվ Կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է Դատարանը: Դատարանը պետք է բավարարված համարի այն, որ կիրառված սահմանափակումները չեն սահմանափակում կամ նվազեցնում անձի դատարանի մատչելիության իրավունքն այն աստիճան, որ խախտվի իրավունքի ողջ էությունը: Ավելին, արդար դատաքննության իրավունքի սահմանափակումը չի համապատասխանում հոդված 6§1-ին, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ և առկա չէ ողջամիտ համամասնություն՝ հետապնդվող նպատակի և ձեռնարկվող միջոցների միջև (*Cudak v. Lithuania* [ՄՊ], § 55):

370. Եթե գանգատի նախնական քննությունից հետո Դատարանը գտնի, որ վերը նշված պայմանները բավարարված են, և, հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները, առկա չէ պարզ համամասնության պակաս Պետության կողմից հետապնդված միջամտության և ձեռնարկված միջոցների միջև, ակնհայտորեն անհիմն հիմքով Դատարանը գանգատը կհայտարարի անընդունելի: Այս դեպքում, անընդունելիության մասին որոշման պատճառները կլինեն նույնատիպ կամ միանման այն պատճառների հետ, որոնք Դատարանը կընդուներ ըստ էության վճիռ կայացնելու դեպքում՝ եզրակացնելով, որ խախտում տեղի չի ունեցել (*Mentzen v. Latvia* (որոշում)):

(գ) Այլ համեմատական ուղղակի և էական հարցեր

371. Ի լրումն վերը նկարագրված իրավիճակների, Դատարանը կհայտարարի գանգատն ակնհայտորեն անհիմն, եթե գտնի, որ գործի էությանը վերաբերող պատճառներից ելնելով, տեղի չի ունեցել Կոնվենցիայի դրույթի խախտում: Մասնավորապես, առկա են հանգամանքների երկու խումբ՝

- երբ առկա է Դատարանի նույնատիպ կամ միանման նախադեպեր, որոնց հիման վրա կարելի է եզրակացնել, որ ներկայիս գործում տեղի չի ունենցել Կոնվենցիայի խախտում (*Galev and Others v. Bulgaria* (որոշում));
- երբ, չնայած չկան նախորդ որոշումներ, որոնք ուղղակիորեն և առանձնահատուկ կերպով կապ ունեն խնդրի հետ, Դատարանը, հիմնվելով նախադեպի վրա, կարող է եզրակացնել, որ ներկայիս գործում տեղի չի ունեցել Կոնվենցիայի խախտում (*Hartung v. France** (որոշում)):

372. Հանգամանքների յուրաքանչյուր խմբում, Դատարանը կարող է մանրամասնորեն ուսումնասիրել գործի փաստական հանգամանքները և առնչվող այլ փաստեր (*Collins and Akaziebie v. Sweden* (որոշում)):

4. Անհիմն գանգախնդիր. ապացույցների պակաս

373. Դատարանի առջև իրականացվող դատավարություններն իրենց բնույթով մրցակցային են: Հետևաբար, կողմերը՝ դիմումատուն և պատասխանող կառավարությունը, պետք է հիմնավորեն իրենց կողմից բերված փաստերն (Դատարան ներկայացնելով անհրաժեշտ փաստացի ապացույցները) ու իրավական փաստարկները (բացատրելով, թե ինչու, իրենց կարծիքով, առկա է կամ առկա չէ Կոնվենցիայի խախտում) :

374. Դատարանի Կանոնակարգի 47-րդ Կանոնի համապատասխան մասերը, որոնք կարգավորում են անհատական գանգատի բովանդակությունը, հետևյալն են սահմանում՝

«Յուրաքանչյուր գանգատ Կոնվենցիայի հոդված 34-ի համաձայն պետք է ներկայացվի Քարտուղարության կողմից տրված դիմումի ձևով, եթե միայն Բաժնի Նախագահը հակառակ որոշում չկայացնի: Այն սահմանում է՝

1.

(դ) փաստերի հակիրճ շարադրանք;

(ե) Կոնվենցիայի ենթադրվող խախտումների և առնչվող փաստարկների հակիրճ շարադրանք;
...;

(է) դիմումի առարկան;

և կից

(ը) դիմումի առարկայի հետ առնչվող փաստաթղթերի պատճենները, հատկապես որոշումները, իրավական կամ էլ ոչ:

...

4. Այս Կանոնի պարբերություն 1-ում սահմանված պահանջների կատարման ձախողումը կարող է հանգեցնել Դատարանի կողմից դիմումի չքննելու որոշմանը»:

375. Ի լրումն, Դատարանի Կանոնակարգի 44(գ) Կանոնի 1-ի մասի համաձայն՝

«Երբ կողմին չի հաջողվում Դատարանի կողմից պահանջված ապացույցը ներկայացնել կամ տեղեկատվություն տրամադրել կամ էլ առնչվող տեղեկատվությունը իր կամքով հրապարակել, կամ էլ նրան չի հաջողվում արդյունավետ կերպով մասնակցել դատավարություններում, Դատարանը կարող է այնպիսի եզրակացություններ անել, որոնք հարման գտնի»:

376. Երբ վերը նշված պայմանները կատարված չեն, Դատարանը կհայտարարի գանգատն անընդունելի՝ ակնհայտորեն անհիմն լինելու հիմքով: Մասնավորապես, առկա են հանգամանքների երկու խումբ՝

- երբ դիմումատուն ուղղակի վկայակոչել է Կոնվենցիայի մեկ կամ ավել դրույթ, առանց բացատրություն տալու, թե ինչպես են տեղի ունեցել խախտումները, եթե դրանք ակնհայտ չեն գործի փաստերից (*Trofimchuk v. Ukraine** (որոշում), և *Baillard v. France** (որոշում));

- երբ դիմումատուն չի հիշատակել կամ հրաժարվել է ներկայացնել փաստաթղթային ապացույցներ ի հավաստումն իր հայտարարությունների (մասնավորապես՝ դատարանների և այլ ներպետական մարմինների որոշումները), եթե առկա են իր հսկողությունից վեր բացառիկ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են իրեն դա անելուց, օրինակ՝ երբ բանտի իշխանությունը մերժում է բանտարկյալի գործերից փաստաթղթեր փոխանցել Դատարանին:

5. Շփոթեցնող կամ անհիմաստ գանգադներ

377. Դատարանը որպես ակնհայտորեն անհիմն կմերժի այն գանգատները, որոնք այնքան շփոթեցնող են, որ օբյեկտիվորեն անհնար է հասկանալ դիմումատուի կողմից բողոքարկած փաստերի և բողոքների իմաստը, որոնք նա ցանկանում է ներկայացնել Դատարան: Նույնը կիրառվում է անհիմաստ գանգատների նկատմամբ, այսինքն այնպիսի գանգատներ, որոնք վերաբերում են օբյեկտիվորեն անհնար, ակնհայտորեն հորինված կամ իմաստազուրկ փաստերին: Այս դեպքում այն, որ առկա չէ Կոնվենցիայի խախտում, ակհայտ կլինի ցանկացած, նույնիսկ իրավաբանական կրթություն չունեցող կարդացողին:

Բ. Ոչ էական կորուստ

Հոդված 35§3 (ա) Ընդունելիության չափանիշ
 «3. Դատարանը անընդունելի կհամարի ցանկացած անհատական գանգադ Հոդված 34 համապատասխան, եթե այն համարի որ՝
 ...
 (բ) դիմողը չի կրել զգալի կորուստ, Կոնվենցիայի և նրան կից Արձանագրության մեջ սահմանված մարդու իրավունքները հարգելու համար պահանջվում է դիմումը քննումը ըստ էության և սահմանում է, որ ոչ մի գործ չի կարող մերժվել՝ ներպետական դատարանի ոչ պարզաձև կերպով քննելու հիմունքներից ելնելով:

1. Նոր չափանիշի նախադրյալը

